

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ
ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Իսկական քրիստոնիային
խաղաղություն - ուրախություն պարգ-ող

ԴԱՆԿԱՆ ՀԻՍՏԵՐ

THE CHRISTADELPHIANS,
49 THE WOODFIELDS
SOUTH CROYDON
SURREY CR2 0HJ
ENGLAND

Ներածություն

Յուրաքանչյուր մարդ, ով սկսել է հավատալ Աստծո գոյությանը, – ընդունել է, որ Ավետարանը նրա հայտնությունն է մարդկանց, Սուրբ Գրքի հիմքերն ուսումնասիրելու կարիքն ունի: Սակայն, շատ մարդիկ, ովքեր իրենց անվանում են «քրիստոնյաներ», դրան քիչ ուշադրություն են դարձնում – սահմանափակվում են միայն Նոր Կտակարանի մի քանի հատվածների ընթերցմամբ: Սովորաբար Աստվածաշունչը պահվում է նրանց տներում ինչ որ մոռացված անկյունում – համարյա երբեք չի բացվում, – իրենք էլ միայն աղոտ են հիշում դրանցից մի քանի առակ: Չարմանալի է, որ Աստծո Խոսքի նկատմամբ նման պասսիվ վերաբերմունքի դեպքում, այդպիսի մարդկանց կյանքում – գիտակցության մեջ խառնաշփոթ – անվստահություն է տիրում:

Մյուս կողմից, կան նա- այնպիսի հավատացյալներ, ովքեր քրիստոնեության մասին ունեն մակերեսային գիտելիքներ, բայց իրենց ազնիվ ձգտման մեջ փորձում են ըմբռնել Աստվածաշունչը, իրենց ճանապարհի վրա նրանք հաճախ հանդիպում են այնպիսի մեկնաբանների, ովքեր շարադրում են իրենց վարդապետությունը – փիլիսոփայական հայացքները, որոնք չեն արտացոլում Սուրբ Գրքի ճշմարիտ հիմքերը:

Սույն ձեռնարկի նպատակն է գործնականորեն – որոշակի հաջորդականությամբ կատարել Սուրբ Գրքի վերլուծությունը: Ձեռնարկը նախասահմանված է իմացության նպատակով որպես սովորական գիրք ընթերցելու համար: Այն Կարող է նա- օգտագործվել հեռակա կուրսերի համար որպես ուսումնական ձեռնարկ: Յուրաքանչյուր գլխի վերջում բերված հարցերի պատասխանները, հարկ է ուղարկել ստոր- նշված հասցեով: Ձեր պատասխանները հետո կփոխանցվեն ուսումնական խմբերի ղեկավարներից մեկին, որը դրանից հետո Ձեզ հետ կվարի անհատական նամակագրություն ըստ բաժինների – ձեռնարկի գլուխների ընկալման չափի: Հնարավոր է, որ որոշ ընթերցողներ կխուսափեն հարցերին պատասխանելուց – կգերադասեն իրենց համար անհասկանալի պահերի ճշտման նպատակով իրենք հարցնել, կամ արտահայտեն իրենց անհամաձայնությունները այն շարադրանքի հետ, որը տրվում է այստեղ: Եվ այդ դեպքում, եթե նման թղթակցությունները ուղղարկվեն նշված հասցեով, դրանց էլ կտրվեն անհատական պատասխաններ: Հարկ է,

սակայն, նկատի ունենալ, որ նամակագրությունը պետք է տարվի անգլերեն լեզվով:

Յեղիևակը վստահ է, որ «Աստվածաշնչի հիմունքները» յուրաքանչյուր մարդու համար միանգամայն ընկալելի է: Սակայն, գրքում միշտ կարող են լինել որոշ տեղեր – թեմաներ, որոնք արտաքինապես կարող են տարբերվել Սուրբ Գրքի ընդունված մեկնաբանություններից: Դրանցից որոշ մասը, Ավետարանի մասին այլ տեսակետների շարքում, որոնք կարող են հետաքրքրել ընթերցողներին, քննարկվում են յուրաքանչյուր գլխի վերջում տրված «Յերձված» բաժնում: Ենթադրում ենք, որ «Աստվածաշնչի հիմունքները» կընկալվեն առանց «Յերձվածների» ընթերցման, բայց, հնարավոր է, որ որոշ ուսանողներ կկարդան դրանց մեծ մասը: Տվյալ ձեռնարկում Աստվածաշնչի սաղմոսների – դրանց հատվածների մեջբերումները Մոսկովյան Պատրիարխատի հրատարակած (1968թ.) Սուրբ Գրքի ռուսական թարգմանությունն է:

Անկեղծ շնորհակալություն եմ արտահայտում շատ մարդկանց, ովքեր աջակցել են ինձ այս գրքի ստեղծման համար: Հատկապես ես երախտապարտ եմ Զլայվ Ռեվերսին, ներկայացված լուսանկարների հիասքանչ շարքի համար, – նա– բոլոր նրանց, ովքեր արտահայտել են իրենց մեկնությունները գրքի ս–ագիր նյութերի վերաբերյալ: Սակայն, իմ հատուկ երախտապարտությունն եմ արտահայտում այն հարյուրավոր մարդկանց, ովքեր ապրում են Աֆրիկայում, Վեստ – Ինդիայում, Ֆիլիպիններում – Ար–եյան Եվրոպայում, ովքեր իրենց կրքոտ հարցերով – ճշմարիտ իմացության ծարավով մշտապես օգնել են մտովի կենտրոնանալ «Աստվածաշնչի հիմունքները» գրելիս: Նրանց գեղեցկությունն ու գորությունը միայն մեծանում են, երբ նայում ես նրանց տարբեր հայացքների տեսանկյունից: Լցված երթուղիներում, բացօդյա բեռնատար մատույցներում, բեռնատար մեքենաներում, կոնֆերենց–դահլիճներում, հյուրանոցների խեղդող պատշգամբներում – անտառային բնակավայրերում աստղերի լույսի ներքո այս թեմաները քննարկվել են, վիճաբանվել են – Աստվածաշունչ ուսումնասիրող ուսանողների – հասարակական ամենատարբեր դիրք գրավողների մոտ հիացմունք են առաջացրել: Իմ քրիստողելֆիական եղբայրները, ում հետ ես բավականություն եմ ստացել աշխատելու գրքի վրա,

ինձ համար ծառայում էին ուժի – ոգեշնչման անսպառ աղբյուր: Շատ հողվածների բովանդակությունը, որոնք բերվում են այստեղ «Յերձվածներում», ենթարկվում էին մանրամասն քննարկման մեր կողմից հյուրանոցային համարներում Աստվածաշունչն ուսումնասիրող հեռակա կուրսերի ուսանողական խմբերի հետ հոգևեցուցիչ պարապմունքներից հետո:

Հաղորդակցումն ու ընկերությունը, որոնք մեզ միավորում են ըստ աստվածաշնչյան ճշմարտության հիմնական վարդապետությունով, իսկապես, մեր կյանքի անգերազանցելի գործոնն են: Այսպես, այս ամենով «իմ ընկերակիցներին ըստ Աստծո Թագավորության» ես անկեղծ երախտագիտություն եմ արտահայտում – հուսով եմ, որ այս գիրքը նրանց կօգնի ճշմարիտ Ավետարանը «ամեն ժողովրդի համար հրատարակելու»:

Ավետարանի իսկական ճշմարտության իմացությունը, որ շարադրված են Աստվածաշնչի էջերում, բարենպաստ ազդեցություն կգործեն մեր կյանքի բոլոր կողմերի վրա: Աստծո Խոսքին հաղորդակցումը հանգեցնում է նրան, որ ողջ աշխարհում տղամարդիկ – կանայք կփառաբանեն Աստծուն այժմ – բոլոր ժամանակներում, ինչպես – Նա ուզում էր այդ:

Յուրաքանչյուր, ով կգտնի ճշմարտությունը, իր համար կգտնի «թանկարժեք մարգարիտ» – իր համար կընկալի Երեմիայի զգացմունքը. «Քո խոսքերը գտնվեցան, – ես կերա նրանց, – քո խոսքն ինձ համար սրտիս ցնծություն – ուրախություն եղավ»:

(Երեմ. 15:16): Դրան հասնելու համար դիմեք Աստծուն խոսքի ընկալման օգնության մասին աղոթքով, նախքան դուք անցնեք ստոր– բերված գլուխների ուսումնասիրմանը: «Եվ հիմա՝ ձեզ Աստծուն եմ հանձնում, եղբայրք, – նրա շնորհքի խոսքին, որ նա կարող է շինել՝ – ամեն սրբվածների հետ ձեզ ժառանգություն տալ» (Գործք. 20:32):

Դ.Խ

Համառոտագրություն

Յին Կտակարանի գրքերը

Ծն-Ծննդոց
Ել-Ելից
Դ-տ-Դ-տացոց
Թվոց-Թվոց

Նոր Կտակարանի Գրքերը

Մթ.-Ավետարան ըստ Մաթ-ոսի
Մկ.-Ավետարան ըստ Մարկոսի
Դուկ.-Ավետարան ըստ Դուկասի
Հովհ.-Ավետարան ըստ

Օրինաց-Երկրորդ Օրինաց	Հոսիանեսի
Հետուի-Հետուի Գիրք	Գործք-Գործք Առաքելոց
Դատ-Դատավորաց	Հռոմ-թուղթ.առ Հռոմեացիս
Ա.Թագ-Առաջին Թագավորաց	1.Կորնթ-թուղթ.առ Կորնթացիս I
Գիրք	2.Կորնթ-թուղթ առ Կորնթացիս II
Բ. Թագ.-Երկրորդ	
Թագավորաց գիրք	Եփ.-թուղթ առ Եփեսացիս
Ա.Մնաց-Առաջին Մնացորդաց	
գիրք	Ֆիլ-թուղթ առ Ֆիլիպպեցիս
Բ.Մնաց.- Երկրորդ	
Մնացորդաց գիրք	Կող-թուղթ առ Կողոսացիս
Նեեմ-Նեեմի գիրք	
Սաղ.-Սաղմոսաց	1Թես-թուղթ-առ Թեսաղոնիկեցիս
Առակ-Գիրք Առակաց	I
Ժող-Ժողովող	2Թես.-թուղթ առ
Եսայ-Եսայիայի	ԹեսաղոնիկեցիսII
Երեմ-Երեմիայի	1Տիմ.-թուղթ առ Տիմոթեոս I
Եզեկ-Եզեկիելի	2. 1Տիմ.-թուղթ առ Տիմոթեոս II
Դան-Դանիելի	Տիտ-թուղթ առ Տիտոս
Ովս-Ովսեյի	Երբ-թուղթ առ Եբրայեցիս
Ամ.-Ամոնի	1Պետ-թուղթ Պետրոս I
Միք-Միքիայի	2.Պետ.-թուղթ Պետրոս II
Նաում-Նաումի	1.Հովի-թուղթ Հովհաննես I
Ամբ.Ամբակումի	2.Հովի-թուղթ ՀովհաննեսII
Սոփ.-Սոփոնիայի	3.Հովի-թուղթ Հովհաննես III
Ագ.-Անգեյի	Հայտն- Հայտնություն
Չաք.-Չաքարիայի	
Մաղ.-Մազաքիայի	

Ներածություն

Յուրաքանչյուր գլխի վերջում գետեղված հարցերը երկու տեսակի են. խմբից ընտրությունը (Դուք պետք է ընտրեք թվարկած պատասխաններից մեկը որպես հարցի ճիշտ պատասխան) – սովորական հարցերը, որոնք պահանջում են մի քանի նախադասություններով պատասխաններ: Գրեք ձեր պատասխանները առանձին թղթի վրա, ընդ որում, չմոռանաք հստակ նշել ձեր ազգանունը, անունը, հայրանունը – հասցեն: Դուք կարող եք ձեր պատասխանները ուղարկել հետ-յալ

հասցեով.

Աստվածաշնչի հիմունքները

Ներածություն

Մաս 1:

***„Աստծո Թագավորության մասին.....
ավետող,,***

Գլուխ 1: Աստված

..... **1**

- 1.1 Աստծո գոյությունը
- 1.2 Աստծո անձը
- 1.3 Աստծո անունն ու բնավորությունը
- 1.4 Հրեշտակներ
Հերձում 1: „ Աստված հոգի է,,
Հերձում 2: Աստծո անվան օգտագործումը
Հերձում 3: Աստծո դրս-որումը

Գլուխ 2: Աստծո հոգին

29

- 2.1 Սահմանում
- 2.2 Աստվածադեմոստրացիան
- 2.3 Սուրբ Հոգու պարզ-ները
- 2.4 Շնորհների վերացումը
- 2.5 Աստվածաշունչը միակ հեղինակությունն է
Հերձում 4: Սուրբ Հոգի՝ ա՞նձ է
Հերձում 5: Անձնավորման սկզբունքը
Հերձում 6: Կալվինիզմ
Հերձում 7: „ԵՎ Սուրբ Հոգու պարզ- կընդունի,,
Հերձում 8 „Նրանց էլ, որ հավատացին, այս նշանները կհետ-են,,

Գլուխ 3: Աստծո խոստումները

89

- 3.1 Ներածություն
- 3.2 Խրատները Էդեմում
- 3.3 Նոյին արված խոստումները
- 3.4 Աբրահամին տված խոստումները
- 3.5 Խոստումները Դավիթին
- Չերձում 9:* Երկրի – երկնքի խորտակումը
- Չերձում 10:* „Բրիտանական Իսրայելիզմի հավակնությունը,,

Գլուխ 4: Աստված – մահ 126

- 4.1 Մարդու բնույթը
- 4.2 Հոգի
- 4.3 Մարդու ոգին
- 4.4 Մահն անգիտակից վիճակ է
- 4.5 Հարություն
- 4.6 Դատաստան
- 4.7 Հատուցման վայրը. երկինք թ՞ե՞ երկիր
- 4.8 Պատասխանատվությունը Աստծո առջ–
- 4.9 Դժողք
- Չերձում 11:* Զավարան
- Չերձում 12:* Հոգին – վերամարմնավորումը
- Չերձում 13:* Մեր հարության բնույթը
- Չերձում 14:* Համբարձում

**Գլուխ 5: Աստծո Թագավորություն
.....167**

- 5.1 Թագավորության սահմանումը
- 5.2 Ներկայումս Թագավորություն հաստատված չէ
- 5.3 Աստծո Թագավորությունն անցյալում
- 5.4 Աստծո Թագավորությունն ապագայում
- 5.5 Զրիստոսի հազարամյա Թագավորությունը
- Չերձում 15:* Թագավորության տառացիությունը
- Չերձում 16:* Հակիրճ տեղեկություններ Իսրայելի պատմության մասին

**Գլուխ 6: Աստված – մեղք
200**

- 6.1 Աստված – մեղք
- 6.2 Հրեշ – սատանա

6.3 Չար ոգիներ (դ-եր)

Չերձում 17: Կախարդանք (հեքիմություն)

Չերձում 18: Ի՞նչ տեղի ունեցավ Էդեմում

Չերձում 19: Լյուցիֆեր

Չերձում 20: Հիսուսի գայթակղությունը

Չերձում 21: Պատերազմ Երկնքում

Մաս 2:
„Հիսուս Քրիստոսի անվան
մասին էր.... ավետարանում,,
(Գործք Առաքելոց 8:12)

Գլուխ 7: Հիսուսի ծագումը

254

- 7.1 Հին Կտակարանի մարգարեությունը Հիսուսի մասին
- 7.2 Ծնունդը Անարատ Կույսից
- 7.3 Քրիստոսի տեղն Աստծո ծրագրում
- 7.4 „Սկզբից եղել է Բանը,,

Գլուխ 8: Հիսուսի բնությունը

267

- 8.1 Ներածություն
- 8.2 Աստծո – Հիսուսի տարբերությունները
- 8.3 Հիսուսի բնությունը
- 8.4 Հիսուսի մարդեղությունը
- 8.5 Աստծո ազգակցությունը Հիսուսի հետ

Գլուխ 9: Հիսուսի գործերը 279

- 9.1 Հիսուսի հաղթանակը
- 9.2 Հիսուսի արյունը
- 9.3 Չոհաբերություն մեր փոխարեն – մեր համար
- 9.4 Հիսուսը որպես մեր ներկայացուցիչ
- 9.5 Հիսուսը – Մովսեսի օրենքը
- 9.6 Շաբաթ
- Չերծում 28: Խաչելիություն
- Չերծում 29: Ի՞րոք Հիսուսը ծնվել է դեկտեմբերի 25 -ին

Գլուխ 10: Մկրտություն Զիսուսով

302

10.1 Մկրտության կենսական անհրաժեշտությունը

10.2 Մկրտության ծեսը

10.3 Մկրտության նշանակությունը

10.4 Մկրտություն – փրկություն

Յերձույթ 30: Կրկնակի մկրտություն

Յերձույթ 31: Գիտելիքների անհրաժեշտ մակարդակը մինչ-

մկրտության ընդունումը

Յերձույթ 32: Չարագործը խաչի վրա

Յերձույթ 33: Մկրտման օրինակելի ծիսակատարությունը

Գլուխ 11: Կյանքը Քրիստոսում

339

11.1 Ներածություն

11.2 Սրբություն

11.2.1 Չորության ուժի կիրառումը

11.2.2 Քաղաքականություն

11.2.3 Աշխարհիկ ուրախություններ

11.3 Ամենօրյա քրիստոնեական կյանք

11.3.1 Աստվածաշնչի ուսումնասիրությունը

11.3.2 Աղոթք

11.3.3 Քարոզչություն

11.3.4 Էկկլեսիալ կյանք

11.3.5 Հացի կտրելը

11.4 Ամուսնություն

11.5 Հաղորդակցություն

Հավելված 1: Աստվածաշնչ հիմնական դրույթների հակիրճ շարադրումը

Հավելված 2: Մեր վերաբերմունքը աստվածաշնչի ճշմարտության ուսումնասիրության նկատմամբ

Հավելված 3: Քրիստոսի վերադարձի մոտեցումը

Հավելված 4: Աստծո արդարացիությունը

Մաս 1

«Աստծու Թագավորության
մասին...ավետող»

Գլուխ 1

ԱՍՏՎԱԾ

1.1 Աստծո գոյությունը

«Նա, ով մոտենում է Աստծուն, պետք է հավատա, որ Աստված կա եւ վարձահատույց է լինում նրանց, ովքեր փնտրում են իրեն» (Եբր. ԺԱ:6):

Սույն ուսումնական ձեռնարկի նպատակն է օգնություն ցույց տալ այն մարդկանց, ովքեր ցանկանում են մոտենալ Աստծուն եւ արդեն հավատում են, «որ նա կա»: Ուստի, մենք այստեղ չենք անդրադառնա այն հարցերի քննարկմանը, որտեղ ամրապնդվում է հավատը նրա գոյության նկատմամբ: Ուսումնասիրելով մեր մարմնի բարդ կառուցվածքը (Սաղ. ՃԼԹ:13), հիանալով ծաղիկի զարմանահրաշ նկարով, պարզ գիշերը նայելով երկնքի անսահմանությանը, մտածելով դրա մասին, ինչպես նա- կյանքի անթիվ բազմաթիվ այլ դրս-որումների մասին, ակամա դեն ես նետում արեւի մասին ցանկացած միտք: Անհամեմատ դժվար է հավատալ Աստծո բացակայությանը, քան խորը հավատով ըմբռնել նրա գոյությունը, քանզի առանց Աստծո չէր լինի կարգ ու կանոն, նպատակ, իմաստ – այն ամենի լիակատար բացատրությունը, ինչ կատարվում է տիեզերքում: Այդ բոլորը, անկասկած, իր արտացոլումն է գտնում այն մարդու կյանքում, ով իրեն արեւիստ է անվանում: Դրա հետ կապված, հասկանալի է դառնում, թե ինչու է մարդկանց մեծամասնությունը թույլատրում Աստծո գոյության հնարավորությունը, թեեւ ապրում է հասարակության մեջ, որտեղ գերակշռում է մատերիալիզմը:

Սակայն, մեծ տարբերություն կա որ-է բարձրագույն ուժի գոյության մասին աղոտ պատկերացման եւ ամուր հավատի միջեւ, որ նա վարձահատույց կլինի մարդկանց իրեն հավատարիմ ծառայելու համար:

Թ Եբր. ԺԱ:6-ում դրա մասին այսպես է ասված՝ «Բայց առանց հավատի անհնար է հաճելի լինել, քանի որ նա, ով մոտենում է Աստծուն, պետք է հավատա, որ Աստված կա

—

վարձահատույց է լինում իրեն փնտրողներին»:

Աստվածաշնչում շատ է խոսվում Իսրայելի Աստվածային ժողովրդի պատմության մասին: Ոչ մեկ անգամ ընդգծվում է, որ Աստծո գոյության նրանց ճանաչումը չէր համաչափվում Աստծո

հանդիսավոր խոստման մասին նրանց հավատի հետ: Նրանց մեծն առաջնորդ Մովսեսն ասում էր նրանց. «Այսօր գիտցիր ու սրտիդ մեջ դիր, թե վերը երկնքի մեջ ու վարը երկնքի վրա Տերը՝ ինքը միայն Աստված է, ուրիշը չկա: Ուստի Նրա կանոններն ու պատվիրանքները պահե...» (Օր. Դ:39,40):

Նման նախազգուշացումը վերաբերում է եւ մեզ. Աստծո գոյության փաստը դեռ-ս չի նշանակում, որ մենք ավտոմատորեն հասանելի ենք Նրա համար: Եթե մենք անկեղծորեն հավատում ենք, մեր Արարչի գոյությանը, մենք պետք է «Անոր կանոններն ու պատվիրանները պահպանենք»: Ուստի, ստոր- բերված գլուխներում բացատրություն է տրվում, թե ինչ են իրենցից ներկայացնում այդ կանոններն ու պատվիրանները, - ինչպես հետ-ել դրանց: Սուրբ Գրքերի մեջ խորանալուն համընթաց հարկավոր պատասխաններ գտնելու որոնումների մեջ կաճի - մեր հավատը Աստծո գոյության նկատմամբ՝ «Ապա ուրեմն հավատը լավածից է, - լավածը՝ Աստծո խոսքից» (Յոճմ Ժ:17): Դրա նման Եսայիայի ԽԳ:9-13 ցույց են տալիս ինչպես է պետք հասկանալ Աստվածային մարգարեությունները՝ «Ես պատմեցի ու փրկեցի ու գիտցուցի, երբ ձեր մեջ օտար աստված չկար ու Իմ վկաներս դո՛ւք եք, ասում է Տերը, որ Ես եմ Աստված, Սկիզբն ի վեր Ես նույնն եմ» (Եսայ. ԽԳ:12-13), այսինքն Աստծո անունը ներկայացվում է բավականին ճշգրիտ՝ «Ես եմ, որ Էն» (Ելից Գ:14): Պողոս Առաքյալը ժամանեց Բերիա քաղաքը, որն այժմ գտնվում է հյուսիսային Յուդաստանում: Ինչպես միշտ նա քարոզում էր Սուրբ Գիրքը («լավ նորություններ), բայց մարդիկ միայն Պողոսի խոսքերը չէ, որ ընկալում էին՝ «Սրանք ամենայն հոժարությամբ ընդունեցին խոսքը (Աստծո, ոչ թե Պողոսի), ամբողջ ժամանակ քննում էին գրվածները իմանալու, թե այդ բաները այդպե՞ս են: Նրանցից շատերը հավատացին» (Գործք ԺԷ:11-12): Նրանց հավատը պայմանավորված էր Աստվածաշնչի անկանխակալ, կանոնավոր («ամեն օր») - սխտեմատիկ («արդյոք դա ճիշտ այդպես է») վերլուծությամբ: Ճշմարիտ հավատը մոտենում էր նրանց ոչ որպես անսպասելի Աստվածային տեսիլք, այլ յուրատեսակ հոգ-որ վիրահատություն սրտի վրա, առանց Աստծո խոսքի հետ հարաբերակցելու: Արդ ինչպե՞ս կարող են մարդիկ, որոնք գնում են Բիլի Գրեհեմի ամբողջ կամ հիսնականներ աղանդի ժողովներին, ետ վերադառնալ որպես «հավատացյալ»: Նման հավատը, որը հիմնված չէ ճշմարիտ Աստվածաշնչի վրա, անկասկած, առաջացնում է դատարկություն, որն իրենց մեջ գտնում են

«Նորահավատները» իրենց վերջին փուլի քրիստոնեական կյանքում, – այդ պատճառով է, որ շատ մարդիկ հեռանում են ավետարանչական շարժումից:

Աստվածաշնչի հիմունքների ուսուցման սույն դասընթացի նպատակն է ստեղծել Սուրբ Գրքի ինքնուրույն, սիստեմատիկ ուսումնասիրման համար ուղեցույց, որպեսզի ընթերցողը կարողանա ներծծվել ճշմարիտ հավատով: Իսկական Ավետարանի խոսքերի – ճշմարիտ հավատի միջ- կապը հաճախ է ընդգծվում Աստվածաշնչի քարոզներում:

- «Նա- Կորնթացիներից շատերը նրան լսելով՝ հավատացին – մկրտվեցին (Գործք ԺԸ:8),
- Մարդիկ «Ավետարանի խոսքը լսեցին ու հավատացին» (Գործք ԺԵ:8),
- «Արդ՝ թե՛ ես – թե՛ նրանք այսպես քարոզեցինք, եւ դուք այսպես հավատացիք» (1 Կորնթ. ԺԵ:11),
- «Իսկ առակը այս է նշանակում, սերմը Աստծո խոսքն է (Ղուկ. Ը:11);
- Տերն ասաց. «Եթե մանանեխի սերմի հատիկի չափ հավատ ունենաք – այս թթենուն ասեք՝ արմատախի՛լ եղիր – տնկվի՛ր ծովի մեջ, նա իսկ կհնազանդվի ձեզ» (Ղուկ. ԺԵ:6),
- «Մոտ է խոսքը քեզ, քո բերանում – քո սրտում» (Հռոմ. Ժ:8),
- «Սնված հավատի խոսքերով – բարի վարդապետությամբ» (1 Տիմ Դ:6),
- Սրտում, որը բաց է Աստծո ու Նրա խոսքի հավատի համար (Գաղ. Բ:2, Եբր. Դ:2),
- Հովհաննես առաքյալը մեր Տեր Հիսուսի կյանքը նկարագրելիս ասում է՝ «Նա գիտե, որ ճշմարիտ է ասում, որպեսզի դուք էլ հավատաք» (Հովհ. ԺԹ:35),
- «Սրբացրու նրանց քո ճշմարտությամբ, որովհետեւ քո խոսքը ճշմարտությունն է» (Հովհ. ԺԵ:17):

1.2 Աստծո անձը

Աստված իրական, շոշափելի անձ է՝ արտաքին տեսքով նման մեր մարմնին: Եվ քրիստոնեության հիմնական դրույթն այն է, որ Հիսուս Քրիստոսն Աստծո Որդին է: Եթե Աստված ֆիզիկական անձ չլիներ, ապա հնարավոր չէր լինի նրա համար որդի ունենալը, որն իրենից ներկայացներ «նկարագիրը Նրա Էության» (Եբր. Ա:3): Այնուհետեւ դժվար է պատկերացնել մի անձ, որն

«Աստծո» հետ ունի կենդանի ազգակցություն, եթե այդ «Աստվածը» մեր գիտակցության մեջ պատկերանում է միայն որպես ոգու թանձրուկ, որը բնակվում է տիեզերքի դատարկության մեջ: Ցավ է առաջացնում այն փաստը, որ կրոնների մեծամասնությունն ունի ոչ իրական, անշոշափելի պատկերացում Աստծո մասին:

Մեր համեմատությամբ Աստված այնքան մեծ է, որ հասկանալի է դառնում բազմաթիվ մարդկանց ձգտումը՝ ունենալ այնպիսի հավատ, որը բացառի պայծառ խոստումների իրականացման հնարավորությունը, որ

վերջիվերջո մենք կտեսնենք Աստծուն: Սակայն, նման հավատ գոյություն ունի եւ այն բխում է Աստծուն ճանաչելուց եւ Նրա խոսքի նկատմամբ հավատից. «Երանի՛ նրանց, որ սրտով մաքուր են, որովհետեւ նրանք Աստծուն պիտի տեսնեն» (Մաթ. Ե:8): «Տեսեք ինչպիսի սեր շնորհեց մեզ Հայրը, որպեսզի կոչվենք Աստծո որդիներ... Սիրելիներ՛ր, այժմ Աստծո որդիներ ենք, եւ դեռ հայտնի էլ չէ, թե ինչ ենք լինելու: Գիտենք, որ երբ նա հայտնվի, լինելու ենք Նրա նման, որովհետեւ նրան տեսնելու ենք այնպես, ինչպես նա կա»: (Ա Յովհ. Գ:1,2):

«Եվ նրա ծառաները պաշտում էին նրան. նրանք տեսնում էին նրա երեսը, եւ նրա անունը գրված էր իրենց ճակատների վրա» (Հայտ. ԻԲ:3,4):

Ինչպիսի գարմանալի հույս, եթե միայն մենք անկեղծորեն հավատանք դրան, հսկայական ազդեցություն կունենա մեր կյանքի վրա.

«Բոլորի հետ ընթացեք խաղաղության ետեւից եւ սրբության, առանց որի ոչ ոք Տիրոջը չպիտի տեսնի» (Եբր. ԺԲ:14):

Մենք «Նրան տեսնելու ենք այնպես, ինչպես նա կա: Եվ ամեն ոք, որ այս հույսն ունի իր մեջ, մաքրում է ինքն իրեն, ինչպես որ նա է մաքուր» (Ա Յովհ. Գ:2,3):

Երկնային հոր մասին մեր պատկերացումն այս կյանքում մնում է բավականին անլիարժեք, բայց անթափանց խավարի միջով մենք կարող ենք սպասել, որ ի վերջո կդիմավորենք Նրան: Նրան տեսնելով ֆիզիկական պլանում՝ անկասկած կհամեմատենք Նրա մասին մտավոր պատկերացման հետ: Արդ, մարդկային տանջանքների անվերջանալի խորքերից Հորը կարող էր

ուրախանալ Աստծո հետ լիակատար անձնական ազգակցության համար, որի մասին մինչև վերջ նա իմանում է վերջին օրը. «Նա վերջը պիտի կանգնի հողի վրա (այսինքն՝ մահից հետո): Եվ իմ մորթը այսպես թափվելուց հետո, այն ժամանակ իմ մարմնիցը տեսնելու եմ Աստծուն: Որին որ ես ինքս եմ տեսնելու, եւ իմ աչքերն են մտիկ տալու Նրան եւ ոչ թե ուրիշը» (Չոբ ԺԹ 25-27):

Եվ Պողոս առաքյալը բացականչեց ցավի ու խռովքի ուրիշ կյանքից. «Այժմ տեսնում եմ ինչպես պատկերը հայելու մեջ. իսկ այն ժամանակ՝ դեմ առ դեմ» (Ա Կորն. ԺԳ:12):

Յին Կտակարանի վկայությունը

Նոր Կտակարանի հանդիսավոր խոստումները, որոնք իրենց հիմքում ունեն Յին Կտակարանի վկայությունների նշանակալից փաստեր, Աստծո մասին ասում են՝ որպես մարմնավոր անձի: Չափազանցություն չի լինի ասել, թե որքան կարելոր է իմանալ Աստծո բնույթը, որպեսզի տիրապետես կրոնի ճշմարիտ ըմբռնմանը, որը հիմնվում է Աստվածաշնչի ուսմունքի վրա: Յին Կտակարանում մշտապես խոսվում է Աստծո մասին, որպես անձի: Անձնական հարաբերությունները Աստծո հետ, որոնց մասին խոսվում է ինչպես Յին, այնպես էլ Նոր Կտակարաններում, բացառիկ երեւույթներ են ճշմարիտ քրիստոնյայի հույսի համար:

Ստորեւ բերված օրինակները վառ վկայություններ են, որտեղ հաստատվում է Աստծո գոյությունը՝ որպես մարմնավոր անձի.

- «Եվ Աստված ասաց. «Մեր պատկերովը եւ մեր նմանության պես մարդ շինենք» (Շնն. Ա:26): Այսպես, մարդը ստեղծվել է Աստծո պատկերով ու նմանությամբ, ինչպես դա դրսեւորվում է Յրեշտակների միջոցով: Այս խոսքերը չեն կարող վերագրվել մարդու մտավոր կերպարին, որովհետեւ ըստ բնույթի մեր բանականությունը ամբողջովին հեռացվել է Աստծուց եւ բազմաթիվ հարաբերություններում այն հիմնավորապես հակառակ է Նրա բարեպաշտությանը. «Որովհետեւ իմ խորհուրդները ձեր խորհուրդները չեն եւ ձեր ճանապարհները իմ ճանապարհները չեն, ասում է Տերը. Այլ ինչպես որ բարձր է երկինքը երկրից, նույնպես էլ բարձր են իմ ճանապարհները ձեր ճանապարհներից եւ իմ խորհուրդները ձեր խորհուրդներից» (Եսայ. ԾԵ:8,9): Յետեւաբար, պատկերն ու նմանությունը, որ

մենք բաժանում ենք Աստծո հետ, պետք է լինի ֆիզիկական պատկեր: Երբ էլ որ երկրի վրա տեսել են Յրեշտակներին, նրանց միշտ նկարագրել են մարդկային տեսքով: Արդ, օրինակ, Աբրահամը չկանխամտածված ընդունում էր Յրեշտակներին, մտածելով, որ իր առջեւ սովորական մարդիկ են: Այն, որ մենք ստեղծված ենք Աստծո պատկերով, պարզ նշանակում է, որ մենք կարող ենք ինչ-որ հետեւություն անել այն իրական օբյեկտի մասին, որին մենք ինքներս ենք նման: Եվ Աստվածը, որին մենք արտացոլում ենք, ինչ-որ աղոտ էակ չէ, որին չես կարող պատկերացնել:

- Յրեշտակներն իրենք էլ Աստծո արտացոլքն են: Արդ Աստված Մովսեսի մասին կարող էր ասել. «Նրա հետ բերանե բերան եմ խոսում... եւ նա Տիրոջ կերպարանքը տեսնում է» (Թվոց ԺԲ:8): Դա վերաբերում է Մովսեսին ուղղված ցուցումին, որ տալիս էր Տիրոջ անունը կրող Յրեշտակը (Ելից ԻԳ:20,21): Եթե Յրեշտակը Տիրոջ նմանակն էր, ապա Աստվածն ունի նույն տեսքը, ինչ որ Յրեշտակները, այսինքն՝ ֆիզիկապես մարդու նման, բայց եւ անսահման ավելի բարձր բնույթի, քան մարմինն ու արյունը: «Եվ Տերը կը խոսեր Մովսեսին հետ դեմ առ դեմ, ինչպես մարդ մը իր բարեկամին հետ կխոսի» (Ելից ԽԳ:11): Տեր Աստվածն իրեն դրսեւորում էր իր Յրեշտակների մեջ, որոնց երեսն ու բերանը նման էին իր՝ Տիրոջ երեսին ու բերանին:

- Այն, որ մենք ունենք Աստծո պատկերը, «Նա գիտե մեր կազմվածքը» (Սաղ. ԾԳ:14): Նա ցանկանում է, որ մենք նրա մասին իմանանք որպես մարմնավորյալ անձի, որպես Յոր, ում հետ մենք կարող ենք հաղորդակցվել: Դրանով են բացատրվում բազմաթիվ վկայակոչումները Աստծո ձեռքերի, աչքերի եւ այլնի մասին: Եթե Աստված լիներ ինչ-որ էակի թանձրուկ ինչ-որ տեղ երկնքում, ինչը պիտի լիներ Աստծո մասին մեր պատկերացումը, եթե մենք հրաժարվեինք Նրան անձ ճանաչելուց, այդ դեպքում այդ վկայակոչումները մարդկանց մոլորության մեջ կզգեին եւ չէին ունենա դաստիարակչական ոչ մի նշանակություն:

- Աստծո մշտական նստավայրի նկարագրությունը պարզորոշ ցույց է տալիս, որ Աստված ունի իր անձնական կացարանը. «Աստված երկնքում է» (Ժող. Ե:2), «Վասն զի իր սրբությանը բարձրութենէն նայեցավ, Տերը երկնքէն երկրի վրա նայեցավ» (Սաղմ. ԾԲ:19), «Դու լսիր երկնքումը՝ քո բնակվելու տեղում» (Գ Թագ Ը:39): Եվ առավել բնորոշ է, քան այս բոլորը, մենք կարողում

ենք, որ Աստված ունի «աթոռ» (Բ Մնաց Թ:8, Սաղ. ԺԱ:4, Ես 2:1, ԿԶ:1): Նման արտահայտություններ դժվար է կիրառել անորոշ էակի նկատմամբ, որը գտնվում է ինչ-որ տեղ Երկնային թագավորությունում:

- Եսայայի բանաստեղծությունների ԽԵ-ն լի է հայտնություններով, որն անում է Աստված իր ժողովրդի գործերի մեջ իր ներգրավման մասին. «Ես եմ Տերը եւ ուրիշ մը չկա... Այս բոլոր բաները ընողը Ես Տերս եմ...»

Ասոնք ստեղծողը Ես՝ Տերս եմ... Վա՛յ անոր, որ իր Արարչին հետ կը վիճի... Երկինքը իմ ձեռքերս տարածեցին... Ով երկրի բոլոր ծայրեր, ինձի նայեցեք, որպեսզի փրկվեք»: Վերջին նախադասությունը հատկապես ընդգծում է Աստծո անձի գոյությունը - Նա ուզում է, որ մարդիկ դիմեն Իրեն, որպեսզի հավատի աչքերով հասնեն Նրա ճշմարիտ գոյությանը:

- Աստված մեզ ներկայանում է որպես ամենաողորմած Աստված: Իսկ ներողամտությունը կարող է բխել միայն անձից. դա մտավոր գործ է: Արդ, Դավիթը Աստծո հոգուն մոտ մարդ էր (Գ Թագ. Գ:14): Դա ցույց է տալիս, որ Աստված ունի բանականություն (սիրտ), որն ընդունակ է պատճենահանվել մարդու կողմից մինչեւ որոշակի սահմանափակ մեծության, չնայած որ մարդն իր բնույթով Աստծու հոգուն մոտ չէ: Այնպիսի տողեր, ինչպիսիք են՝ «Այն ժամանակ Տերը զղջաց, որ երկրի վրա մարդ ստեղծեց, եւ իր սրտի մեջ տրտմեց» (Շն. 2:6) ցույց են տալիս, որ Աստված ավելի շուտ կենդանի էակ է, քան Ոգու վերացական պոռթկում մթնոլորտում: Դա օգնում է մեզ հասկանալ, թե ինչպես ենք մենք կարողանում գործի մեջ հաճոյանալ կամ չգոհացնել Նրան, ինչպես անում է երեխան իր հոր նկատմամբ:

Եթե Աստված անձ չէ...

Եթե Աստված իրական անձ չլիներ, դժվար կլիներ ընկալել հոգեւորության կատեգորիան: Եթե Աստված ամբողջովին բարեպաշտ, բայց նյութական սուբստանց չէ, ապա մենք չէինք կարող իրապես ընկալել Նրա բարեպաշտությունը, որը դրսեւորվում է մարդկանց նկատմամբ: Ինչպես քրիստոնեության, այնպես էլ հրեական ուրացողները պնդում են, որ Աստծո բարեպաշտությունը մեր կյանքի մեջ է մտնում աղոտ «սուրբ Զոգու» միջոցով, որն ինչ-որ ձեւով մեր մեջ ստեղծում է Աստծո մտավոր պատկերը, որն ընդունելի է Նրա համար: Իր հերթին,

Եթե մենք ընդունենք Աստված կոչված անձի գոյությունը, ապա մենք կարող ենք Նրա օգնությամբ եւ Նրա խոսքի ազդեցությամբ աշխատանք տանել մեր բնավորությունը բարելավելու, ինչպես նաեւ մեր մեջ Աստվածային հատկանիշներ գարգացնելու վրա:

Աստծո նպատակն է իրեն դրսեւորել բազմաթիվ հիանալի արարածների մեջ: Նրա հիշարժան անունը՝ Եհովա Էլոհիմ, վկայում է դրա մասին (Թարգմանաբար այն նշանակում է «Նա, ով կլինի հզոր»): Բայց շնորհների նկարագրությունը ճշմարիտ հավատի համար երկրի վրա գալիք Աստվածային Թագավորությունում ցույց են տալիս, որ նման հավատացյալ մարդիկ կունենան շոշափելի մարմնական գոյություն, չնայած որ նրանք այլեւս մարդկային բնավորության թուլություններ չեն ունենա: Հորը տրտմում էր «վերջին օրվա» համար, երբ կունենա իր մարմնի հարությունը (Հոբ ԺԹ:25-27): Աբրահամը կլինի նրանցից մեկը, ում մասին ասվում է՝ «Եվ երկրի հողումը գնացողներից շատերը պիտի գարթեն, ոմանք ի հավիտենական կյանք» (Դան. ԺԲ:2), որպեսզի նա կարողանա ստանալ խոստում, որպես հավիտենական ժառանգություն քահանայի երկիրը, երկրի վրա իրական վայր (Շն. ԺԷ:8): «Նորա սուրբերը ցնծալով կցնծան... Թող սուրբերն ուրախանան փառքով, ցնծան իրանց անկողնումը... որ նորանց վրա կատարեն գրված դատաստանը» (Սաղ. ԸԼԲ:16, ԺԽԹ:5,9): Հրեաների եւ ոչ հրեաների անընդունակությունը ընկալելու նման հատվածները այնպես, ինչպես եւ Աբրահամին տրված ճշմարիտ նշանակությունը, հանգեցրել է «անմահ հոգու» որպես մարդկային գոյության իրական ձեւի, ոչ ճիշտ ընկալմանը: Նման գաղափարը ամբողջովին զրկված է Աստվածաշնչի աջակցությունից: Աստված անմահ է: Նա հիանալի էակ է, եւ Նա իր նպատակն այնպես է բացում, որպեսզի տղամարդիկ եւ կանայք կարողանան կանչված լինել երկրի վրա Նրա գալիք Թագավորության կյանքի համար եւ նրա ատրիբուտների բաժանումը. որ արտահայտված են մարմնական ձեւում:

Դրանից հետեւում է, որ չկա Աստծուն, կրոնին երկրպագելու բանական կոնցեպցիա, կամ Աստծո հետ անձնական ազգակցություն հաստատելու մինչ այն պահը, մինչեւ չճանաչվի, որ Աստված անձ է, որ մենք մեզնից ներկայացնում ենք Նրա ֆիզիկական պատկերը, չնայած շատ ավելի անկատար, եւ, որ մենք Նրա մտավոր կերպարի գարգացման կարիքն ունենք՝ այնպես, որպեսզի կարողանանք լրիվ ընդունել Նրա ֆիզիկական

կերպարը Աստծո թագավորությունում: Արդ, բավականին իմաստ ու մխիթարանք կարելի է ստանալ այն հատվածներից, որտեղ խոսվում է Աստծո՝ որպես սիրող Յոր մասին, որը մեզ խրատում է, ինչպես Յայրն է խրատում որդուն (օրինակ՝ Օր. Ը:5): Զրիստոսի տանջանքների մասին ենթատեքստում կարդում ենք, որ Տերը հաճեց նրան զարկել» (Ես. ԾԳ:10), չնայած որ նա «դեպի Աստվածն աղաղակեցի. Նա լսեց իմ ձայնը, եւ իմ աղաղակը Նրա ականջներին հասավ» (Սաղ. ԺԸ:6): Աստծո խոստումը Դավիթին սերմի համար, որը կլինի Աստծո որդին, պահանջում էր մարդու զարմանահարաշ ծնունդ: Եթե Աստված անձնավորություն չլիներ, Նա չէր կարող որդի ունենալ:

Աստծո ճիշտ ընկալումը տալիս է բանալի, որը բացում է Աստվածաշնչի ուսմունքի կենսականորեն կարելու բազմաթիվ ոլորտներ: Բայց ինչպես մի սուտը տանում է մեկ այլ ստի, այդպես եւ Աստծո մասին ոչ ճիշտ կոնցեպցիան խավարեցնում է ճշմարտության համակարգը, որը պարունակում է Սուրբ Գիրքը: Եթե դուք գտաք, որ գրքի այս բաժինը համոզիչ է կամ մասամբ համոզիչ, ապա հարց է ծագում՝ «Իրո՞ք դուք գիտեք Աստծուն»: Ստորեւ քննարկենք Աստվածաշնչի ուսմունքը նրա մասին:

1.3 Աստծո անունն ու բնավորությունը

Եթե Աստված գոյություն ունի, ապա հարկ է նկատի ունենալ, որ նա իր մասին մեզ հաղորդելու համար մշակել է ինչ-որ ձեւեր: Մենք հավատում ենք, որ Աստվածաշունչը Աստծո հայտնությունն է մարդուն, եւ որ նրա մեջ մենք տեսնում ենք Աստծո բացվող բնավորությունը: Ահա թե ինչու Աստծո խոսքը նրա «սերմն» է (Պ Ա:23), քանի որ, եթե այն ազդում է մեր բանականության վրա, ապա մեր ներսում ծնվում է նոր էակ, որն իր մեջ ունի Աստծո բնութագրությունները (Բ Կորն. Ե:17): Ուստի որքան շատ ենք մենք ընկալում Աստծո խոսքն ու ըմբռնում Նրա դասերը, այնքան ավելի շատ ենք «իր Որդու պատկերին կերպարանակից» (Յոհն. Ը:29) դառնում, որն իր բնավորությամբ Աստծո անբասիր կերպարն էր (Կոլ. Ա:15): Դրանում է ամփոփված Աստվածաշնչի պատմական մասերի արժեքավորությունը. դրանք լի են շարադրանքներով այն մասին, թե ինչպես էր Աստված վերաբերվում մարդկանց եւ ժողովուրդների հետ, որոնք դրսեւորում էին միեւնույն հիմնական բնավորությունները:

Հին հրեական լեզվում մարդու անունը արտացոլում էր նրա բնավորությունը կամ ինֆորմացիա նրա մասին: Մի քանի պարզ օրինակներ՝

«Հիսուս» = «Փրկիչ», - քանի որ «նա պիտի փրկի իր ժողովրդին՝ իր մեղքերից» (Մթ. Ա:21),

«Աբրահամ» = «Բազմության Ղայր» - «Քեզ ազգերի բազմության հայր արի» (Մն ժԷ:5),

«Եվա» = «Ապրող», - որովհետեւ նա եղավ բոլոր կենդանյաց մայրը (Մն. Գ:20)

«Շմավոն» = «Լսող» - «Տերը լսեց, որ ես ատվում եմ, նորա համար այս որդին էլ տվեց» (Մն. ԻԹ:33):

Հարկ է, ուստի, ակնկալել, որ Աստծո անուններն ու տիտղոսները նրա մասին շատ ինֆորմացիա կտան: Քանզի Աստծո բնավորության եւ դիտավորությունների մեջ բազմաթիվ ասպեկտներ կան, ուրեմն փաստացի նա ունի ոչ մեկ անուն: Աստծո անունների մանրամասն ուսումնասիրությունը ցանկալի է կատարել մկրտումից հետո: Աստծո բնավորության հետագա ճանաչումը, ինչպես այն արտահայտվում է նրա անվան մեջ, պետք է կատարվի Տեր Աստծո մեջ մեր ողջ կյանքի ընթացքում: Ստորեւ բերված տեղեկություններն ավելի շուտ ներածություն են տվյալ թեմայի համար:

Երբ Մովսեսը ցանկացավ ավելի մանրամասն իմանալ Աստծո մասին, որպեսզի ամրապնդվի հավատի մեջ իր կյանքի շատ դրամատիկ պահերի ժամանկ, Հրեշտակը «Եհովայի անունը կանչեց: Եվ Աստված նրա առջեւից անցավ, եւ կանչեց. Տեր, Տեր՝ Աստված ողորմած եւ գթած՝ երկայնամիտ եւ առատ ողորմությունով եւ ճշմարտությունով, որ հազարների ողորմություն ես անում, որ անորենություն՝ հանցանք ու մեղք ես ներում, բայց բնավ անպարտ չես թողնում» (Ել. ԼԴ:5-7):

Դա պարզ ապացույց է, որ Աստծո անունները բացահայտում են նրա բնավորությունը: Այն, որ Աստված կրում է այդ անունները, հաստատում է, որ Աստված անձ է, եւ հիմարություն է մտածել, որ ոգու պոռթկումները ունեն այնպիսի բնավորության գծեր, որոնք կարող են նույն կերպ զարգանալ մի մարդկային ցեղում:

Աստված ընտրեց մի հատուկ անուն, որով նա կցանկանար հայտնի լինել եւ որով մարդիկ կհիշեին Իրեն. դա՝ ընդհանրացում

Է, ամփոփում, Նրա դիտավորությունը մարդկանց հետ:

Իսրայելցիները Եգիպտոսում ստրուկներ էին եւ կարիք ունեին, որ Աստված իրենց հիշեցներ Իր դիտավորությունների մասին Նրանց նկատմամբ: Մովսեսին հանձնարարվել էր Նրանց հաղորդել Աստծո անունը, որպեսզի դա օգնի Նրանց գտնել հիմնավոր պատճառ Եգիպտոսից հեռանալու եւ սկսվի արշավ ավետյաց երկրի ուղղությամբ (Կոր. Ժ:1): Մինչեւ մկրտումն ընդունելը մեզ նախ պետք է հասկանալ Աստծո անվան վերաբերյալ հիմնական սկզբունքները եւ սկսենք մեր ճամփորդությունը դեպի Աստվածային Թագավորություն:

Իսրայելցիներին Աստված ասաց, որ Իր անունը Եհովա է, որը նշանակում է «Ես Գոյն եմ», կամ ավելի ճիշտ թարգմանությամբ՝ «Ես եմ որ եմ» (Ելից Գ:13-15): Այս անունը հետագայում մի որոշ ընդլայնվեց՝ «Նաեւ Աստված ասաց Մովսեսին. Այսպես ասիր Իսրայելի որդիներին. Ձեր հայրերի Եհովա Աստվածը՝ Աբրահամի աստվածը, Իսահակի Աստվածը եւ Յակոբի Աստվածը ինձ ձեզ մոտ ուղարկեց, եւ այս է իմ անունը հավիտյանս, եւ այս է իմ անունը ազգից ազգ» (Ելից Գ:15): Զետեւաբար Աստծո լրիվ անունը՝ «Տեր ԱՍՏՎԱԾ Է»:

Զին Կտակարանը մեծ չափով գրված էր հին հրեական լեզվով եւ ցանկացած թարգմանություն անխուսափելիորեն բաց էր թողնում շատ մանրամասներ, երբ գործը վերաբերում էր հին հրեական բառերի թարգմանությանը, որ նշանակում էր «Աստված»: Զին հրեական բառերից ամենատարածվածը, որ թարգմանվում էր «Աստված», «Էլոհիմ» բառն էր, որը նշանակում է «հզոր»: Աստծո «Զիշարժան» անունը, որով նա ուզում է, որ մենք իրեն հիշենք, հետեւաբար, հանդիսանում է

**Յագվե Էլոհիմ
որը նշանակում է**

ՆԱ, ՈՎ ԿԲԱՅՎԻ ՉՈՐԱՎՈՐՆԵՐԻ ԿՄԲՈՒՄ:
Աստծո դիտավորությունը, ուստի, հանդիսանում է Իր բնավորության եւ Իր Էության դրսեւորումը մարդկանց մեծ խմբում: Ենթարկվելով Նրա խոսքին, մենք կարող ենք մեր մեջ այժմ զարգացնել Աստվածային բնավորության որոշ գծեր, այնպես որ շատ նեղ իմաստով Աստված Իրեն դրսեւորում է այս կյանքում ճշմարիտ հավատացյալների մեջ: Բայց Աստծո անունը մարգարեություն է ժամանակի մասին, որը կգա, երբ երկիրը լցվի Նրա բնավորության եւ բնույթի նման մարդկանցով (Բ Պ).

Ա:4): Եթե մենք ցանկանում ենք Աստծո ղիտավորության հետ զուգակցվել եւ դառնալ անմահ ինչպես Նա, ունենալ հավիտենական կյանք եւ վարել այն լրիվ բարոյական կատարելությամբ, այդ դեպքում մենք պետք է զուգակցվենք եւ Նրա անվան հետ: Դրա համար ուղին անցնում է հանուն անվան մկրտման միջոցով, այսինքն՝ Յագվե Էլոհիմ (Մաթ. ԻԸ:19): Դա նաեւ մեզ դարձնում է Աբրահամի հետնորդներ («սերմեր») (Գաղ. Գ:27-29), որոնց խոստացված էր երկրի հավիտենական ժառանգություն (Շն.ԺԷ:8, Զոմմ.Դ:13),- «հզորագույնների» («Էլոհիմ») խմբից, որի մեջ կմարմնավորվի մարգարեությունը Աստծո անունով: Ավելի մանրամասն դրա մասին ասվում է Գլուխ 3-րդում:

1.4 Հրեշտակներ

Հրեշտակների մասին վերն ասվածից ելնելով կարելի է ասել, որ նրանք՝

- ֆիզիկական անձեր են,
- ունեն Աստվածային անուն,
- ուղիներ, որոնց օգնությամբ Աստծո Ոգին Իր կամքը գործողության է վերածում,
- Նրա բնավորությանը եւ ղիտավորությանը համապատասխան,
- ներկայացնելով ընդ որում Նրան:

Ինչպես արդեն ասել ենք 1.3 բաժնում, ամենատարածված բառերից մեկը, որը թարգմանվում է ինչպես «Աստված», «Էլոհիմ» բառն է, որն իրապես նշանակում է «զորավոր»: Աստվածաշնչյան հիմնական տրակտատն ասում է, որ կա միայն մեկ Աստված (Օր. 2:4, Եսայ. ԽԵ:5, Ա Կոր. Ը:4, Եփ. Դ:6): Այդ «զորավորները», որ իրենց վրա կրում են Աստծո անունը, կարող են իսկապես Աստված անվանվել, Նրա հետ իրենց մերձ կապերի հիման վրա: Այդ էակները կոչվում են Հրեշտակներ:

Աշխարհի արարման նկարագրում (Շն. Ա) ասվում է, որ Աստված արտասանեց որոշակի ցուցումներ արարման վերաբերյալ եւ «այնպես եղավ»: Հրեշտակներն էին կատարում Աստծո հրահանգները.

«Օրհնեցեք Տիրոջը, ով Նրա Հրեշտակներ՝ հզոր զորությամբ, որ կատարում եք Նրա խոսքը, Նրա խոսքի ձայնը լսելով» (Սաղ. Ծգ:20):

Ուստի, բնական է համարել, որ «Աստծո» կողմից աշխարհի արարումը փաստացի իրականացնում էին Հրեշտակները: Հոբի ԼԸ:4-7 հատվածում նույնպես ակնարկվում է այդ մասին: Այժմ հարկ է ընդհանրացնել աշխարհի արարման իրադարձությունները, ինչպես այդ մասին ասվում է ԾՆՆդոց Ա-ում.

Առաջին օր. «Եվ Աստված ասաց. Լույս լինի եւ եղավ լույս» (տ. 3): Երկրորդ օր. «Եվ Աստված ասաց. Ջրերի մեջտեղը հաստատություն լինի, որ ջրերը ջրերիցը բաժանե: (Եվ այնպես եղավ): Եվ Աստված շինեց հաստատությունը, եւ բաժանեց հաստատության տակի ջրերը հաստատության վրա եղող ջրերից: Եվ այնպես եղավ» (տ. 6-7):

Երրորդ օր. «Եվ Աստված ասաց. Երկնքի տակի ջրերը մեկ տեղ ժողովվին, եւ ցամաքը երեսա: Եվ այնպես եղավ» (տ. 9):

Չորրորդ օր. «Եվ Աստված ասաց. Լուսավորներ լինեն երկնքի հաստատությունում... Եվ այնպես եղավ» (տ. 14,16):

Հինգերորդ օր. «Եվ Աստված ասաց. Ջրերը եռան կենդանի շունչ ունեցող գեռուններով. եւ թռչուններ թռչեն երկրի վրա երկնքի հաստատության երեսին: (Եվ այնպես եղավ): Եվ Աստված ստեղծեց մեծամեծ կետերը եւ բոլոր կենդանի շունչ ունեցող սողունները, որ ջրերը եռացին նրանցով նրանց տեսակի պես, եւ բոլոր թեւավոր թռչուններն իրենց տեսակի պես» (տ. 20,21):

Վեցերորդ օր. « Եվ Աստված ասաց. Երկիրը շնչավոր էակ հանե իր տեսակի պես, անասուններ եւ սողուններ եւ երկրի գազաններ իրենց տեսակի պես: Եվ այնպես եղավ» (տ.24):

Մարդը ստեղծվեց այդ նույն վեցերորդ օրը: «Եվ Աստված ասաց. Մեր պատկերովը եւ մեր նմանության պես մարդ շինենք» (ԾՆ. Ա:26): Մենք արդեն ասել ենք այդ տողի մասին 1.2 բաժնում: Այժմ մենք ուզում ենք նշել, որ «Աստված» բառը այստեղ անմիջականորեն չի վերաբերում Աստծո անձին - «շինենք մարդուն» բառերը ցույց են տալիս, որ «Աստված» բառը վերաբերում է ոչ մեկ անձի: Հին հրեական բնագրում օգտագործված է «Էլոհիմ» բառը, որը նշանակում է «գորավոր»՝ Հրեշտակների հետ համեմատած: Այն փաստը, որ Հրեշտակներն են մեզ ստեղծել իրենց պատկերով, նշանակում է, որ նրանք ունեն նույն մարմնավոր արտաքինը, ինչպիսին մենք ունենք: Ուստի, նրանք իրական, շոշափելի մարմնավոր էակներ են, Աստծո հետ միասին միեւնույն բնության:

Այստեղ օգտագործվող «բնություն» բառն իր իմաստով վերաբերում է նրանց ֆիզիկական կառուցվածքին, բնավորությանը եւ դիտավորությանը: Աստվածաշնչում ասվում է երկու «բնությունների» մասին: Բառի սեփական նշանակությունը թույլ չի տալիս միաժամանակ ունենալ երկու բնույթ:

Աստվածային բնույթը

չի կարող անհրավորություն անել (անբասիր է) (Յոհ. Թ:14, 2:23, Սաղ. Ղ:2, Մթ. Ե:48),
Նա միայն անմահություն ունի (Ա Տիմ 2:16),
Լի է ուժով ու կարողություններով (Եսայ. Խ:28):

Դա Աստծո եւ Յրեշտակների բնույթն է: Այն փոխանցվել էր Յիսուսին նրա հարությունից հետո (Գործք ԺԳ:34, Յայտ. Ա:18, Եբր. Ա:3): Այդ բնույթը տրվում է եւ մեզ այն աշխարհում (Ղուկ. Ի:35,36, Բ Պ. Ա:4, Եսայ. Խ:28):

Մարդկային բնույթը

Ենթակա է մեղքի գայթակղությանը (Յակ. Ա:13-15) անբարոյացած բնության բանականությամբ (Երեմ. ԺԵ:9, Մարկ Է:21-23),
դատապարտված է մահվան (Յոհ. Ե:12,17, Ա Կոր. ԺԵ:22),
Ունի շատ սահմանափակ ուժ՝ ինչպես ֆիզիկական, այնպես էլ մտավոր (Երեմ. Ժ:23):

Դա բնություն է, որ այժմ ունեն բոլոր մարդիկ՝ լավ եւ վատ:
Այդ բնության վերջը մահ է (Յոհ. 2:23): Այդ բնույթն ունեւ Յիսուսը իր ողջ մահկանացու կյանքի ընթացքում (Եբր. Բ:14-18, Յոհ. Ը:3, Յովք. Բ:25, Մարկ. Ժ:18):

Յավոք սրտի, «բնություն» բառն անորոշ է. մենք այն կարող ենք կիրառել այսպիսի նախադասության մեջ. «Ձոնն ունի լավ բնույթ», որը նշանակում է, որ նրա բնույթի մեջ չի մտնում վատ լինելը, բայց նա կարող է հպարտանալ իր ավտոմեքենայով, որը միանգամայն բնորոշ է մարդկային բնույթին: Սակայն դա այն նշանակությունը չէ, որ մենք ի նկատի ունենք, երբ մեր գրքում օգտագործում ենք «բնություն» բառը:

Քանի որ Յրեշտակներն ունեն Աստծո բնույթը, նրանք պետք է անմեղ լինեն, եւ, ուստի, չեն կարող մահանալ, քանզի մեղքն է մահ բերում (Յոհ. 2:23): Նրանք պետք է ունենան իրոք

գոյության ֆիզիկական ձեւ: Ահա թե ինչու Յրեշտակները սովորական մարդու տեսք ունենին, երբ հայտնվում էին երկրի վրա.

- Յրեշտակները եկան Աբրահամի մոտ, որպեսզի Նրան փոխանցեն Աստծո խոսքը: Նրանք նկարագրվում են որպես «երեք մարդ», որոնց հետ սկզբից Աբրահամը վերաբերվում էր ինչպես մարդկանց հետ, քանի որ նրանց արտաքինն այդպիսին էր. «Թող մի քիչ ջուր բերվի, եւ լվացեք ձեր ոտքերը, եւ ծառի տակին հանգստացեք» (Ծն. ԺԸ:4)

- Յետո երկուսն այն Յրեշտակներից եկան Սողոմ քաղաքը Ղովտի մոտ: Եվ նորից ինչպես Ղովտը, այնպես էլ Սողոմի բնակիչները նրանց ընդունեցին որպես մարդկանց. «Եվ այն երկու հրեշտակները եկան Սողոմ», եւ հրավիրեց նրանց Ղովտը իր հետ անցկացնել գիշերը: Բայց Սողոմի բնակիչները եկան նրա տան մոտ եւ սպառնալից հարցրին՝ «Ո՞ւր են այն մարդիկը, որ այս գիշեր քեզ մոտ եկան»: Ղովտն աղաչեց՝ «Այս մարդկանցը բան մի արեք»: Նկարագրության մեջ այդ Յրեշտակները եւս անվանվում են «մարդիկ». «Բայց այն մարդիկը իրենց ձեռքը մեկնեցին» եւ փրկեցին Ղովտին; եւ ասացին մարդիկ Ղովտին... «Տերը մեզ ուղարկեց, որ կործանենք նրան»՝ Սողոմը (Ծն. ԺԹ:1,5,8,10,12,13):

- Այս երկու դեպքերի վերաբերյալ Նոր Կտակարանի մեկնությունները հաստատում են, որ Յրեշտակները մարդկային տեսք ունեն. «Յյուրասիրությունը մի մոռանաք, որ նրանով ոմանք (Աբրահամը եւ Ղովտը) առանց գիտենալու հրեշտակներ ընդունեցին» (Եբր. ԺԳ:2):

- Յակոբը ողջ գիշեր կռվեց ինչ-որ մարդու հետ (Ծն. ԼԲ:24), որը ինչպես հետագայում կիմանանք, Յրեշտակ էր (Ովս. ԺԲ:4):

- Փայլուն սպիտակ զգեստ հագած երկու մարդ ներկա էին Յիսուսի հարության (Ղուկ. ԻԴ:4) եւ համբարձման ժամանակ: Նրանք Յրեշտակներ էին:

- Ուշադրություն դարձրեք բառերի գաղտնի նշանակությանը՝ «մարդի չափով որ Յրեշտակինն է» (Յայտ. ԻԱ:17):

Յրեշտակները չեն մեսագործում

Քանի որ Յրեշտակներն ունեն աստվածային բնույթ, նրանք չեն կարող մահանալ: Քանզի մեղքը մահ է բերում, ապա դրանից

հետեւում է, որ նրանք չեն կարող մեղսագործել: Հունական եւ հին հրեական իսկական բառերը, որ թարգմանվում են «Հրեշտակ» բառով, նշանակում են «կապավոր, հանձնակատար»: Հրեշտակները Աստծո հանձնակատարներն են կամ ծառաները, նրան հնազանդ, ուստի, նրանց մասին չի կարելի մտածել որպես մեղավորների մասին: Արդ, aggelos հունական բառը, որը թարգմանվում է որպես «Հրեշտակ», կարող է թարգմանվել նաեւ «կապավոր, հանձնակատար» բառերով, երբ նկատի են առնում մարդկանց, օրինակ՝ Հովհաննես Մկրտիչին (Մաթ. ԺԱ:10) եւ նրա հանձնակատարներին (Ղուկ. Է:24); Հիսուսի հանձնակատարները (Ղուկ. Թ:52) եւ մարդիկ, որոնք հետամուտ եղան Ռախաբին (Հակոբ Բ:25): Անշուշտ, հնարավոր է, որ «հրեշտակները» մարդկային հանձնակատարների իմաստով կարող են մեղսագործել:

Հետեւյալ հատվածները պարզորոշ ցույց են տալիս, որ բոլոր Հրեշտակները (այլ ոչ թե մի քանիսը) ըստ բնույթի հնազանդ են Աստծուն եւ, ուստի, չեն կարող մեղսագործել:

«Տերը երկնքում հաստատեց իր աթոռը, եւ նրա թագավորությունը տիրում է բոլորին (այսինքն՝ երկնքում Աստծո դեմ խռովություն չի կարող լինել): Օրհնեցեք Տիրոջը, ով նրա Հրեշտակներ, հզոր գործությամբ, որ կատարում եք նրա կամքը» (Սաղ. ԾԳ:19-21)

«Օրհնեցեք նրան, ով նրա ամեն Հրեշտակներ, օրհնեցեք նրան, ով բոլոր գորքեր» (Սաղ. ԾԽԸ:2):

«ԶԷ՞ որ ամենը (Հրեշտակները) սպասավոր հոգիներ են ուղարկված սպասավորություն անելու նրանց (հավատացյալների) համար, որ փրկությունը պիտի ժառանգեն» (Եբր. Ա:14):

«Ամեն» բառի կրկնությունը ցույց է տալիս, որ Հրեշտակները չեն ստորաբաժանվում երկու խմբի՝ լավ եւ վատ: Հրեշտակների բնույթը պարզ ընկալելու կարեւորությունը նրանում է, որ հավատարմության դիմաց պարգեւը կլինի միացումը նրանց բնույթին՝ «Բայց նրանք, որ արժանի լինեն այն աշխարհին հասնելու եւ մեռելներից հարություն առնելու, ոչ կին կառնեն, եւ ոչ մարդի կգնան, եւ ոչ իսկ կարող են մեռնել, որովհետեւ Հրեշտակներին հավասար են» (Ղուկ. Ի:35,36): Դա կարելու պահ

Է հասկանալու համար: Եթե Յրեշտակները կարողանային մեղսագործել, ապա նրանք, ովքեր արժանի կլինեն պարգևի Քրիստոսի գալստյանը, նույնպես ընդունակ կլինեին նորից մեղսագործելու, բայց քանի որ մեղքը մահ է բերում (Յոզմ. 2:23), ապա նրանք հավիտենական կյանք չէին ունենա: Եթե մենք հնարավորություն ունենանք մեղսագործելու, ապա մենք նաեւ կունենանք մեռնելու ընդունակություն: Այսպես, եթե մենք ասենք, որ Յրեշտակները մեղսագործում են, ապա հավիտենական կյանքի մասին Աստծո խոստումը կորցնում է ամեն իմաստ: Սակայն, մենք գիտենք, որ մեր պարգևը հրեշտակների բնույթի բաժանման մեջ է:

Եթե Յրեշտակները կարողանային մեղսագործել, ապա Աստված անգոր կլիեր մեր կյանքի եւ մեր աշխարհիկ գործերի վրա բարեպաշտորեն ազդել, քանզի, ինչպես Ինքն է ասել, Իր բոլոր արարումները կատարվում են Իր Յրեշտակների միջոցով (Սաղ. 109:19-21): Նրանք՝ «Աստծո արարված Յոգիներ» են՝ այն իմաստով, որ Նա հասնում է ամենին Իր Յոգու ուժի օգնությամբ, գործելով Յրեշտակների միջոցով (Սաղ. 107:4): Ուստի, անհնարին է մտածել, որ Յրեշտակները կարող են չհնազանդվել Նրան: Քրիստոսյանները ամեն օր պետք է աղոթեն, որպեսզի երկրի վրա հաստատվի Աստծո Թագավորությունը, որպեսզի Նրա կամքը լինի այստեղ, ինչպես որ երկնքում է (Մաթ. 2:10): Եթե Աստծո Յրեշտակները այնտեղ պետք է մրցեն մեղսավոր Յրեշտակների հետ, ապա Նրա կամքը լիակատար չէր իրագործվի այնտեղ, եւ ուստի, նման իրավիճակ կլիներ եւ գալիք Աստվածային Թագավորությունում: Յավիտենականությունը մտցնել աշխարհ, որը միշտ իրենից կներկայացնի մեղքի եւ հնազանդության պայքարի դաշտ - դժվար թե գայթակղիչ հեռանկար լինի:

Յրեշտակները եւ հավատացյալները

Գոյություն ունի բավականին ծանրակշիռ պատճառ հավատալու, որ յուրաքանչյուր ճշմարիտ հավատացյալ ունի Յրեշտակներ, հնարավոր է նրանցից մեկը յուրահատուկ է, օգնում է նրան կյանքում:

- «Տիրոջ Յրեշտակը բանակ է շինում նրանից վախեցողների չորս կողմը եւ փրկում է նրանց» (Սաղ. 107:7):

- «... փոքրներից մեկին, որ հավատում են ինձ (այսինքն՝ թույլ առաքյալներ - Չաք. 109:7, Մաթ. 102:31)... նրանց Յրեշտակները

երկնքում միշտ տեսնում են իմ Յոր երեսը» (Մաթ. ԺԸ:6:10):

- Հին քրիստոնյաները խիստ հավատում էին, որ Պետրոսը ուներ Յրեշտակ-պահապան (Գործք ԺԲ:14,15):
- Իսրայելցիները անցան Կարմիր ծովը եւ նրանց անապատի միջով տանում էր Յրեշտակը ավետյաց երկրի ուղղությամբ: Անցումը Կարմիր ծովով խորհրդանշվում է ջրում մեր մկրտումով (Ա Կոր. Ժ:1), եւ ուստի, բանական կլինի ենթադրել, որ մեզ նույնպես տանում է եւ օգնում Յրեշտակը կյանքի անապատի միջով մեր արշավին դեպի Աստվածային Թագավորության երկիր:

Եթե Յրեշտակները լինեին չար՝ մեղավոր լինելու իմաստով, այդ դեպքում նման խոստումները Յրեշտակների կողմից մեզ հսկելու մասին եւ մեր կյանքի վրա նրանց ազդեցության մասին օրինանքի փոխարեն կլինեին նզովք:

Այսպես, մենք տեսնում ենք, որ Յրեշտակները էակներ են...

- Աստծո հավիտենական բնույթով եւ մարմնավոր արտաքինով,
- որոնք չեն կարող մեղսագործել,
- որոնք միշտ կատարում են Աստծո հրամանները,
- եւ հանդիսանում են կանալներ, որոնց միջոցով խոսում եւ գործում է Աստվածային հոգի- ուժը (Մաղ. ԺԴ:4):

Բա՞յց...

Բազմաթիվ «քրիստոնեական» եկեղեցիներ համարում են, որ Յրեշտակները կարող են մեղսագործել, եւ որ մեղավոր Յրեշտակներ գոյություն ունեն եւ այժմ, եւ երկրի վրա մեղքի եւ պոռբլեմների համար նրանք են կրում պատասխանատվությունը: Այս սխալ պատկերացումն ավելի մանրամասն կքննարկենք ավելի ուշ: Իսկ այժմ մենք կանենք հետեւյալ դիտողությունները.

- Հնարավոր է, որ մինչեւ մեր տիեզերքի ստեղծվելը եղել է ուրիշը, այսինքն՝ այն, որի մասին ասվում է Ծննդոց Ա-ում: Հնարավոր է նաեւ, որ ներկայիս Յրեշտակները տեղյակ են բարու եւ չարի մասին (Ծն. Գ:5), քանի որ նրանք եղել են նույնպիսի իրավիճակում, ինչպես եւ մենք այս կյանքում: Չի կարելի բացասել այն հնարավորությունը, որ որոշ էակներ, որ ապրել են այն դարում, մեղսագործել են; սակայն դա միայն ենթադրություն է, որին ուզում է հավատալ մարդկային բանականությունը:

Աստվածաշունչն ասում է այն, ինչը տվյալ իրավիճակի մասին մեզ պետք է իմանալ, որ ժխտում է մեղսավոր Յրեշտակների գոյությունը, բոլոր Յրեշտակները հնազանդ են Աստծուն:

- Երկնքում մեղսավոր Էակներ չեն կարող լինել, քանի որ Աստծո մաքուր աչքերը չեն կարող նայել չարությանը (Ամբ. Ա:13): Նման ձեռով Սաղմոս Ե:4,5-ում բացատրում է. «Չարը չի բնակվի Քեզ մոտ: Ամբարտավանները չեն կենա Քո աչքի առաջին»: Ուստի երկնքում Աստծո դեմ մեղավոր Յրեշտակների մասին միտքը լրիվ հակասում է նրան, ինչն ասված է այդ հատվածներում:

- Հունական «Angel» բառը նշանակում է «կապավոր, հանձնակատար» եւ կարող է, ինչպես մենք արդեն ասել ենք դրա մասին, վերաբերել մարդկանց: Նման մարդկային «կապավորները», հանձնակատարները, անշուշտ, կարող են մեղսագործել:

- Չարի, մեղավոր Էակների գոյությունը, որոնց վրա են թափվում կյանքի բոլոր նեգատիվ երեւույթների մեղադրանքները, իրենից ներկայացնում է հեթանոսության մեջ ամենատարածված հավատալիքներից մեկը: Այդ հեթանոսական հավատալիքները Ծննդյան վերաբերյալ որոշ չափով մուտք են գործել նաեւ քրիստոնեություն:

- Կան միայն մի քանի աստվածաշնչյան հատվածներ, որոնք կարող են ոչ ճիշտ մեկնաբանվել այժմ մեղավոր Յրեշտակների գոյության մասին գաղափարի հաստատման համար: Ավելի մանրամասն այդ մասին խոսվում է «Փնտրել սատանային» հրատարակության մեջ, որը կարելի է ստանալ հրատարակիչների մոտից: Նման հատվածները չեն կարող հերքել այն բազմաթիվ ապացույցները, որոնք կան Աստվածաշնչում, Յրեշտակների մասին վերում ասվածի վերաբերյալ:

Շեղում 1. «Աստված Հոգի է» (Հովի Դ:24)

Երկրորդ գլխում ավելի մանրամասն կխոսենք Աստծո Հոգու մասին: Այժմ մենք կարող ենք ընդհանրացնել այնտեղ արված դատողությունները, հետեւյալ կերպ՝ Աստծո Հոգին Նրա ուժն է կամ շունչը, որի օգնությամբ մարդկանց առջեւ բացվում է Նրա Էությունն ու բնավորությունը այն գործողությունների շնորհիվ,

որոնք կատարում է այն Յոգին: Այսպես «Աստված Յոգի է» (Յովհ. Դ:24) արտահայտությունը պետք է թարգմանվի պատշաճ ձևով, քանի որ Նրա Ոգին արտահայտում է Նրա անձը:

Աստված ունի շատ սահմանումներ, օրինակ՝
«Մեր Աստվածը լափող կրակ է» (Եբր. ԺԲ:29),
«Աստված լույս է» (Ա Յովհ. Ա:5),
«Աստված սեր է» (Ա Յովհ. Դ:9),
«Բանն Աստված էր (Յովհ. Ա:1) (հունական «logos») - ծրագիր, դիտավորություն, գաղափար):

Այսպիսով, «Աստված է» Նրա բնութագիրն է: Միանգամայն ճիշտ է ապացուցել, որ սիրո վերացական հասկացությունը «Աստված» է, միայն այն պատճառով, որ մենք կարող ենք «Աստված սեր է»: Մենք կարող ենք ինչ-որ մեկին անվանել «բարություն է», բայց դա չի նշանակում, որ այդ ինչ-որ մեկը ֆիզիկական էակ է՝ դա իսկական գոյության ձև է, որը մեր առջեւ բացում է բարությունը:

Քանի որ Ոգին Աստծո ուժն է, ապա մենք հաճախ կարող ենք, որ Աստված հղում է կամ ուղղում է Իր Յոգին այն նպատակներին հասնելու համար, որոնք համապատասխանում են Իր Կամքին եւ բնավորությանը: Նրա մասին նույնիսկ ասում են որպես Յոգի ստեղծողի (Ամ. Դ:13): Ասել, որ Աստված բառացի իմաստով Նրա Յոգին է, նույնաբանություն է: Իրականում դա ժխտում է Աստծո գոյությունը:

Կան բազմաթիվ օրինակներ, որոնք վկայում են, որ Աստված ուղարկում էր Իր Յոգին եւ Նրա բաժանումը Իր Յոգուց՝ «Նա (Աստված), որ նրանց մեջ դրեց Իր Սուրբ Յոգին» (Եսայ. ԿԳ:11), «Իմ Յոգին (Աստծո) նրա վրա կոնեմ (Յիսուսի)» (Մաթ. ԺԲ:18), «Երկնավոր Յայրը Սուրբ Յոգին կտա» (Դուկ. ԺԱ:13), «Տեսնում էի Յոգին, որ վայր էր գալիս երկնքիցը» (Յովհ. Ա:32), «Ասում է Աստված, որ իմ Յոգուցը կթափեմ ամեն մարմնի վրա» (Գործք. Բ:17):

Իրականում, «Սուրբ Յոգու» հաճախակի վկայումներն արդեն իսկ վկայում են այն մասին, որ Յոգին անձամբ Աստված է: Աստծո եւ Նրա Յոգու այդ տարբերությունը իրենից ներկայացնում է մեկ այլ դժվարություն նրանց համար, ով հավատում է, որ Աստված «եռամիություն» է, որտեղ Յայր Աստվածը նույնացվում է Յիսուսի եւ Սուրբ Յոգու Յետ: Եթե դա

այդպես լինել, եւ եթե մտածենք, որ Աստված անձ չէ, ապա դրանից բխում է, որ Հիսուս էակ չի եղել եւ չի լինի: Բայց կարելու է նշել, որ անձնական Աստվածը մեր աղոթքը դարձնում է հիմարություն, քանզի աղոթքը երկխոսություն է մեր բանականության եւ Աստծո միջեւ, որը գոյություն ունի մեր գիտակցության մեջ: Մեզ մշտապես հիշեցնում են, որ մենք աղոթում ենք Աստծուն, որը երկնքում ունի ապրելու ֆիզիկական տեղ (Ժող Ե:1, Մաթ. 2:9, Ե:16, Գ Թագ Ը:30), եւ որ Հիսուս այժմ գտնվում է Աստծո աջ կողմում, փոխանցում է նրան մեր աղոթքները (Ա Պ. Գ:21, Եբր. Թ:24): Եթե Աստված անձ չէ, ապա այդպիսի տողերը իմաստ չունեն: Բայց հենց որ մենք Աստծուն պատկերացնում ենք իրական, սիրող Հայր, ապա նրան ուղղված մեր աղոթքը դառնում է իրական եւ շոշափելի՝ փաստացի մեկ այլ էակի հետ խոսակցության, որը, ինչպես մենք հավատում ենք, կարող է մեզ պատասխանել:

Շեղում 2. Աստծո անվան օգտագործումը

Մենք տեսնում ենք, որ Աստծո անունն ու նրա որդու՝ Հիսուսի անունը ունեն խորը նշանակություն: Երբ մենք խոսում ենք Աստծո մասին, մենք շոշափում ենք Նրա զարմանալի դիտավորության եւ ճշմարտության յուրաքանչյուր կողմը: Աստծո անունը չի կարելի օգտագործել որպես հասարակ ընդմիջարկված բառ կամ դժգոհություն արտահայտելու համար, որը ամենավիրավորականն է Մեր Արարչի համար: Ուստի, յուրաքանչյուրը, ով ուզում է հաճույք պատճառել Աստծուն եւ Նրան հարգանքի տուրք մատուցել, պետք է բոլոր միջոցներն օգտագործի, որպեսզի դյուրությամբ Նրա Անունը չկիրառի: Աշխարհի շատ կազմակերպություններում ժամանակակից լեզվի նման սրբապղծությունը սովորական երեւոյթ է դարձել եւ դյուրին չէ ամենօրյա կյանքի այդ սովորույթը վերացնելը: Անկասկած, Աստծո օգնության մասին անկեղծ աղոթքն այդ դեպքում Նրա համար աննշան չի մնա: Նրանց համար, ովքեր գտնվում են մեր հսկողության եւ ազդեցության ոլորտում, օրինակ, երեխաներին, պետք է նշել սրբապղծության լրջության մասին՝ «Որովհետեւ Տերը (քո Աստվածը) անպատիժ չի թողնի իր անունը զուր տեղը հիշողին» (Օրինաց Ե:11):

Մույս կողմից, կան այնպիսի մարդիկ, որոնք համառորեն պնդում են, որ մշտապես օգտագործվի հին հրեական Յազվե կամ Եհովա բառը (միեւնույն բառի տարբեր արտասանություններ),

երբ խոսում ենք Աստծո մասին: Հակառակ դեպքում նրանք պնդում են, որ մենք կատարում ենք կոպիտ սխալ: Այդպիսի Աստծո Անվան համախոհների թվին է պատկանում Պահակային Աշտարակի կազմակերպությունը, որի անդամները համարում են, որ եթե քրիստոնյաները իրենց չանվանեն «Եհովայի վկաներ», ապա նանք չեն ունենա Աստծո հետ ազգակցություն:

Այդպես վարվելով, այդպիսի մարդիկ օգտագործում են Աստծո սուրբ ու հիանալի Անունը յուրատեսակ հոգեւոր Էլիտայի հրահրման համար, երբ նրանք արհամարհում են այլ մարդկանց պարզապես մեկ բառ արտասանելու կամ կիրառելու առիթով: Մենք չենք ուզում ասել, որ Աստծո Անվան օգտագործումը վատ գործ է, այն հատկապես հարմար է մեր անձնական աղոթքների համար, եթե մենք համապատասխան ձեւով մկրտված ենք Նրա Անունով: Նոր կտակարանում, սակայն, ոչ մի ցուցում չկա այն մասին, որ դա պարտադիր է կամ հաճելի է Աստծուն: Նա հեռացրեց Նոր Կտակարանի ոգեշնչումը, այնպես ինչպես այն գրվել էր հունարեն լեզվում, Աստծո նկատմամբ կիրառվել է միայն մեկ բառ՝ «theos», որը նշանակում է «մեծ»: Նրանում ոչ մի տարբերություն չի դրվում «Աստված» եւ «Եհովա» բառերի միջեւ: Այնտեղ չկան եւ հատուկ հրահանգներ, որ հավատացյալները իրենց պետք է անվանեն համայնք:

Հավատացյալ մարդու մասին Պետրոսն ասում է ավելի շուտ ինչպես «քրիստոնյայի», քան «մարդ Եհովայի» մասին կամ դրան մոտ ինչ -որ բառով (Ապետ Դ:16): «Եհովա» բառի ավելորդ ընդգծումը տանում է Տեր Հիսուսի գործունեության եւ վայրի արժեզրկմանը:

Բազմաթիվ «ավետարանական քրիստոնյաներ» շատ ավելի մեծ նշանակություն են տալիս Տեր Հիսուսի անվանն ու վայրին, անհրաժեշտ ուշադրություն չեն դարձնում Աստծո առավել գորավոր տեղին:

Այլ անվանումներ, որոնք նախկին կոմունայի քրիստոնյա հավատացյալները կիրառում էին իրենց նկատմամբ, չեն ներառում «Եհովա» անունը՝

- «Իսրայելի կազմակերպություն» (Եփ. Բ:12),
- «Անդրանիկների հաղթական հանդես եւ եկեղեցի» (Եբր. ԺԲ:23),
- «Տիրոջ եւ Աստծո եկեղեցի» (Գործք Ի:28),
- «Կենդանի Աստծո եկեղեցի, սյուն եւ հաստատություն ճշմարտության» (Ա Տիմ Գ:15),

- «Աստծո տուն» (Ա Տիմ 9:15):

Շեղում 3. Աստծո դրսեւորումը

Այն, ինչ կգրվի հետագայում, առաջին ընթերցմամբ դյուրին չէ լինի ըմբռնել, բայց քննարկվող հարցի կարեւորությունը առավել ակնհայտ է դառնում ձեր պարապմունքների առաջընթացի չափով: Այս հարցի քննարկումը մտցնում ենք այստեղ, որպեսզի դուք ունենաք Աստվածաշնչի հիմնական հայտնության լրիվ պատկերացումը Աստծո վերաբերյալ:

Աստծո անունը կարող է կրել յուրաքանչյուրը, ում միջոցով, որ Նա ուզում է «դրսեւորվել» կամ իրեն ի հայտ բերել: Այնպես որ, մարդիկ եւ Հրեշտակները, ինչպես եւ Հիսուսը կարող են կրել Աստծո Անունը: Դա կարելու սկզբունք է, որը բացում է մեր առջեւ Աստվածաշունչը: Օրինակ՝ որդին կարող է կրել իր հոր անունը, նա ունի որոշակի նմանություն իր հոր հետ: Նման ձեւով եւ ընկերակցության ներկայացուցիչը կարող է խոսել իր ընկերության անունից, նա կարող է զանգահարել որեւէ մեկին գործով եւ ասել՝ «Ալլո, «Ունիլեւերն է», եթե նա աշխատում է այդպիսի անուն ունեցող ընկերակցությունում, չնայած որ միսոր Ունիլեւերը չէ: Այդպես էր եւ Հիսուսի հետ:

Աստծո անունը կրող Հրեշտակներ

Ինչպես ասվում է Ելից ԻԳ:20, 21-ում, Աստված Իսրայիլի մարդկանց ասաց, որ Հրեշտակը կգնա Նրանց առջեւից: Նրանց ասվեց՝ «Իմ Անունը Նրա մեջ է»: Աստծո անձնական անունը Եհովա է: Ուստի եւ Հրեշտակն էր այդ անունը կրում եւ կարող էր իրեն կոչել Եհովա կամ Տեր: Ելից ԼԳ:20-ում ասվում է, որ մարդկանցից ոչ մեկը չի կարող տեսնել Աստծո երեսը եւ կենդանի մնալ, բայց Ելից ԼԳ:11-ում մենք կարդում ենք՝ «Եվ Տերը խոսում էր Մովսեսի հետ դեմ առ դեմ, ինչպես մի մարդ իր բարեկամի հետ կխոսի, այսինքն՝ անկաշկանդ, բարեկամական ձեւով: Դա Տերը չէր, Եհովան, Ինքն անձամբ, քանզի մարդկանցից ոչ մեկը չի կարող տեսնել Աստծուն: Դա Աստծո անունը կրող Հրեշտակ էր: Այսինքն, մենք կարդում ենք Տիրոջ մասին, որը խոսում էր Մովսեսի հետ, չնայած որ փաստացի դա Հրեշտակ էր: Կան նաեւ բազմաթիվ այլ օրինակներ, երբ «Աստված» եւ «Տեր» բառերը վերագրվել են Հրեշտակներին, այլ ոչ թե իրեն Աստծուն: Մեկ պարզ օրինակ Ծննդոց Ա:26-ից՝ «Եվ Աստված ասաց. Մեր պատկերովը... մարդ շինենք»:

Աստծո անուևսվ մարդիկ

Վերև ասվածի բացատրության համար կարելուր հատված է հանդիսանում ըստ Յովհանու Ժ:34-36-ը: Այստեղ հրեաները սխալ են գործել, որն այժմ անում են շատերը, այսպես կոչված «քրիստոնյաները»: Նրանք մտածում էին, որ Հիսուս ասել է, որ ինքն Աստված է: Հիսուսն ուղղեց նրանց, ասելով՝ «Գրված չէ՞ ձեր օրենքում՝ «Ես ասացի, դուք աստվածներ ե՞ք»: Եթե նա անվանեց աստվածներ... դուք խոսում եք (իմ մասին). անարգում եք աստծուն», քանի որ ես ասել եմ՝ «Ես Աստծո որդին եմ»: Հիսուս ճիշտ է ասում՝ «Հին Կտակարանում մարդկանց անվանում են «Աստվածներ, ես միայն ասում եմ, որ ես Աստծո որդին եմ, այդ ինչի՞նչ եք դուք այդպես վշտանում»: Հիսուսը փաստորեն մեջբերում է անում Սաղմոսի ԶԲ հատվածը, որտեղ Իսրայելի դատավորներին անվանում են «աստվածներ»:

Ինչպես ցույց էր տրված, Աստծո լրիվ անունը ինչ հրեերեն լեզվում «Յագվե Էլոհիմ» է, որը նշանակում է «Ես կբացվեմ բազմաթիվ գորավորների»: Ճշմարիտ հավատացյալները այն բազմաթիվ գորավորներն են այս կյանքում սահմանափակ իմաստով եւ առավել ամբողջական իմաստով աստվածային թագավորությունում: Այս բոլորը գեղեցիկ ձեւով ցույց է տրվում Եսայ. ԿԴ:4 եւ Ա Կոր. Բ:9 հատվածների համեմատության մեջ: «Եվ հավիտենից ի վեր չի լսված եւ ականջի չի հասած, աչք էլ չի տեսել, որ քեզանից բացի մեկ ուրիշ աստված այսպիսի բաներ աներ իրեն հուսացողներին»: Պողոսը մեջբերում է անում դա Ա Կոր. Բ:9,10-ում՝ «Այլ ինչպես գրված է. Ինչ որ աչք չտեսավ, եւ ականջը չլսեց եւ մարդի սիրտը չընկավ, այն պատրաստեց Աստված իրեն սիրողների համար»: Բայց մեզ հայտնեց Աստված Իր Յոգովը»: Եսայայի ԿԴ հատվածում ասվում է, որ Աստծուց բացի ոչ ոք չի հասկանա, թե ինչ է նա նախապատրաստել հավատացյալների համար, բայց Ա Կոր. Բ:10 պնդում է, որ այդ բոլորը բացված էր մեզ համար, այնպես որ մենք այդ իմաստով կարող ենք «Աստվածներ» լինել. ոչ թե անձամբ Աստված, այլ նրա դրսեւորումներից՝ նրա անուևսվ մկրտվելու եւ ճշմարտությունը ճանաչելու արդյունքում:

Հիսուս եւ Աստծո անունը

Չարմանալի չէ, որ Հիսուսը, որպես Աստծո Որդի եւ մարդկանց համար Նրա բարձրագույն դրսեւորումը նույնպես պետք է կրի Աստծո անունը: Նա կարող էր ասել՝ «Ես իմ Հոր անունով եկա»

(Յովհ.Ե:43): Իր հնազանդության հետեւանքով, Յիսուս համբարձվեց Երկինք եւ Աստված «Նրան մի անուն շնորհեց, որ ամենից բարձր է» (Փիլ. Բ:9) Յագվե անունը՝ Իր Աստծո անունը: Ահա թե ինչու մենք կարողւմ ենք Յիսուսի բառերը Յայտն. Գ:12-ում՝ «Ես Նրա վրա (հավատացյալի) կգրեմ իմ Աստծո անունը... եւ Իմ Նոր անունը»: Եվ Դատաստանի օրը Յիսուս մեզ կտա Աստծո անուն, այդ դեպքում մենք ամբողջովին կկրենք Աստծո անունը: Նա անվանում է այդ անունը «Իմ Նոր անունը»: Նկատի ունեցեք, որ Յիսուս իր հայտնությունը տվել է դեպի Երկինք համբարձումից մի քանի տարի անց, ինչպես այդ ասվում է Փիլ. Բ:9-ում: Ուստի նա կարող է Աստծո անունը անվանել «Իմ Նոր անունը», անուն, որ տրվել էր Նրան վերջին անգամ: Այժմ մենք կարող ենք ճիշտ հասկանալ Եսայ. Թ:6 հատվածը, որտեղ ասվում է՝ «Նրա անունը կկոչվի Սքանչելի, Խորհրդական, Յգոր Աստված, Յավիտենականության Յայր...»: Սա մարգարեություն է, որ Յիսուս կկրի Աստծո բոլոր անունները, որ նա մեզ համար կլինի Աստծո հայտնության լրիվ դրսեւորումը: Այդ իմաստով Նրան անվանել են եւ «Էմմանուել», որը նշանակում է «Աստված մեզ հետ է», չնայած անձամբ նա Աստված չէր:

Գլուխ 1. Հարցեր

1. Ամենից շատ ի՞նչն է օգնում մեզ ամրապնդել հավատն Աստծո նկատմամբ.
 - ա) Եկեղեցի հաճախելը,
 - բ) Աստվածաշնչյան աղոթքով ուսումնասիրելը,
 - գ) Քրիստոնյաների հետ զրուցելը,
 - դ) Բնությամբ հիանալը:

2. Ստորեւ բերված սահմանումներից ո՞րն է հանդիսանում Աստծո ավելի ճշգրիտ որոշիչը.
 - ա) Պարզապես գաղափարը մեր գիտակցության մեջ,
 - բ) Հոգու պոռթկումը մթնոլորտում,
 - գ) Աստված չկա,
 - դ) Իրական, նյութական անձ:

3. Աստված դա՞
 - ա) Միասնությունն է,
 - բ) Եռամիասնությունն է,
 - գ) Շատ աստվածներ՝ մեկի մեջ,
 - դ) Հնարավոր չէ՞ ինչ-որ ձեւով որոշել:

4. Ի՞նչ է նշանակում «Յագվե Էլոհիմ» Աստծո Անունը.
 - ա) Նա, որը կլինի,
 - բ) Նա, որը կդրսեւորվի գորավորների մեջ,
 - գ) Մեծ,
 - դ) Ուժ:

5. Ի՞նչ է նշանակում «Հրեշտակ» բառը.
 - ա) Մարդանման,
 - բ) Թելեր ունեցող,
 - գ) Առաքող,
 - դ) Օգնական:

6. Կարո՞ղ են արդյոք Հրեշտակները մեղք գործել:

7. Ամենից շատ ի՞նչն է ձեզ համոզում, որ Աստված գոյություն ունի:

Գլուխ 2.

Աստժո Յոգին

2.1 Աստծո Յոգին. Սահմանում

Քանի որ Աստված զգացմունքներ եւ հույզեր ունեցող իրական անձ է, ապա հարկ է սպասել, որ Նա ունի ինչ-որ միջոցներ իր ցանկություններն ու զգացմունքները մեզ՝ իր որդիների հետ կիսելու եւ ազդելու մեր կյանքի վրա իր բնույթին համապատասխանող միջոցներով: Աստված այդ բոլորն անում է իր Յոգու աջակցությամբ: Եթե մենք ուզում ենք իմանալ Աստծուն եւ ունենալ Նրա հետ ակտիվ ազգակցական կապ, մեզ պետք է իմանալ, թե ինչ է իրենից ներկայացնում այդ Աստծո Յոգին եւ ինչպես է այն գործում:

Դյուրին չէ «Յոգի» բառին տալ ճշգրիտ սահմանում: Եթե դուք վերադառնում եք, օրինակ՝ հարսանիքից, ապա կարող եք ասել՝ «Այստեղ, իրո՞ք, լավ հոգի կար»: Այդ բառերով դուք ուզում եք ասել, որ հարսանիքում լավ մթնոլորտ էր տիրում, ամեն ինչ անցավ կազմակերպված եւ ինչպես հարկն է, մարդիկ գեղեցիկ էին հագնված, սքանչելի տեսք ունեին եւ այլն: Ահա այդպիսի տարբեր պարագաներն էլ ստեղծում են հարսանիքի «հոգին»: Դրա նման, Աստծո Յոգին ամեն ինչ ընդհանրացնում է Նրա մասին: Յին հրեական բառը, որը թարգմանվում է որպես «Յոգի» Յին Կտակարանում, խստորեն ասած, նշանակում է «շնչառություն» կամ «ուժ»: Այսպիսով, Աստծո Յոգին Նրա «շնչառությունն» է, հենց Աստծո Էությունը, որն արտացոլում է Նրա բանականությունը: Մենք 5-րդ բաժնում օրինակներ կբերենք ինչ-որ մեկի գիտակցության կամ բնավորության նկատմամբ «Յոգի» բառի կիրառման վերաբերյալ:

Աստվածաշնչում ասվում է, որ մարդու մտքերը դրսևորվում են Նրա գործերում (Առակ. ԻԳ:7, Մաթ. ԺԲ:34): Մեր արարքների վերաբերյալ մի փոքր դատողությունը հաստատում է այդ: Մենք տածում ենք ինչ-որ բանի մասին, հետո այդ առնչությամբ կատարում ենք որոշակի արարքներ: Մեր «հոգին» կամ բանականությունը կարող է իր արտացոլքը գտնել արարքներում, որ ասում են այն մասին, որ մենք քաղցած ենք: Մենք խոհանոցում բանան ենք տեսնում, եւ այդժամ «հոգու» ցանկությունը իրականանում է գործողության մեջ՝ մենք ձեռք ենք մեկնում, վերցնում բանանը, հանում կեղեւը եւ ուտում ենք

այն: Այդ պարզ օրինակը ցույց է տալիս՝ ինչու է հին հրեական «Յոգի» բառը նշանակում ինչպես շնչառություն կամ բանականություն, այնպես էլ «ուժ»: Մեր հոգին, մեր եությունը վերաբերվում է մեր մտքերին եւ հետեւաբար, արարքներին, որոնք մենք կատարում ենք մեր մտքերը կամ տրամադրությունները արտահայտելու համար: Աստծո Յոգին նույն բանն է, բայց , բայց անչափելի մեծ մասշտաբում: Դա ուժ է, որի օգնությամբ ՆԱ արտահայտում է իր եությունը: Իր բնավորությունը եւ դիտավորությունը:

Աստծո ուժը

Շատ հատվածներ Աստծո Յոգին պարզորոշ նույնացնում են Նրա ուժի հետ:

Որպեսզի տիեզերքն արարվեր, «Աստծո Յոգին շրջում էր ջրերի վրա: Եվ Աստված ասաց՝ Լույս լինի. եւ լույս եղավ» (Շն. Ա:2,3): Աստծո Յոգին ուժ էր, որի օգնությամբ արարվեց ամենը (օրինակ՝ լույսը): «Նրա հոգիովը երկինքը զարդարանք է, նրա ձեռքը կազմել է փախչող Վիշապին» (Յոգ. Ի2:13): «Տիրոջ խոսքով երկինքը ստեղծվեց, եւ նրա բերանի հոգովը նրա բոլոր գործերը» (Սաղ. ԼԳ:6): Ուստի, Աստծո Յոգին նկարագրվում է որպես՝
Նրա շունչը,
Նրա խոսքը,
Նրա ձեռքը:

Հետեւաբար, դա Նրա ուժն է, որի օգնությամբ նա կատարում է ամենը: Արդ, հավատացյալները նորից են ծնվում Աստծո Կամքով (Յոգ. Ա:13), այսինքն՝ Նրա Յոգով: Նրա կամքը գործի է դրվում Յոգու միջոցով: Ամբողջ աշխարհի ստեղծման վերաբերյալ մենք կարողում ենք՝ «Յոգիդ ուղարկում ես՝ ստեղծվում ես. եւ դու նորոգում ես երկրի երեսը» (Սաղ. ԺԳ:30): Այդ Յոգի-ուժը ծառայում է ամենին հեւարան, նաեւ որպես ամենի կառուցման միջոց: Հասկանալի է, որ այս աշխարհում ողբերգական կյանքը առանց Աստծո Յոգու ակտիվ գործունեության կանի իր խախտումները: Յոգին, այն մարդուն, որը հոգնել էր այս կյանքից, մեկ այլ մարդարե հիշեցնում է՝ «Եթե նա իր վրա դարձնի իր սիրտը, իր հոգին եւ իր շունչը ժողովի իր մոտ. Ամեն մարմին միասին կմեռնի եւ մարդը հող կդառնա» (Յոգ. ԼԴ:14,15): Ընկճված վիճակում, Դավիթը խնդրում էր Աստծուն, որ նա շարունակի պահպանել իրեն իր Յոգով այն բանի համար, որպեսզի չզրկվի կյանքից (Սաղ. ԾԱ:12):

4.2 բաժնում մենք կտեսնենք, որ մեզ եւ ամեն ստեղծվածին տրված հոգին այն է, ինչը պահպանում է մեր կյանքը: Մենք ունենք «կյանքի հոգու շունչը» մեր ներսում (Շն. Է:22), ծնունդի պահին տրված Աստուծուց (Սաղ. ԾԴ:30)», Եբր. ԺԲ:9): Դա նրան դարձնում է «Տեր, բոլոր մարմնի հոգիների Աստվածը» (Թվ. ԻԷ:16, Եբր. ԺԲ:9): Քանի որ Աստված ողջ տիեզերքը պահպանող կենսական ուժ է, ապա Նրա Հոգին ներկա է ամենուր: Դավիթն ընդունում էր, որ Իր Հոգու միջնորդությամբ Աստված մշտապես Նրա հետ էր, ուր էլ որ նա մեկներ եւ, ի շնորհիվ այդ Հոգու ուժի, Նա գիտեր Նրա բանականության եւ մտքի ցանկացած անկյուն: Այսպիսով, Աստծո-Հոգին միջոց է, որի միջնորդությամբ Նա ներկա է ամեն տեղ, չնայած անձամբ Ինքը գտնվում է Երկնքում:

«Դու գիտես իմ նստելն ու վեր կենալը, հեռվից իմանում ես իմ մտածմունքները... Ո՞ւր գնամ քո Հոգիիցը. եւ քո երեսիցն ո՞ւր փախչեմ: Եթե արշալույսի թեւերն ամենեւ եւ ծովի վերջին ծայրերումը բնակվեմ, Այնտեղ էլ քո ձեռքը (այսինքն՝ Հոգու օգնությամբ) կառաջնորդի ինձ եւ քո աջը կպահի ինձ» (Սաղ. ԾԼԹ:2,7,9,10):

Այդ հարցի ճիշտ ընկալումը բացահայտում է մեզ Աստծուն որպես հզոր ակտիվ Էակի: Շատերն են մեծացել Աստծո նկատմամբ աղոտ հավատով, բայց իրականում Նրանց գլխում «Աստված» միայն գաղափար է, սեւ արկղ ուղեղի հատվածում: Աստծո ճշմարիտ ընկալումը եւ մեր շուրջը Նրա իրական ներկայությունը Նրա Հոգու միջնորդությամբ կարող է լրիվ փոխել մեր պատկերացումը կյանքի մասին: Մենք շրջապատված ենք Հոգով եւ մշտապես վկայում ենք Նրա գործունեությունը, որոնք բացում են մեզ Աստծուն: Դավիթն այդ առիթով բացականչում էր՝ «Այս գիտությունը ինձ համար զարմանալի է, բարձր, չեմ կարող հասնել նրան» (Սաղ. ԾԼԹ:6): Եվ միաժամանակ դրա իմացությամբ գալիս է եւ պատասխանատվությունը, մենք պետք է ընդունենք, որ մեր մտքերը եւ արարքները լրիվ բացահայտ են Աստծո համար: Մենք պետք է ի նկատի ունենանք դա, երբ դիտարկում ենք մեր դիրքը Նրա առջեւ, հատկապես, երբ մտածում ենք մկրտման մասին: Երեմիային ասված Աստծո վեհ խոսքերը վերաբերում են եւ մեզ՝ «Մարդ կարո՞ղ է ծածկվել ծածուկ տեղեր, որ ես Նրան չտեսնեմ, ասում է Տերը. չէ որ երկինքն ու երկիրը լցնողը ես եմ (Հոգով)»

(Երեմ. ԻԳ:24):

Սուրբ Յոզի

Մենք տեսնում ենք, որ Աստծո Յոզին լայն հասկացություն է. Նրա մասին պատկերացում կազմելու համար. դա Նրա բանականությունն է ու բնավորությունը, նաեւ ուժը, որի միջնորդությամբ Նա իր միտքը գործողության է վերածում: «Նա ինչպես որ իր սրտումը հաշիվներ անողն է՝ այնպես է» (Առակ. ԻԳ:7), այսպես, Աստված՝ դա Նրա մտքերն են, այդ իմաստով Նա Նրա Յոզին է (Յոզի. Դ:24), չնայած դա չի նշանակում, որ Աստված անձ չէ (Նայեք Շեղում 1): Որպեսզի հասնենք Աստծո Յոզու ընդարձակությանը, մենք անվանում ենք Նրան «Սուրբ Յոզի»:

«Սուրբ Յոզի» տերմինը կիրառվում է գրեթե միայն Նոր Կտակարանում: Գործք 2-ում տրվում է Սուրբ Յոզու դուրս թափվելու նկարագրությունը քարոզիչների վրա Յիսուսականների օրը: Պետրոսը դա բացատրեց, որպես Յովելի մարգարեության իրականացում, որտեղ ասվում էր «իմ (Աստծո) Յոզուց պիտի թափեմ» (Գործք Բ:17): Յին Կտակարանում «Սուրբ Յոզի» տերմինի հետ միաժամանակ օգտագործվում է համարժեք խոսք «Աստծո Յոզի» կամ «Տիրոջ Յոզի»: Ղուկասի Դ:1 հատվածում ասվում է, որ Յիսուս, «Սուրբ Յոզով լի վերադարձավ Յորդանան», հետո այդ նույն գլխում Յիսուսն ասում է այդ մասին, որպես ավետման կատարման մասին Եսայ. ԿԱ: «Տիրոջ Յոզին ինձ վրա է... Ուշադրություն դարձրեք, ինչպես է Սուրբ Յոզին նույնացվում է Աստծո ուժի հետ հետեւյալ հատվածներում՝

- «Սուրբ Յոզին կգա քո (Մարիամ) վրա, եւ Բարձրյալի զորությունը հովանի կլինի քեզ» (Ղուկ. Ա:35),

- «Սուրբ Յոզու զորությամբ... նշանների եւ զարմանալի գործերի զորությամբ, Սուրբ Յոզու զորությամբ» (Յոզ. ԺԵ:13,19),

- «Մեր ավետարանը միայն խոսքով չեղավ ձեզ, այլեւ՝ զորությամբ եւ Սուրբ Յոզով» (Ա. Թես. Ա:5),

- Առաքյալներին Սուրբ Յոզու ավետման մասին ասվում էր որպես «բարձրունքներից զորությամբ զգեստավորվելու մասին (Ղուկ. ԻԴ:49):

Հիսուսին «Աստված օծեց Սուրբ Յոզով եւ գորութեամբ» (Գործք Ժ:38):

Պողոսն իր քարոզչութիւնը կարող էր ամրապնդել Աստծո ռաւի անժխտելի դրսեւորումով՝ «Իմ եւ խոսքը եւ քարոզչութիւնը... հոգու եւ գորութեան երեւոյթի մեջ է» (Ե Կոր. Բ:4):

2.2 Աստվածաոգեշնչում

Մենք Աստծո Յոզին սահմանեցինք որպէս Նրա ուժը, միտքը, բնավորութիւնը, որոնք Նա դրսեւորում է գործողութեան մեջ իր Յոզու միջնորդութեամբ: Նախորդ բաժնում մենք նշեցինք ինչպէս էր Աստծո Յոզին ստեղծում աշխարհը՝ «Նրա հոգով երկինքը գարդարանք է» (Յոբ Ի2:13)

- Աստծո Յոզին շրջում էր ջրերի վրա, որպէսզի աշխարհ արարի (Ճն. Ա:2): Նույն ժամանակ մենք կարդում ենք, որ «Տիրոջ խոսքով երկինքը ստեղծվեցավ» (Սաղ. ԼԳ:6): Եվ «Ճննդոց գրքում Աստծո խոսքը հանդէս է գալիս աշխարհարարիչ: Ուստի Աստծո Յոզին, մեծ հզորութեամբ արտացոլվում է Նրա խոսքում, այնպէս, ինչպէս մեր խոսքերը արտահայտում են իրոք մեզ եւ բավականին ճշգրիտ: Հիսուս իմաստուն է ասել՝ «սրտի ավելացածիցը կիսոսի բերանը» (Մաթ. ԺԲ:34): Այնպէս որ, եթէ մենք ցանկանում ենք հսկել մեր բառերը, մենք նախ եւ առաջ պետք է սկսենք մեր մտքերից: Աստծո խոսքը Նրա Յոզու կամ մտքերի արտացոլքն է: Դա այնպիսի շնորհ է, որ մենք Աստվածաշնչում ունենք Աստծո խոսքերը եւ կարող ենք հասկանալ Աստծո Յոզին կամ Նրա բանականութիւնը: Աստված իր հոգու արտահայտման այդ հրաշքին հասել է գրված բառերում ԱՍՏՎԱԾԱՌԳԵՇՆՉՄԱՆ միջոցով: Այդ տերմինը հիմնված է «Յոզի» բառի վրա:

ԱՍՏՎԱԾ-ՅՈԶԻ-ՇՆՉՈՒՄ

«Յոզի» նշանակում է շունչ: «Աստվածաոգեշնչում» բառը իր նշանակութեամբ մոտ է «ոգեշնչում» բառին: Դա նշանակում է, որ Աստվածաշունչ գրողները գրել են Աստծո ոգեշնչմամբ: Եվ Պողոսն առաքյալը, Տիմոթէոսին դիմելով, կոչ էր անում Նրան չմոռանալ, որ Աստվածաշնչի հրաշքը Նրանում է, որ այն իրենից ներկայացնում է Աստծո Յոզու խոսքը եւ տալիս է մեզ ամենը, ինչ պետք է իմանալ Աստծո մասին՝

«Եվ որ մանկությունից սուրբ գրքերը գիտես, որ կարող են քեզ իմաստուն անել փրկության համար այն հավատքի ձեռով, որ Զրիստոս Յիսուսումն է: Ամեն գիրք Աստվաշունչ են եւ օգտակար վարդապետության, եւ հանդիմանության, եւ ուղղելու, եւ արդարություն խրատելու համար. Որ Աստծո մարդը կատարյալ լինի ամեն բարի գործերի համար պատրաստված» (Բ Տիմ.Գ:15-17):

Եթե Աստվածաոգեշնչված սուրբ գիրքը կարող է տալ Աստծո մասին լրիվ գիտելիք, ապա ինչ-որ «ներքին լույսի» անհրաժեշտությունը չկա, որպեսզի մեզ տա ճշմարտություն Աստծո մասին: Բայց որքա՞ն են մարդիկ ասում իրենց զգացմունքների ու անձնական փորձի մասին, որպես Աստծո իրենց իմացության աղբյուրի մասին: Եթե Աստծո ոգեշնչված խոսքի որպես հավատ ընդունումը բավարար է մարդուն իր քրիստոնեական կյանքն ամբողջովին հարստացնելու համար, ապա մեր կյանքում ցանկացած այլ բարեպաշտության որոնման կարիքը չկա: Իսկ եթե կա նման անհրաժեշտություն, ապա դա նշանակում է, որ Աստծո խոսքը լրիվությամբ չի տիրել մեզ, չնայած Պողոսն ասում էր, որ դա հենց այդպես կլինի: Պահանջվում է որոշակի հավատ, որպեսզի մեր ձեռքերում բռնենք Աստվածաշունչը եւ իմանանք, որ դա իրականում Աստծո Յոգու Խոսքն է: Իսրայելցիները հիմնավորապես հետաքրքրվում էին Աստծո խոսքի իմացությամբ, այնպես ինչպես այժմ այդ անում են շատ «քրիստոնյաներ»: Մեզ բոլորիս պետք է ուշադրությամբ վերաբերվել Պողոսի հետեւյալ խոսքերին.

«Որովհետեւ մենք էլ ենք ավետիքն ամել ինչպես եւ նրանք (իսրայելցիները անապատում). բայց նրանց օգուտ չբերեց քարոզության խոսքը, որովհետեւ չխառնվեցավ հավատքի հետ լսողների մեջ» (Եբր. Դ:2):

Աստծո Յոգու/Խոսքի ուժի լրիվ հավատքին հասնելու փոխարեն, որը մենք ստանում ենք, առավել գրավիչ է ներկայանում առավել կարճ ուղիղ հոգեւոր ուղին. մտածել, որ ավելի շուտ ինքը՝ բարեպաշտության ուժը, անսպասելիորեն կպայծառացնի մեզ եւ մեզ կդարձնի Աստծո կողմից ընդունված, քան զգալ մեր կյանքի գիտակցական մատուցման ցավը Աստծո Խոսքի հնազանդությանը եւ թույլ տալ Աստծո Յոգուն ազդել մեր

սրտերի վրա:

Աստծո խոսքում պարունակվող հսկայական հոգեւոր ուժը ընկալել չցանկանալը այն բանի արդյունքն է, որ շատ «քրիստոնյաներ» սկսեցին հարց տալ. արդյոք իսկապես բոլոր Սուրբ Գրքերը ամբողջապես ոգեշնչվել են Աստծո կողմից: Նրանք մտածում էին, որ Աստվածաշնչում գրված շատ բան իմաստուն ծեր մարդկանց անձնական կարծիքների արտահայտումն էր: Բայց Պետրոսը վճռականապես ժխտում է նման թեթեւամիտ ենթադրությունները.

«Եվ մարգարեական ավելի հաստատ խոսքն ունենք, որ եթե նրան մոիկ անենք, լավ կանենք... Բայց առաջ այս գիտցեք, որ Գրքերի ամեն մարգարեություն իր հատուկ մեկնությունը չունի: Որովհետեւ երբեք մի մարգարեություն չտրվեց մարդկանց կամքի պես, բայց Սուրբ Հոգուցը շարժված խոսեցին Աստծո մարդիկը» (Բ Պ. Ա:19-21):

Աստվածաշունչ գրողները

Ուստի Սուրբ Գրքերի ամբողջովին աստվածաոգեշնչման նկատմամբ ամուր հավատն ունի շատ մեծ նշանակություն: Մարդիկ, որ գրել են Աստվածաշունչը, գտնվում էին Հոգու ազդեցության տակ, որը նրանց ոգեշնչում էր եւ ուղղություն տալիս, այնպես որ նրանց խոսքերը իրենց սեփականը չէին: Աստծո խոսքը ճշմարտություն է (Հովհ. ԻԷ:17) եւ օգտակար է մերկացնելու եւ շտկելու համար (Բ Տիմ. Գ:16), ապա զարմանալի է, որ շատ մարդիկ խուսափում են դրանից, քանզի ճշմարտությունը ցավ է պատճառում: Առաքյալ Երեմիան մեծ դժգոհությունների էր հանդիպում, երբ արտասանում էր Աստծո կողմից ոգեշնչված խոսքեր, եւ նա որոշում ընդունեց չգրանցել եւ չհրատարակել խոսքերը, որոնք նա ստանում էր Նրանցից: Բայց քանի որ Աստծո խոսքը գրելը ավելի շուտ Աստծո կամքի արդյունք է, այլ ոչ թե մարդու ցանկության, ապա նա այլ ընտրություն չունեւ: «Ես ծաղր եմ դառել ամեն օր, ամենքը ծիծաղում են ինձ վրա... Եվ ես ասացի. «Նրան չհիշեմ, չխոսեմ այլեւս նրա անունովը»: այն ժամանակ սրտիս մեջ վառված կրակի պես դարձավ՝ ոսկորներումս պահված, եւ ես հոգնեցի կրելուցը, եւ չկարողացա (Երեմ^ժ Ի:7,9):

Դրա նման, երբ Բաաղամը լի էր վճռականությամբ Իսրայելին

անիծելու, դրա փոխարեն Աստծո Յոզիան արան ստիպեց օրհնել հարայեցիկներին (Թվոց ԻԴ:1-13, Օր. ԻԳ:5):

Չարմացնում է մարդկանց քանակը, որոնց ոգեշնչել է Աստված Իր խոսքը քարոզելու, չնայած նրանք ժամանակ առ ժամանակ չէին ցանկանում այդ անել: Ահա նրանց ցուցակը.

- Մովսես (Ելից Դ:10)
- Եզեկիել (Եզե. Գ:14)
- Եսուի (Ես. Ա:2,3)
- Պողոս (Գործք ԻԸ:9)
- Տիմոթեոս (Ա Տիմ. Դ:6-14)
- Բաաղամ (Թվ. ԻԲ:24)
- Եղիուս (Յոբ ԼԲ:6-20)

Այս բոլորը հաստատում են Բ Պետրոս Ա:19-21-ում ասված խոսքերը, որ Աստծո Խոսքը մարդկանց անձնական կարծիքի արտահայտությունը չէ, այլ աստվածաոգեշնչման արդյունքը՝ գրել այն, ինչը բացվում էր նրանց:

Մեկ այլ ապացույց էլ ծառայում է այն հանգամանքը, որ Աստվածաշունչ գրողները իրենց հաշիվ էին տալիս նրանում, որ ընդունակ չէին ընկալելու այն ամենը, ինչի մասին որ գրում էին: Նրանք «փնտրում էին» ճիշտ բացատրություն, քանզի «բաց էր ոչ թե հենց իրենց, այլ մեզ ծառայում էր այն, ինչն այժմ քարոզվում է», եւ ինչի մասին նրանք գրում էին (Ա Պ. Ա:9-12): Այն խոսքերը, որոնք նրանք փնտրում էին, փաստորեն իրենց սեփականը չէր, եւ իրենք էլ էին աշխատում ընկալել դրանց նշանակությունը: Յետագա խոսքերը ծառայում են որպես անտարակուսելի ապացույցներ. Դանիել (Դան. ԺԲ:8-10), Չաքարիա (Չաք. Դ:4-13), Պետրոս (Գործք Ժ:17):

Եթե այդ մարդիկ միայն մասամբ էին ոգեշնչված, ապա մենք չգիտենք Աստծո ճշմարիտ Խոսքը կամ Յոզիան: Եթե այն, ինչ նրանք գրում էին Աստծո Խոսքն էր, ապա դրանից հետեւում է, որ Աստվածաշունչ գրողները ամբողջովին գտնվում էին Աստծո Յոզու ազդեցության տակ, երբ գրում էին Աստվածաշունչը: Այն գիտակցությունը, որ Սուրբ Գրքի Խոսքերը ամբողջովին բխում են Աստծուց մեզ մղում է կարդալու Սուրբ Գիրքը եւ ենթարկվելու նրան: «Զո խոսքը շատ մաքրված է, եւ քո ծառան սիրում է նրան»

(Սող. ճԺԹ:140):

Այսպիսով, Աստվածաշնչյան գրքերը ավելի շուտ Աստծո աշխատանքն է, այլ ոչ թե գրողների ստեղծագործությունը: Դրան ապացույց է ծառայում նաեւ Նոր Կտակարանի վերաբերմունքը Յին Կտակարանի Գրքերին.

- «Սուրբ Գրքում ասաց Սուրբ Յոզիմ Դավիթի բերանովը...» (Գործք Ա:16: Արդ Պետրոսը մեջբերում էր անում Սաղմոսից. Եբր. Գ:7):

- «Սուրբ Յոզիմ Եսայիա մարգարեի ձեռովը մեր հայրերի հետ լավ խոսեց» (Գործք ԻԸ:25- արդ Պողոսը մեջբերում էր Եսայից): Դուկասի Գ:4-ում ավելի շուտ խոսվում է «Եսայիա մարգարեի խոսքերի գրքի», քան թե «Եսայիա մարգարեի գրքի» մասին:

Աստվածաշունչ գրողները, հին քրիստոնյաների համար կարելուր էին: Կարելուր էր այն փաստը, որ նրանց խոսքերը գրվել էին Աստծո Յոզու ոգեշնչմամբ:

Այս բաժինը կավարտենք մի շարք հատվածներով, որոնք ցույց են տալիս, որ Աստծո Յոզիմ մեր առջեւ բացվում է Նրա գրված խոսքերի միջոցով:

- Յիսուս պարզ հայտարարեց. «Այն բանը, որ ես ձեզ հետ խոսեցի, հոգի է» (Յովի. ԺԷ:8, ԺԸ:10):

- Մեզ նկարագրում են որպես Յոզուց վերածնվածների (Յովի. Գ:3-5), ինչպես նաեւ Աստծո խոսքից (Ա Պ. Ա:23):

- «... որ չլսեն օրենքը եւ այն խոսքերը, որ Չորաց Տերը իր հոգովը առաջին մարգարեների ձեռովը ուղարկեց» (Չաք. Է:12),

- «Ես իմ հոգին կթափեմ ձեզ վրա, իմ խոսքերը կհասկացնեմ ձեզ» (Առակ. Ա:23) - այս խոսքերը նույնացնում են Աստծո խոսքի ճշմարիտ ընկալումը մեր վրա Նրա Յոզու ազդեցության հետ՝ գիրքն առանց ընկալելու ընթերցումը օգտակար չէ, քանի որ Աստծո Յոզիմ/բանականությունը չեն բացվում մեր առջեւ:

Աստծո խոսքի Ուժը

Քանի որ Աստծո Յոզիմ վերագրվում է ոչ միայն Նրա

բանականությանը/ բնավորությանը, այլ նաեւ Նրա ուժին, որի միջնորդությամբ Նա արտահայտում է Իր մտքերը, ապա հարկ է սպասել, որ Նրա Հոգի-խոսքը ոչ միայն Նրա բանականության դրսեւորումն է, այլ որ Նրա խոսքում կա եւ դիւստմիկ ուժ:

Այդ ուժի ճշմարիտ գնահատումը կարող է մեզ դրդել օգտագործել այն: Շփոթության ցանկացած զգացմունք, որ կախված է նման գործողությունների հետ, կհարթեցվի մեր գիտելիքներով, որ Աստծո խոսքին հնազանդությունը մեզ ուժ է տալիս, որը պահանջվում է այս կյանքի ունայնությունից հեռանալու համար դեպի փրկություն: Իր կյանքի փորձից ելնելով Պողոսը գրում էր.

«Ես Քրիստոսի ավետարանը ամոթ չեմ համարում, որովհետեւ Աստծո գործունէն է փրկելու համար» (Յոհն Ա:16):

Ուստի Աստվածաշնչի ուսումնասիրությունը եւ Նրա կիրառումը կյանքում դիւստմիկ պրոցես է: Այն բոլորովին չի հարաբերակցվում աստվածաբանների սառը, ակադեմիական մոտեցման եւ նա- «հարմար» քրիստոնէական դավանությունների հետ, երբ մեջբերվում են Աստվածաշնչից քիչ հատվածներ, առանց փորձելու ընկալել կամ կիրառել դրանք իրենց կյանքում: «Աստծո խոսքը կենդանի է եւ զորավոր», «Իր (Աստծո) զորության խոսքով» (Եբր. Դ:12, Ա:3): «Աստծո խոսք... ներգործում է ձեզ հավատացյալներումդ» (Ա Թես. Բ:13):

Իր խոսքի միջնորդությամբ Աստված ակտիվորեն գործում է ամեն օր ամեն ժամի ճշմարիտ հավատացալիների վրա:

Ավետարանի հիմնական հայտնությունը, որը դուք ուսումնասիրում եք ուստի ամփոփվում է Աստծո ճշմարիտ ուժի մեջ, եւ եթե դուք թույլատրեք ,որ նա գործի, ապա նա կարող է ազդել ձեր կյանքի վրա եւ ձեզ վերափոխի Աստծո երեխայի, այս կյանքում Աստծո Հոգի /բանականությունը դրսեւորելով մինչեւ որոշ աստիճան եւ ձեզ նախապատրաստի Աստծո հոգեւոր բնույթին անցնելու Քրիստոսի գալստյան առթիվ (Բ Պ. Ա:4): Պողոսի քարոզչությունը եղել է «հոգու եւ զորության ապացուցողությամբ» (Ա Կոր. Բ:4):

Մենք շրջապատված ենք Աստվածաշնչի՝ որպէս Աստծո խոսքի նկատմամբ կիսահավատ մարդկանցով, չնայած Նրանք հավատացնում են Քրիստոսի նկատմամբ իրենց

սվիրվածությունը: Նման ձեռով նրանք խոսում են եւ Աստծո նկատմամբ իրենց հավատի մասին, եւ միեւնոյն ժամանակ չեն ընդունում նրա որպէս իրական անձի գոյությունը: Ժխտելով Սուրբ Գրքի աստվածագեշնչումը եւ նրա տիրապետությունը մեր անձնական զգացմունքների եւ համոզմունքների վրա, նրանք ժխտում են Աստծո գորությունը: Ընդ որում մտքով անցնում է Բ Տիմ. Գ:5 հատվածը. «Որ աստվածապաշտության կերպարանքն ունեն, բայց նրա գորությունն ուրացել են», այսինքն՝ Ավետարանի գորությունն ու խոսքը:

Աշխարհը ծաղրում է մեր հիմնավորվածությունը: Այդպես էր եւ Պողոսի ու նրա քարոզիչների հետ. «Որովհետեւ խաչի խոսքը կորածների համար հիմարություն է, բայց մեզ փրկվածներիս համար՝ Աստծո գորություն է» (Ա Կորնթ. Ա:18):

Այդ ամենը գիտակցելով, արդյո՞ք չի կարող մեզնից յուրաքանչյուրը ձեռքն առնել Աստվածաշունչը ավելի մեծ հարգանքով եւ կարգալ այն ավելի մեծ ցանկությամբ, որպեսզի ընկալի եւ հնազանդվի:

2.3 Սուրբ Յոզու պարգեւները

Աստված տարբեր ժամանակներում մարդկանց հետ իր գործերի ընթացքում նրանց էր փոխանցում իր (Սուրբ Յոզու) գորությունը: Սակայն այդ երբեք «մաքուր չեկի» տեսքով չէր արվում, մարդկանց հնարավորություն էր տրվում անել ամենը, ինչ իրենք լողում են: Սուրբ Յոզու օգտագործումը միշտ կատարվում էր որոշակի նպատակով: Իր միսիան կատարելուց հետո Սուրբ Յոզին ետ էր վերցվում: Մենք պետք է հիշենք, որ Սուրբ Յոզին գործում է Աստծո դիտավորությունը իրականացնելու համար: Իսկ նրա դիտավորությունը հաճախ մարդկանց կյանքում թույլ է տալիս կարճատեւ տառապանք, որպեսզի իրականացնի իր երկարատեւ նպատակը (նայեք բաժին 6.1): Այսպիսով, հարկ է սպասել, որ Սուրբ Յոզին պարտադիր չէ, որ օգտագործվի այս կյանքում մարդկանց տառապանքները թեթեւացնելու համար: Նրա կատարած ցանկացած թեթեւացում նպատակաուղղված է ավելի մեծ նպատակի հասնելու՝ Աստծո մտորումները մեզ արտահայտելուն:

Վերը բերված խոսքերը ուղղակիորեն հակառակ են Սուրբ Յոզու

Նկատմամբ այժմ տարածված վերաբերմունքին: Ներշնչվող միտքը, որ հավատը Քրիստոսի նկատմամբ ֆիզիկական թեթեւացում է բերում, օրինակ, հիվանդություններից բուժումը, ինչպես համարում են, կատարվում է Սուրբ Հոգով: Դրանով է բացատրվում, թե ինչու պատերազմներով բզկտված երկրներում, ինչպես Ուգանդան, նկատվում է այն մարդկանց կտրուկ աճը, որոնք պնդում են, որ իրենք օժտված են բուժման հոգեւոր շնորհով եւ, ինչպես ցույց է տալիս պատմական փորձը, նման երեւոյթները համընկնում են մարդկային կարիքների ժամանակների հետ: Դա ինքնին կասկածի տակ է դնում Հոգով օժտված լինելու այժմյան պնդումները: Եթե ինչ-որ մեկը փնտրում է մարդկային դժբախտությունը հաղթահարելու հնարավորությունը, ապա դյուրին է հաղորդել մեկ այլ շշմեցուցիչ նորության մասին:

Շատ «քրիստոնյաներ» այժմ խոսում են հրաշալի հոգեւոր շնորհների տիրապետելու մասին, բայց երբ նրանց հարցնում են, ինչ նպատակ են դրանով նրանք հետապնդում, նկատելի շփոթմունք է առաջանում: Աստված միշտ Իր Հոգին թափում էր որոշակի սահմանափակ նպատակների հասնելու համար: Դրա հետեւանքով, մարդիկ, որոնք օժտված էին հոգեւոր շնորհով, ճշգրիտ գիտեին ինչի համար են օգտագործում այն, եւ ուստի նրա կիրառման մեջ հասնում էին լիակատար հաջողության: Ի տարբերություն նրանց, այն մարդիկ, ովքեր այժմ հայտարարում են, որ իրենք օժտված են հոգեւոր շնորհով, ունեն շատ անհաջողություններ եւ հասնում են մասնակի հաջողության հիվանդների բուժման ժամանակ:

Ստորեւ բերված օրինակներում լուսաբանվում են որոշակի պատճառներ եւ նպատակներ, որոնց զորությամբ տրվում էին հոգեւոր շնորհներ: Այս դեպքերից ոչ մեկում չկար սուբյեկտիվ էլեմենտ, որ կապված լիներ շնորհին տիրապետելու հետ: Դրանցով օժտվածները չէին կարող նույնիսկ ըստ իրենց հայեցողության դրանք օգտագործել: Քանի որ մենք խոսում ենք Աստծո Հոգու մասին, ապա անմիտ է նույնիսկ պատկերացնել, որ մարդիկ կարող էին այն իրենց շահերից ելնելով ուղղորդել, քանզի նրանց այն տրվում է միայն Աստծո որոշակի ցանկությունների կատարման, այլ ոչ թե ժամանակավոր տիրապետողների հետաքրքրության համար (Եսայ. Խ:13):

- Իրենց վաղ պատմության ժամանակ իսրայելցիները հրաման ստացան սարքել բարդ խորան («աղոթարան»), որտեղ

կկարողանային պահել զոհասեղանը եւ այլ սուրբ իրեր: Մանրամասն ցուցումներ տրվել են Աստծուն երկրպագելու համար անհրաժեշտ իրերը պատրաստելու վերաբերյալ: Որպեսզի պատրաստվեր այդ բոլորը, Աստված Իր Յոգին տվեց որոշակի մարդկանց: «Որոնց ես իմաստության հոգով լցրի, որ Ահարոնի համար (սրբազան) զգեստներ շինեն...» (Ելից ԻԸ:3):

- Այդ մարդկանցից մեկը՝ Բեսելիելին « եւ լցրի նրան Աստծո Յոգով՝ իմաստությունով եւ հանճարով եւ գիտությունով եւ ամեն ճարտարությունով, որ վարպետի գործեր հնարի ոսկով եւ... քարեր քանդակի... ամեն կերպ արհեստով գործելու համար» (Ելից ԼԱ:3-5):

- Թվոց ԺԱ:14-17-ում ասվում է ինչպես Մովսեսի վրա դրված Յոգին վերցվեց նրանից եւ փոխանցվեց Իսրայելի ավագանուն, որպեսզի նրանց հնարավորություն տրվի ճիշտ դատելու մարդկային դժբախտությունները եւ դրանով Մովսեսի վրայից վերցվեց հոգսերի մի զգալի մասը: Եվ հենց Մովսեսի մահվան նախօրյակին, Յոգու շնորհը տեղափոխվել էր Յիսուս Նավինի մեջ, որպեսզի նա համապատասխան կերպով իր ետեւից տանի Աստծո մարդկանց (Օրին. ԼԴ:9):

- Ժամանակ առ ժամանակ այն պահից, երբ իսրայելցիները մտան իրենց երկիրը եւ մինչեւ նրանց առաջին թագավորի (Սաուլի) գահ բարձրանալը, նրանց ղեկավարում էին մարդիկ, որոնց անվանում էին դատավորներ: Այդ ժամանակահատվածում նրանց հաճախ էին ճնշում թշնամիները: Դատավորաց Գրքում ասվում է, որ Աստծո Յոգին իջնում էր մի որոշ դատավորների վրա, որպեսզի հրաշալի ձեւով իսրայելցիներին ազատի իրենց ճնշողներից: Այդպիսի դատավորների թվին են պատկանում մասնավորապես Գոթոնիել (Դատ. Գ:9), Գեդեոն (Դատ. 2:34) եւ Յեփթայե (Դատ. ԺԱ:29):

-Մեկ այլ դատավորի՝ Սամսոնի վրա Յոգին իջնում էր այն բանի համար, որպեսզի նա սպանի առյուծին (Դատ. ԺԴ:5,6), սպանի 30 մարդու (Դատ. ԺԴ:19) եւ պատառոտի իր վրայի պարանները, որոնցով կապված էր (Դատ. ԺԵ:14): Նման «Սուրբ Յոգին» միշտ էլ, որ իջած էր Սամսոնի վրա - նա նրան այցելում էր որոշակի նպատակների հասնելու համար եւ որից հետո ետ էր վերցվում նրանից:

- Երբ Աստված ցանկանում էր իր մարդկանց հատուկ ուղերձ փոխանցել, ապա Յոզիան իջնում էր ինչ-որ մարդու վրա և նա ազդարարում էր Աստծո հոսքը: Իսկ երբ ուղերձն ավարտվում էր, Յոզու Շնորհը թողնում էր նրան, – այդ մարդը նորից արտասանում էր իր սեփական բառերը, այլ ոչ թե Աստծո խոսքը: Բազմաթիվ օրինակներից մեկը.

«ԵՎ աստծո Յոզիան եկավ Չաքարիայի վրա...
– նրանց ասեց. Այսպես է ասում
աստված.

ինչու համար եք դուք անցնում

Տիրոջ պատվիրանքովը» (Բ.Մնաց. Ի.Դ: 20):

Այս օրինակները տրված են մնացորդաց Ժե:1,2 – Ղուկ Դ:18,19 հատվածներում:

Այս բոլորից ակնհայտ է դառնում, որ Աստծո Յոզու շնորհով օժտվածությունը որոշակի նպատակի համար չի օգտագործվել.

-փրկության երաշխիք

-ինչ որ բան,որ տ-եր ամբողջ կյանքում,

-մեր ներսում առասպելական ուժ,

-ինչ որ բան, որ անձնական փորձի զմայլվածության արդյունքում օգուտ է տալիս:

Յարկ է նկատել, որ կան բազմաթիվ կասկածելի հարցեր Սուրբ Յոզու շնորհների վերաբերյալ: Արդ որոշ մարդիկ հայտարարում են, որ իրենք Սուրբ հոգի են ստացել – շատ ավետարանչական դահլիճներում քարոզիչները ցուցադրում են գազարը, իբր թե «Սուրբ շնորհ» ստացած, այն մարդկանց առջ-, որոնք համարվում են Յիսուսին հավատացողներ: Բայց հարկ է հարց տալ. «Ինչպիսի՞ն են այդ շնորհները»: Դժվար է հավատալ, որ մարդիկ ճշգրիտ չգիտեն, թե ինչ շնորհներ իրենք ունեն: Սամսոնին տրված էր առյուծին սպանելու հոգ-որ շնորհ (Դատ ԻԴ: 5,6) այն ժամանակ, երբ նա կանգնած էր մռնչացող գազանի առջ-: Նա ճշգրիտ գիտեր, թե ինչի համար է այդ շնորհն իջել իր վրա:Այդ հաշվով նրա գլխում կասկած անգամ չկար: Սամսոնի հետ կապված այդ դրվագը կտրուկ հակադրության մեջ է մտնում այժմյան այն մարդկանց հետ, ովքեր ասում են իրենց Սուրբ Յոզի ստանալու մասին, բայց չեն կարողանում ինչ որ յուրահատուկ գործողություն անել: Ընդ որում նրանք նա- չգիտեն թե հատկապես ինչ շնորհներով են իրենք օժտված:

Որոշակիությամբ կարելի է ասել, որ չկա այլ ընտրանք ամփոփելու այն, որ նման մարդիկ իրենց կյանքում ունեցել են քրիստոնեության հետ կապված ինչ որ դրամատիկ հուզական

ցնցում – կյանքի նկատմամբ իրենց վերաբերմունքի հետագա կտրուկ շրջադարձը նրանց մեջ Լորույթի տարօրինակ զգացմունք է թողել: Գիտենալով այդ, նրանք կառչել են Աստվածաշնչի այն հատվածներից, որոնք վերաբերվում են Սուրբ Հոգու շնորհներին – ենթադրել են. «Դա այն է, ինչ ես ապրում եմ», իսկ նրանց ինքնագոհ պաստորը կաչում է նրանց ծնոտին – ասում. «Ճիշտ է: Փառ'ք Աստծու» – ցուցադրում է այնպիսի դեպք ինչպիսին «ապացույցն է», աշխատելով այլ ծիսականների համոզել, որ նրանք ստացել են Սուրբ Հոգի: Նման պարադոքսի հիմնական պատճառը մարդու մոտ տվյալ հարցի աստվածաշնչյան ընկալման բացակայությունն է նրա այսպես կոչված «հավատի անցումից» առաջ:

Այն ժամանակ երբ մենք պայքարում ենք մեր սեփական զգացմունքների խաբուսիկության դեմ (Երեմ. Ի է:9), մենք պետք է պինդ կանգնենք աստվածաշնչյան սկզբունքների ամուր հիմքի վրա: Ոչ մի բանի նկատմամբ այնպիսի ակնհայտ պահանջ չկա, ինչպես այն բանի իմացության, թե ինչպես է գործում Աստծո Հոգին: Մենք բոլորս մտածում ենք, որ Աստծո զորությունը մեր կյանքում գործում է մեզ հետ: Բայց ինչպե՞ս – ինչո՞ւ է Լա այդ անում: Իրոք մենք օժտված ենք Հոգու շնորհներով, ինչպես այն մարդիկ, որոնց մասին խոսվում է Աստվածաշնչում: Եթե մենք իրոք ցանկանում ենք իմանալ Աստծուն – ունենալ կենդանի աջակցություն նրա հետ, ապա մենք պետք է ճանաչենք այդ եր-ույթի ճիշտ ընկալման անհրաժեշտությունը:

Մ.թ.առաջին դարում շնորհներով օժտված լինելու պատճառները

Հիշելով հիմնական սկզբունքները, որոնցից մենք արդեն իմացել ենք Աստծո Հոգու շնորհների մասին, մենք այժմ անցնում ենք հոգ-որ շնորհների մասին նոր կտակարանի պատմություններին, որոնք եղել են վաղ եկեղեցիներում (այսինքն այն հավատացյալների խմբերում, ովքեր ապրում էին Հիսուս Զրիստոսից հետո):

Զրիստոսի վերջին խրատը եղել է առաքյալների համար՝ գնան աշխարհով մեկ – քարոզեն Ավետարանը (Մարկ Ի2: 15,16): Եվ նրանք վարվեցին այդպես, իրենց ունկնդիրներին նախ – առաջ քարոզում էին Զրիստոսի մահվան – հարության մասին: Բայց հարկ է նկատի ունենալ, որ այն ժամանակ չկար այնպիսի նոր Կտակարան, ինչպիսին մենք գիտենք այժմ: Այն ժամանակ, երբ նրանք շուկաներում կամ սինագոգներում կանգնած խոսում էին

Նազարեթցի Յիսուս Մարդու մասին, Նրանց պատմությունը տարօրինակ էր հնչում՝ Իսրայելցի հյուսնը, որն անբասիր էր, որը մահացավ, իսկ հետո հարություն առավ ճիշտ Յին Կտակարանի մարգարեության նման – որն այժմ խնդրում է իրենց, որ մկրտվեն – հետ–են Իր օրինակին:

Այն օրերում այլ մարդիկ –ս աշխատում էին զարգացնել հետնորդների պաշտամունքը: Նրանց պետք էր միջոց աշխարհին հաստատելու, որ քրիստոնյաների կողմից քարոզվող ուղերձը, հենց Աստուծուց է գալիս, այլ ոչ թե Իսրայելի հյուսիսիցի ձկնորսների խմբի փիլիսոփայությունն է:

Մեր օրերում մենք դիմում ենք Նոր Կտակարանի Գրքերին, որոնք ասում են Յիսուս Զրիստոսի գործերի – ուսմունքի մասին, համոզված, որ Սուրբ Գրքերն իրենցից ներկայացնում են Աստծո ուղերձը: Սակայն այն ժամանակներում, երբ Աստվածաշունչը դեռ–ս գրված չէր, Աստված թույլ էր տալիս օգտվել իր Սուրբ Յոգուց, որպեսզի հաստատի այն ճշմարտությունը, ինչ որ ասվում էր: Դա յուրահատուկ պահ է աշխարհի աչքի առջ–շնորհների օգտագործման համար, քանզի Նոր Կտակարանում գրվածի բացակայությունը նա– դժվարացնում էր հավատի ամրապնդումը Նոր հավատացյալների խմբերում: Բազմաթիվ գործնական պրոբլեմներ, որոնք ծագում էին Նրանց մոտ, պարզ լուծում չէին գտնում: Նրանց մոտ Զրիստոսի նկատմամբ իրենց հավատն ուժեղացնելու քիչ հնարավորություն կար: Ուստի Սուրբ Յոգու շնորհները վաղ հավատացյալների ղեկավարության համար ներկայացվում էին աստվածադատչության ուղերձների միջոցով, մինչ այն ժամանակը քանի դեռ այդ ուղերձները – Յիսուս Զրիստոսի ուսմունքը չգրվեցին – չիրատարակվեցին: Ինչպես միշտ, Սուրբ Յոգու իջնելու պատճառները առավելագույնս չափով պարզ էին:

-«Սորա համար «(Յիսուս) վեր ելավ բարձրը...– մարդկանց պարզ–ներ տվեց»...Սուրբերի կատարելության համար, պաշտոնի գործի համար, Զրիստոսի մարմնի շինության համար», այսինքն հավատացյալների (Եփ. Դ:8, 12):

-Արդ Պողոսը գրում է Յոմեացի հավատացյալներին. «Որովհետ–շատ ցանկանում եմ ձեզ տեսնել, որ մի հոգ–որ շնորհք հաղորդեմ ձեզ ձեր հաստատելու համար» (Յոմ Ա:11):

Ավետարանի քարոզչությունը հաստատելու համար շնորհների օգտագործման վերաբերյալ մենք կարդում ենք.

- «Մեր ավետարանը ձեզ մոտ չեղավ միայն խոսքով, այլ-գորությունով – Յոգով Սրբով – շատ լիությունով» կատարվող հրաշքների միջնորդությամբ (Ա.Թես.Ա:5, Ա.4որ.Ա:5,6):

-Պողոսը կարող էր ասել այն, ինչ «Քրիստոս գործեց ինձանով հեթանոսները հնազանդեցնելու համար՝ խոսքով – գործով: Նշանների – հրաշքների գորությունով, Աստծո հոգիի գորությունով» (Յոհն ԺԵ: 18,19):

-Ավետարանը քարոզողների վերաբերյալ մենք կարծում ենք, որ նրանք գործում էին «Աստված էլ միասին վկայեց նշաններով – հրաշքներով, – կերպ կերպ գորություններով, – Սուրբ Յոգու պարզ-ներովն ինչպես ինքը կամեցավ» (Երբ Բ:4):

-Կիպրոսում Ավետարանի քարոզչության կամպանիան ուղեկցվում էր հրաշքներով, այնպես որ «փոխնորդ բղեշխն երբ որ տեսավ այդ եղածը, հավատաց, – Տիրոջ վարդապետության վրա զարմացավ» (Գործք Ժգ:12): Յրաշքներն իրոք նրան հավատացրին Քրիստոսի ուսմունքը: Իկոնիոնում նույնպես Տերը «վկայում էր իր շնորհաց խոսքին. – նշաններ – հրաշքներ էր լինել տալիս նրանց ձեռովը» (Գործք Ժդ:3):

Այս բոլորը կարելի է ընդհանրացնել քարոզչության խրատների նկատմամբ առաքյալների հնազանդության մասին հետ-յալ խոսքերով. «Նրանք էլ դուրս գնացին, ամեն տեղ քարոզում էին, – Տերը գործակցում էր նրանց – խոսքը հաստատում էր այն նշաններով, որ հետ-ում էին» (Մկ Ժ2:20):

Յատուկ ժամանակներում հատուկ գործեր

Այդ շնորհները տրվում էին որոշակի ժամանակներում տարբեր արարքներ իրագործելու համար: Դրանք ցույց են տալիս այն մարդկանց սխալները, ովքեր հավատացնում են, որ ողջ կյանքի ընթացքում մշտապես տիրապետել են հրաշալի շնորհին: Առաքյալները, ներառյալ – Պետրոսը, «ամենքը Սուրբ հոգով լցվեցան» Պենտեկոստեյի օրը, Յիսուսի համբարձումից անմիջապես հետո (Գործք Բ:4): Ուստի նրանք կարողանում էին խոսել ուրիշ լեզուներով, որպեսզի քարոզեն քրիստոնեական Ավետարանը հրապուրիչ ձ-երով: Երբ իշխանությունները փորձեցին խստորեն մոտենալ նրանց «այն ժամանակ Պետրոսը

Սուրբ Հոգով լցված» կարողացավ համոզիչ պատասխանել նրանց (Գործք Դ:8): Բանտից իր ազատվելուց հետո, գտնվելով Հոգու ազդեցության տակ, նրանք շարունակում էին քարոզչությունը – «ամենքը Սուրբ Հոգով լցվեցան – Աստծո հոսքը խոսում էին համարձակությամբ» (Գործք Դ :31):

Ուշադիր ընթերցողը հավանական է կնկատի – կասի, որ հատվածներում չի ասվում, որ «նրանք արդեն լցված էին Հոգով», երբ կատարում էին այդ արարքները: Նրանք լցված էին Հոգով որոշակի արարքներ կատարելու, բայց պետք է նորեն լցվեին Հոգով, որպեսզի իրագործեին Աստծո ծրագրի հետագա գործերը: Նման ձևով, – Պողոսը «լցվեց Սուրբ հոգով» մկրտման ժամանակ, բայց մի քանի տարի անց նա նորից պիտի «լցվեր Սուրբ Հոգով», որպեսզի պատժեր անօրեն մարդուն կուրությամբ (Գործք թ:17, Ժգ :9):

Խոսելով հրաշալի պարգևների մասին, Պողոսը գրում էր, որ վաղ հավատացյալները օժտված էին նրանցով «Քրիստոսի պարգևի չափի պես» (Եփ. Դ:7): Հունական «չափ» բառը նշանակում է «որոշակի մաս կամ աստիճան» (Ստրոնգի այբբենական ցուցանիշով): Միայն Հիսուսն էր օժտված անչափելի շնորհներով, այսինքն իր հայեցողությամբ լիակատար ազատությամբ այն կիրառելու (Հովհ.Գ:34):

Այժմ կդիտարկենք մ.թ.առաջին դարում առավել հաճախ նշվող տիրող հոգ-որ շնորհները:

Մարգարեության հոգ-որ շնորհները մ.թ.առաջին դարում

Հունական «մարգարե» բառը նշանակում է «մարդ, որ կանխագուշակում է Աստծո հոսքը», այսինքն ցանկացած մարդ, ոգեշնչված ասում է Աստծո խոսքը, որոնք ժամանակ առ ժամանակ պարունակում են ապագա իրադարձությունների կանխագուշակումը (Նայ.Բ.Պետ.Ա:19-21): Այսպիսով, մարգարեները կանխագուշակման շնորհիվ օժտված մարդիկ են՝ «Երուսաղեմիցը մարգարեներ իջան Աստիոք: Եվ նրանցից մեկն անունն Աբագոս վեր կացավ՝ Հոգովն իմաց տվավ, թե բոլոր աշխարհքի վրա մեծ սով է լինելու, որ Կողոփոս կայսեր ժամանակին եղավ էլ: Բայց աշակերտներն որոշեցին, որ իրանցից ամեն մեկին, որքան որ կարող էր, օգնություն ուղարկե Հրեաստանումը բնակված եղբայրներին» (Գործք ԺԱ:27-29): Նման բացառիկ յուրահատուկ մարգարեությունը, որն ամբողջովին կատարվեց մի քանի տարիների ընթացքում, այժմ

բացակայում է այն մարդկանց մեջ, ովքեր խոսում են մարգարեության շնորհով իրենց օժտված լինելուց: Մի-ևույն ժամանակ վաղ հավատացյալները համոզված էին, որ այդ շնորհը գտնվում է իրենցից մեկի մեջ, որ զոհաբերել են իրենց ժամանակն ու փողերը այն մարդկանց օգնություն ցույց տալու համար, ովքեր կանխագուշակված դժբախտության մեջ կհայտնվեն: Ոչ այնքան մեծ թվով օրինակների կարելի է հանդիպել այժմյան այսպես կոչված «ասվածաոգեշնչված» եկեղեցիներում:

Բուժում

Առաքյալները քանի որ քարոզում էին լավ նորություններ (Ավետարան) Երկրում Աստծո թագավորության գալստյան մասին, ապա ինքնաստիքյան հասկանալի է դառնում, որ նրանք իրենց խոսքերը պետք է հաստատեին հրաշքներով, որոնք պատկերացում կտային, թե ինչպիսի ժամանակներ կլինեն, երբ «բացվելու են կույրերի աչքերը, – խուլերի ականջները պիտի բացվեն: Այն ժամանակ լոք է տալու կաղը...» (Եսայի: 5,6): Աստծո Թագավորության մասին մանրամասն կխոսվի Գլուխ 5-ում: Երբ երկրի վրա հաստատվի Աստծո Թագավորությունը, այնպիսի խոստումներ, ինչպիսին սրանք են չեն կատարվի կիսատ-պռատ, նա– հարց չի լինի այն մասին, որտեղ կլինի Թագավորությունը՝ այստեղ թե էլի ինչ որ տեղ: Ուստի այդ Թագավորության մասին ուղերձի Աստծո հրաշալի հաստատումը պետք է կատարվի համոզիչ, որոշակի ձ-ով, որը բացասի ցանկացած հակասություն: Ուստի շատ հրաշալի բուժումներ վաղ հավատացիալները կատարում էին ժողովրդի առջ-:

Դասական օրինակ է աղքատ կաղի բուժումը Պետրոսի կողմից, որին ամեն առավոտ բերում էին նստացնում տաճարի առաջ մուրալու: Գործք Գ:2-ում ասվում է, որ նրան նստացնում էին ամեն օր, այնպես որ նա հայտնի անձ էր: Պետրոսի հոգ-որ շնորհով բուժվելով նա «վեր թռավ, կանգնեց – ման էր գալիս, – նրանց հետ մտավ տաճարը ման գալով – վազ տալով – Աստծուն օրհնելով: Եվ բոլոր ժողովուրդը տեսավ նրան, որ ման էր գալիս – Աստծուն օրհնում էր: Եվ ճանաչում էին նրան, որ սա էր, որ ողորմության համար նստում էր տաճարի գեղեցիկ դռանը – լցվեցան երկյուղով – զարմանքով այն եղածի համար: Եվ քանի որ այն բժշկված կաղը Պետրոսին – Զովհաննեսին բռնած էր, բոլոր ժողովուրդը վազեց նրանց մոտ այն սրահը.. զարմացած»

(Գործք Գ:8-11):

Պետրոսն այդ ժամ խոսակցությունը սկսեց բաց տարածքում Զրիստոսի հարության մասին: Կատարելով համոզիչ, անժխտելի ապացույց աղքատի բուժման տեսքով, մենք կարող էինք համոզված լինել, որ Պետրոսի խոսքերն ընդունվում էին լսողների կողմից որպես Աստծո հոսք: Տաճարն «Աղոթքի ժամին» (Գործք Գ:1) լցված էր մարդկանցով, ինչպես առ-տրի սրահը շաբաթ առավոտյան: Դա այն տեղն էր, որն Աստված ընտրեց որպեսզի տպավորիչ - պարզ հրաշքով Իր հոսքի քարոզումը հաստատի: Բուժողների՝ պենտեկոստալցիների (հիսունականների) - նրանց նմանների, սովորական հավաստիացումները կատարվում են այն իրադարձությունների շուրջը, որոնք կատարվում են որ-է ուրիշ ոչ մեծ եկեղեցիներում կամ «հավատացյալ» հասարակության առջ-, որ տոչորվում են «հրաշքի» սպասելով, այլ ոչ թե անպատրաստ անսիրտ հասարակության առջ-:

Չարկ է ասել, որ այս տողերի հեղինակը բավականին փորձ ունի մարդկանց հետ նման հարցերի քննարկման մեջ, որոնք պնդում են, որ իրենք օժտված են Չոգով. նա նա- շատ անգամ ներկա է եղել այդ Չոգու դրս-որման այսպես կոչված սեանսերին: Սակայն իմ «անձնական վկայությունը» բազմաթիվ անհամոզիչ «բուժումներին» - լավագույն դեպքում մասնակի բուժումներին արժանի չեն շատ խոսքերի: Ստածում եմ, որ այդ եկեղեցիների ցանկացած ազնիվ անդամ համամիտ է իմ խոսքերին: Շատ դեպքերում իմ բարյացկամ ընկերներին՝ «Պենտեկոստալ» կրոնական կազմակերպության անդամներին, ասում եմ. «Ես չեմ ուզում չհավատալ, որ դուք, հնարավոր է, օժտված եք այդպիսի մեծ զորությամբ: Բայց Աստված միշտ պարզորոշ ցույց է տալիս, թե ով է օժտված Իր զորությամբ - ով ոչ»: Այնպես որ ինձ անմտություն չի թվում ձեզ խնդրել ինձ վրա ցուցադրել ձեր ընդունակությունը, այդ դեպքում, հնարավոր է, որ ես ավելի հակված կլինեմ ընդունել ձեր ուսմունքը, որը ներկայումս չեմ կարող համատեղել Ավետարանի հետ: Սակայն, երբեք էլ ինձ պարզորոշ չցուցադրեցին «հոգու զորության դրս-որումը»:

Ի տարբերություն իմ վերաբերմունքի մ.թ.առաջին դարի օրթոդոկսալ խրայելցիները չէին ժխտում քրիստոնյաների Աստծո Չոգու հրաշալի շնորհին տիրապետելու հնարավորությունը: Նրանք նույնիսկ հետ-յալ

խոստովանությունն էին անում. «Եր-ելի նշան եղավ սրանց ձեռովը, որ Երուսաղեմի մեջ բոլոր բնակվողներին հայտնի է, – կարող չենք ուրանալ» (Գործք Դ:16): Այն փաստը, որ մարդիկ առավել հակված են այժմյան պենտեկոստալցիներին, ինչ որ չափով համաձայնեցվում է նրանց կատարած հրաշքների մասին նրանց հաստատումների հետ: Այս հարցն արժանի է առավել ուշադիր քննարկման: Եթե Երուսաղեմում միայն մեկ հրաշք հայտնի դարձավ, ապա արդարացի կլինի ենթադրել, որ եթե իսկական հրաշք կատարվեր Լոնդոնի Տրաֆալգյան հրապարակում կամ Նեյրոբիի (Քենիա) կենտրոնական զբոսայգում, ապա դա համաշխարհային ճանաչում կգտներ՝ որոշ մարդիկ օժտված են Աստծո հրաշալի շնորհով: Դրա փոխարեն, պենտեկոստալցիները սպասում են, որ աշխարհը հիանա ի օգուտ իրենց հավատի բերված «ապացույցների» հետ-յալ օրինակներով.

-Ստամոքսի խոցի բուժում (որոշակի հանգամանքների դեպքում) համարվում է, որ բուժման պրոցեսը սկսվում է աղոթածողովից հետո;

-Սկսվում է դեֆորմացված օրգանների ուղղումից;

-Տեսողության կամ լսողության բարելավում, չնայած հաճախ լինում է նախկին վերադարձ վիճակին;

-Ընկճվածության հանում:

Այս օրինակներին հարկ է ավելացնել –ս մեկը: Երբ շտապ օգնության ավտոմեքենաները հիվանդանոցների հիվանդներին բերում են Օսբորնի կրոնական բուժական կենտրոն (Քենիա), ապա վարորդների առջ- էթիկական երկընտրանք է առաջանում՝ մնալ թե վերադառնալ, – եթե մնացել են, ապա վկայել են, որ հիվանդները ոչ մի թեթ-ացում չեն ստացել:

Այդուհանդերձ բազմաթիվ ազդեր մարդկանց կոչ են անում գնալ բուժողների ներկայացումներին. «Եկե՛ք հրաշքի սպասելով»: Զոգեբանի տեսակետից բեմը սարքավորվում է այնպես, որ թեթ-ացնի ցանկացած տեսակի ներշնչանքի կամ այլնի անցկացումը: Բայց Նոր Կտակարանում ոչ մի տեղ փոքր ականարկ անգամ չկա հրաշքի կատարման նման հզոր

հոգեբանական ազդեցության անհրաժեշտության վերաբերյալ:

Նման հոգեբանական մշակումը հասանելի է դառնում աղոթքի անհիմաստ կրկնությամբ, թմբուկային ռիթմերով – գրգռիչ երաժշտությամբ: Փոքր կասկած անգամ չկա, որ այդ ժամանակ բացակայում է Աստծո մասին կամ Էլի ինչ որ բանի մասին ցանկացած միտք. գլխում ամենը լռեցվում է: Այդ գիրքը գրողը կարող է հիշել տարբեր տեղերում մի քանի նման ժողովներին այցելությունը, – ամեն անգամ նրա գլուխը կտորատվում էր այն պայքարից, որ նա տանում էր թմբուկային ռիթմին – ծափահարություններին անձնատուր լինելու գայթակղության դեմ, պահպանելու համար ռացիոնալ, հավասարակշիռ, ավետարանչական գիտակցությունը:

Այդ բոլորը տալիս են անհրաժեշտ ներածական պենտեկոստալյան «հրաշքի» համար – ծառայում են որպես բավականաչափ հաստատում, որ նման «բուժումները» ավելի շուտ հուզական – հոգեբանական վիճակի արդյունք է, քան Աստծո Հոգու անմիջական դրս-որում:

Ի տարբերություն դրա, Պետրոսը կարող էր կիրառել հրաշքի ճշմարիտ շնորհը հիվանդների բուժման համար այն ժամանակ, երբ նրանք պառկած էին անկողիներում – փողոցներում մահճակալների վրա (Գործք Ե:15); Պողոսը հրաշալի շնորհը կիրառեց Լիստրա քաղաքում անհավատ իշխանավորի – բազմաթիվ հեթանոսների ներկայությամբ (Գործք Ժ7:8-13): Ինչպես որ պահանջվում էր ըստ նպատակի – հոգ-որ շնորհի բնույթի, այդ բոլոր հրաշքները կատարվում էին հասարակության առջ – ոչ մի ձ-ով չէին քողարկվում ուրիշ ցույցերով: Դա Աստծո զորության ճշմարիտ դրս-որում էր, որը բացահայտորեն իրականացվում էր նրա ծառաների միջոցով:

Նման տպավորություն ստեղծվել էր Քրիստոսի կողմից կատարված բուժման մի հրաշքից. «Ամենքը զարմանում էին (ով տեսել է այն) – Աստծուն փառավորում ասելով, թե երբեք այսպիսի բան չենք տեսել» (ՄԿԲ:12):

Լեզուներ

Առաքյալները, որոնցից մի քանիսը հասարակ ձկնորսներ էին, ստացել էին մեծ հրահանգ գնալ աշխարհով մեկ – քարոզել Ավետարանը (ՄԿ ԻՉ :15,16): Ամենայն հավանականությամբ, նրանց առաջին ռեակցիան եղել է այսպիսին. «Բայց չէ որ ես

լեզուներ չգիտեմ»: Նրանք չէին կարող նույնիսկ ասել. «Դպրոցում մեզ լեզուներ չեն ուսուցանել», քանզի նրանք, ընդհանրապես դպրոց չեն հաճախել: Նրանց ամբողջ տեսքն ասում էր, որ «առանց ուսմունքի – տգետ մարդիկ են» (Գործք Դ:13) Եվ նույնիսկ առավել ուսյալ քարոզիչների համար (օրինակ՝ Պողոսի) լեզվի պրոբլեմը բավականին նշանակալից էր: Երբ հավատքի էին դարձնում, (Նոր Կտակարանի բացակայությամբ) լեզուներ չիմանալը վճռական նշանակություն ունեցավ քարոզները վարելու համար:

Այդ դժվարությունը հաղթահարելու համար նրանց վրա իջավ օտար լեզուներով խոսելու – ընկալելու շնորհ (կամ ավելի պարզ ասած «բարբառներով»): Ակնհայտ է, որ մեծ տարբերություն կա «բարբառների» – նրա միջ-, թե ինչպես էին «նորածին քրիստոնյաները» կարդում իրենց քարոզները անորոշ ինչյունների միջնորդությամբ, որ կոչվում է «բարբառ»: Որպեսզի պարզություն մտցվի այս գործի մեջ, հարկ է նշել, որ «բարբառ» բառի աստվածաշնչյան սահմանումը նշանակում է «օտար լեզուներ»:

Աստված, կամ գիտելիք Աստծո մասին: «Աստծո Սերը» – «Քրիստոսի սերը» (Ա.Յովհ.Դ:9,Գ:17; Բկորն. Ե.:14) կարող են նշանակել սեր, որ մեր նկատմամբ տածում են Աստվածը – Յիսուսը, կամ սեր, որ մենք ենք տածում նրանց նկատմամբ: «Աստծո Խոսքը» կարող է նշանակել Աստծո մասին խոսք կամ խոսք, որ գալիս է Աստուց: Ուստի Սուրբ Յոզու պարզ-ը կարող է վերաբերվել պարզ-ին, որը Սուրբ Յոզին դարձնում է հնարավոր – որի մասին նա ասում է, – նա- պարզ-ին, որը կազմված է Սուրբ Յոզու ուժերից:

Ներումը՝ Յոզու պարզ-:

Յոզում Ե:16 – Զ:23 փրկությունը նկարագրվում է որպես «պարզ-», ընդ որում ինքնաբերաբար առաջանում է համեմատություն «Յոզու պարզ-» բառի հետ Գործք Բ:38 հատվածում: Իրականում Բ:39 հատվածում, ըստ եր-ույթին, բերվում են փրկության վերաբերյալ Յովելի Բ:32-ից բառեր, կարծես թե դա Յոզու պարզ- է: Պետրոսը վկայակոչում է խոստացված պարզ-ը այն «հեռավորներին» համաձայնեցվում է Եսայ.ԾԷ:19 բառերի հետ «խաղաղություն, խաղաղություն (Աստծո հետ ներման միջոցով) լինի հեռուներին»: Եփ.Բ:8 հատվածում պարզ-ը – ս նկարագրվում է իբր փրկություն, իսկ մի քանի տող ներք-ում ասվում է. «Վասնզի նրանով երկուսս մեկ Յոզով ունենք մոտենալը Յոր մոտ» (Բ:18): Դա հաստատվում է – այն փաստով, որ Եփ. Բ:13-17 հատվածը համաձայնեցվում է Եսայ. ԾԷ:9 հատվածի հետ. «դուք որ ժամանակով հեռավոր էիք, մոտավոր եղաք Քրիստոսի ատյանովը: Վասնզի նա է մեր խաղաղությունը.. – եկավ, ավետարանեց խաղաղություն ձեզ հեռավորներին» – մոտավորներին»:

Եսայ. Լ:1 հատվածում իսրայելցիները դատապարտվում են ոչ թե Աստծո շնորհով, այլ իրենց սեփական ուղիով ներում փնտրելու համար. նրանք «դաշինք են կապում, բայց ոչ թե իմ հոգովը, որպեսզի շատացնեն (ոչ թե վերացնեն) մեզք մեզքի վրա»: Եսայ.խդ:3 հատվածում Իսրայելի թողության վերջին օրը նկարագրվում է հետ-յալ բառերով. «Որովհետ- ջուր պիտի թափեմ ծարավի վրա, – հեղեղներ՝ չորության վրա (հոգ-որ ունայնություն- Ես.Ծգ:2), ես պիտի թափեմ իմ հոգին քո սերունդի վրա, – իմ օրհնությունը՝ զավակների վրա»: Աբրահամի սերնդի օրհնությունը կատարվում է Քրիստոսի միջոցով (Գործք Գ:25,26), որը համեմատվում է իսրայելցիների –

Յոգու թափվելու հետ: Այստեղ հստակ ընկալվում են Յոգել 2 – Գործք 2 հատվածները: Գաղ.Գ:14 հատվածում այս բոլորն ընդհանրացվում է այսպիսի բառերով. «որպեսզի Աբրահամի օրհնությունը (թողությունը) Զրիստոս Յիսուսով լինի հեթանոսների վրա – որպեսզի Սուրբ Յոգու խոստումը մենք ընդունենք հավատով»: Ա.Կոր.2:11-ում ասվում է «Աստծո Յոգով» մեր մեղքերի մաքրման մասին: Յոգմեացիներին ուղղված ուղերձում նշվում է «շնորհ..հաշտություն..Յոգի» ստացողների միջ- հավասարությունը (Ա:5,Ե:11, Ը:15), դրանով ցույց տալով Յոգու պարզ-ի («շնորհ») – թողության միջ- կապը, որը տանում է հաշտության: Դժվար է վերագնահատել Նոր Կտակարանի լեզվի – Յին Կտակարանի գաղափարների արտահայտչականությունը, նկատի ունենալով, որ նրա առաջին ընթերցողները եղել են իսրայելցիները, – հաշվի առնելով այն ազդեցությունը, որ նրանց վրա ցուցաբերում էին առաքյալների ուղերձները: Յնգամատյանում – Յետուի գրքում ոչ մեկ անգամ ասվում է Աստծո խոստման մասին՝ տալ իր ժողովրդին, երկիր՝ «երկիր, որ կտա քո Տեր Աստվածը քեզ ժառանգություն»: Այս տողերին հաճախ ենք հանդիպում Յին Կտակարանում: Նոր Կտակարանում «երկիր» բառի փոխարեն օգտագործվում է «փրկություն բառը, հետ-աբար, այժմ Աստծո շնորհը հեռանկարանային է, անշուշտ, մեղքերի թողության հետ կապակցված»:

Պետրոսը հրեաներին խնդրում էր ապաշխարել, մինչ- շնորհ ստանալը, իսկ դա մղում էր անձնական աղոթք կարդալու: Թվում է, թե հիմք կա հավատալու, որ Յոգու շնորհը աղոթքին տրված պատասխանի նկարագրման միջոց է: Աղոթքի ժամանակ «խնդրող-ներին բարի պարզ-ներ» տալը նույնն է, ինչ որ Սուրբ Յոգի (պարզ-) տալն է(Մաթ.Ե:11, Ղուկ.ԺԱ:13): Փիլ.Ա:19-ում միանշանակ ասվում է «փրկության համար՝ ձեր աղաչանքներով – Յիսուս Զրիստոսի Յոգու շնորհով»: Ա.Յոգ.Գ:24 հատվածում նույնպես ասվում է, որ Յոգին մեզ է տրվում պատվիրանների մեր հնազանդության արդյունքում, իսկ 22 հատվածում նշվում է, որ նրա պատվիրանների պահպանումը հանգեցնում է նրան, որ մենք ստանում ենք այն, ինչ խնդրում ենք: Այսպիսով մեր վստահությունը պայմանավորված է նրանով, թե ինչպես է Աստված լսում մեր աղոթքները (Ա.Յոգի. Ե:14), նա- Յոգու օժտվածությամբ (Ա. Յոգի. Գ:21, 24, Դ:13): Ինչպես տեսնում ենք այս արտահայտությունները համապատասխանում են մեկ մեկու:

Հունական «charis» բառը, որը հաճախ թարգմանվում է որպես «շնորհ», հաճախ է օգտագործվում Աստծո պարգ-ի կապակցությամբ: «Այլ հավատում ենք, որ Տեր Հիսուս Քրիստոսի շնորհովը (պարգ-ով) կփրկվենք» (Գործք ԺԵ:11): Միաժամանակ «շնորհ» բառը հաճախ կապվում է աղոթքին տրված պատասխանի հետ (օրինակ՝ Ելից.ԼԳ:12,ԼԴ:9; Թվոց ԼԲ:5; Սաղ.ԸԴ:11;Բ.Կոր.ԺԲ:9; Եբբ.Դ:6): Չաք.ԺԲ:10 հատվածում ասվում է իսրայելցիների վրա «շնորհքի - աղոթքի հոգին» թափվելու վերջին օրվա մասին: Դրանով ընդհանրացվում է մեր միտքը, որ աղոթքը Հոգու պարգ-ը ստանալու պատճառ է ծառայում թողության իմաստով - որ Հոգու հանձնարարումը կատարվում է աղոթքին ի պատասխան, որ հաստատվում է առաջին դարում - վերջին օրերին իսրայելցիների ապաշխարման օրինակով: Այդ իմաստով էլ Պողոսն ասում է ապաշխարելու - ներելու «Աստծո պարգ-ների - կոչերի » մասին (Հռոմ ԺԱ:29):

Մխիթարիչ

Նման մոտեցումը կարող է լինել Մխիթարիչի խոստման վերաբերյալ, որը նկարագրվում է Հովհ.ԺԴ - ԺԶ գլուխներում: Սկզբնական շրջանում այն վերաբերվում էր հրաշալի ուժերին, որոնք տրվում էին առաքյալներին, քանզի նրանք առաջնահերթ էին խոստում ստանում: Այն կարող է - մեզ վերաբերվել սովորական, ոչ հրաշալի իմաստով: Առաքյալներին տրվող հրաշալի ուժերը, պետք է որ, թեր-ս, նրանց աջակցեն Ավետարանի ուղերձները գրելուն: Պարգ-ները պետք է «ձեզ ամեն բան ուսուցանեն - հիշեցնեն այն ամենը, ինչ ես ասացի ձեզ» (Հովհ.ԺԴ:26): «Հիշեցնել» բառը ինքնին սահմանափակում է առաքյալներին Մխիթարիչի խոստման մեջ հրաշալի տարրի սահմանները, ովքեր ապրում էին Հիսուսի հետ նրա առաքելության ժամանակ: Միաժամանակ, ինչպես մենք ցույց ենք տվել 2.5 բաժնում, «Մխիթարիչի» խոստումների լեզուն կիրառելի է նա- ամբողջ Աստվածաշունչը գրող ուժի նկատմամբ: Մենք կարող ենք եզրակացնել, ուստի, որ այդ, ինչպես նա- Հոգու ուրիշ խոստումներ կատարվել են հրաշքների տեսքով մ.թ.առաջին դարում, բայց այժմ նրանք մեզ վերաբերվում են որպես Հոգու դրս-որում Աստծո խոսքի մեջ, որը գրված է Աստվածաշնչում:

Անշուշտ ճիշտ է, որ Աստծո Հոգին անցյալում բացվում էր գրավոր խոսքի միջոցով, բայց դա միայն մասնակի

հայտնություն էր համեմատած այն լիարժեքության («կատարյալի») հետ, որը մենք այժմ ունենք ամբողջությամբ գրված Աստծո հոսքում (Ա.Կոր.ԺԳ:9-13): Դրանից հետ-ում է, որ չէին կարող լինել Նոր Կտակարանի ավարտումով, շնորհները վերցնելուց հետո Աստուց եկող ուրիշ հայտնություններ: Մորմոսների Գրքում – ուրիշ նմանատիպ հրատարակություններում պարունակվող հաստատումներն այն մասին, որ Աստվածաշունչը իրենից լրիվ հայտնություն չի ներկայացնում, զուրկ են հիմնավորվածությունից: Այժմ Յոզու պարգ-ների բացակայությունը հաստատում է, որ Աստվածաշունչը լրիվ է գրված: Եվ, եթե մենք ցանկանում ենք օգտագործել Աստծո հայտնության ողջ լիարժեքությունը, ապա մենք պետք է օգտագործենք նրա յուրաքանչյուր հատվածը, ինչպես Յին, այնպես էլ Նոր Կտակարանից: Միայն այդ դեպքում Աստծո մարդը կարող է այնպես ամբողջական լինել, ինչպես Աստծո լրիվությունն է, որը եր-ան է գալիս նրա հոսքում:

Շեղում 8.«Նրանց էլ, որ հավատացին, այն նշանները կհետ-են» (ՄԿ.ԺԶ:17)

Այս խոսքերից հետ-ությունն է արվում, որ ցանկացած անկեղծ հավատացյալ կստանա հրաշալի պարգ-ներ: Բայց դա հաստատում է շատ ավելին՝ «Օձեր վեր կանեն, – եթե մի մահադեղ խմեն, նրանց վնաս չի տալ. հիվանդների վրա ձեռք կդնեն, – նրանք կառողջանան» (Մկ.Ժգ:18): Դա այն խոստումը չէ, որը կարող էր տեսականորեն կատարվել, եթե հավատացյալը բավականաչափ հավատ ունենար; դրանք իրական խոստումներ էին այն մասին, թե ինչ պիտի անեն հավատացյալները: Եթե նման հրաշքներ այժմ չեն կատարվում, ապա այդ հատվածի խոստումը ներկայումս չի կարող տարածվել մեզ վրա: Դուք կարող եք հիշել, թե ինչպես էր Պողոսը ձեռքում պահում թունավոր օձին – այդ ընթացքում չխայթվեց (Գործք ԻԸ:3-7): Դա այն բանի հաստատումն է, որ նրա քարոզչությունը Աստծուց էր:

Բոլոր աստվածաոգեշնչված քրիստոնյաներից, որոնք հայտարարում են, որ օժտված են շնորհներով, վերջին հարյուրամյակում ոչ ոք իրականում չհաստատեց այդպիսի ուժերի կիրառումը: Եթե յուրաքանչյուր հավատացյալ չի կարող այդպիսի մեծության նշաններ ստեղծել, ապա այդ խոստումը

այժմ չի իրականանա: Դա հաստատում է մեր ենթադրությունը, որը մենք կատարեցինք Յոզու վերաբերյալ Աստվածաշնչի ընդհանուր ամփոփումից: Այդ հրաշալի պարզ-ներով օժտված էին մ.թ.առաջին դարի վաղ քրիստոնեության հավատացյալները, բայց Յոզու այդ պարզ-ները դադարեցրին իրենց գործունեությունը – ետ վերցվեցին, երբ ավարտվեցին Նոր Կտակարանի Սուրբ Գրքերը:

Մկ.16 գլխի վերջին հատվածը հիմք է տալիս մտածելու, որ հավատացյալներին «ուղեկցող» հրաշքները հատուկ նախասահ-մանված էին Ավետարանի բանավոր խոսքի հաստատման համար. «Նրանց էլ, որ հավատացին, այս նշանները կհետ-ենՆրանք գնացին, ամեն տեղ քարոզում էին, – Տերը գործակցում էր նրանց – խոսքը հաստատում էր այն նշաններովը, որ հետ-ում էին» (ՄԿ.Ժ2:17,20):

Բայց հենց որ այդ բանավոր խոսքը լրիվ գրվեց, որը մենք այժմ ունենք հանձինս Նոր Կտակարանի, անհայտացավ հրաշալի նշանների անհրաժեշտությունը, որպեսզի գնան հավատացյալների հետ-ից:

Ծանոթագրություն . Սուրբ Յոզով օժտվածության հաստատումներն այժման տարածված են, որ 1989 թվին տեղի ունեցան երկու հասարակական քննարկումներ Աստվածաոգեշնչված քրիստոնյաների պաստոր Ջոն Լայլիկասի – երկու Կրիստադեֆիականների՝ Ջոն Ալլաֆրիի – ներկայիս տողերի հեղինակի, միջ-:Քննարկման թեման էր.«Արդյոք այժմ կա՞ն Սուրբ Յոզու հրաշալի շնորհներով օժտվածներ»: Յրավիրատոմսեր ուղարկվեցին բազմաթիվ եկեղեցիների՝ ողջ Բրիտանիայով մեկ: Արդյունքում լսարանում 1000 մարդուց ավելին կար:

Յարկ է ընդունել, որ ներկայացվել էր ներկայիս շնորհներով օժտվածության ամենալավագույն «ապացույցը»: Արձանագրության պատճենը կարելի է ստանալ հետ-յալ հասցեով.

The Dawn Book Supply, 49 The Woodfields, South Croydon, Surrey CR2 0HJ ENGLAND

Գլուխ 2 Հարցեր

1. Ստոր- բերված բառերից ո՞ր մեկն է գուգորդվում «Հոգի» բառի հետ
 - ա) Ուժ
 - բ) Սուրբ
 - գ) Շունչ
 - դ) Փոշի

2. Ինչ է Սուրբ Հոգին:
 - ա) Անձ
 - բ) Ուժ
 - գ) Աստծո ուժ, ուղղորդված որոշակի նպատակ իրականացնելու համար
 - դ) եռամիության մաս

3. Ինչպե՞ս է գրվել Աստվածաշունչը
 - ա) Մարդիկ գրառում էին իրենց սեփական մտքերը:
 - բ) Մարդիկ գրում էին այն, ինչ որ մտածում էր Աստված:
 - գ) Մարդկանց աստվածաոգեշնչման միջոցով, Աստծո հոգով
 - դ) Նրա մի մասը աստվածաոգեշնչված էր, մյուս մասերը այդ-պիսին չէին:

4. Ստոր- բերված հաստատումներից որո՞նք են ցույց տալիս այն պատճառները, թե ինչու՞ էին թափվում Հոգու պարգ-ները:
 - ա) Որպեսզի հաստատեն Ավետարանի բանավոր քարոզչությունը
 - բ) Վաղ եկեղեցիների ավելի լայն տարածման համար
 - գ) Որպեսզի ստիպեն մարդկանց լինել բարեպաշտ
 - դ) Որպեսզի առաքյալներին փրկեն դժվարություններից

5. Որտեղի՞ց կարող եք իմանալ Աստծո ճշմարտության մասին:
 - ա) Մասամբ Աստվածաշնչից, մասամբ սեփական մտածողության ուղիով
 - բ) Սուրբ Հոգուց, որն անմիջականորեն մեզ է ասում, բացի այդ, որ մենք կարդում ենք Աստվածաշունչը
 - գ) Միայն Աստվածաշնչից
 - դ) Զահանաներից

6.Անվանենք Յոգու մի քանի շնորհներ, որոնք գոյություն ունեն
մ.թ.առաջին դարում:

7.Եր՞բ են նրանք ետ վերցվել: Կարելի՞ է արդյոք այժմ դրանք
ունենալ:

8.Ինչպե՞ս կարող է գործել Սուրբ Յոգին այժմ մեր կյանքում:

Գլուխ 3

Աստծո խոստովանելը

3.1 Աստծո խոստումները: Ներածություն

Այսպիսով, պարապունքների ընթացքում մենք բավականին մանրամասնորեն խոսեցինք Աստծո էության – Նրա գործերի մասին: Մենք ճշգրտեցինք մի շարք դժվար հարցեր: Այժմ մենք կաշխատենք անաչառ դիտարկել այն, ինչը «Աստված իրեն սիրողներին խոստացել է » (Հակոբ 1:12; 2:5) Նրա պատվիրանների պահպանման համար (Հովհ. 14:15):

Աստծո խոստումները Հին Կտակարանում իրենցից ներկայացնում են ճշմարիտ քրիստոնեական հույս: Ամենապատասխանատու պահին, երբ որոշվում էր Նրա ճակատագիրը դատարանի առջև, Պողոսը խոսում էր ապագայի պարզ-ներից՝ որոնց համար նա պատրաստ էր կորցնել ամեն ինչ իր կյանքում.» ես հիմա ատենանք կեցեր կը դատուիմ Աստծմե մեր հայրերուն եղած խոստումին լոյսին համար«. (Գործք Առաք. 26; 6;7): Նա իր կյանքի մեծ մասն անցկացրեց ուրախ լուրեր քարոզելով (Ավետարան). «Հայրերին տված խոստումը», որը Աստված կատարեց, հարություն տալով Հիսուսին (Գործք Առաք.): Պողոսը բացատրում էր, որ Հավատքը Աստծո խոստմանը, տվել է իրեն մեռելներից հարություն առնելու հույսը (Գործք Առաք. 26:6-8 23:8), Հիսուսի երկրորդ գալստյան մասին տեղեկությունը, դատաստանի – Աստծո Արքայության հաստատումը (Գործք Առաք. 24:25; 28:20,31):

Այս ամենը թաքցնում է առասպելն այն մասին, որ Հին Կտակարանը Իսրայելի պատմությունից պատահներ են միայն, որը չի խոսում հավերժական կյանքի մասին: Աստծո որոշումը 2000 տարի առաջ՝ հավերժական կյանքի մասին Նրա խոստումների մասին անսպասելի չէր Հիսուսի միջոցով: Այդ մտադրությունը Նա ուներ ի սկզբանե.

«Յավիտանական Կեանքի յույսով, որ անսուտն Աստուած խոստացած է դարեր առաջ: Եվ իր ժամանակին իր խոսքին քարոզութեամբ յայտնեց, որ ինձի յանձնուեցամ մեր Փրկիչ Աստծոյ հրամանովը (Տիտոս 1:2,3):

« Սկիզբեն էր Բանը ու Բանը Աստուծոյ քով էր – Բանը Աստուած էր: Անիկա սկիզբեն Աստուծոյ քովն էր»: (1Հովհաննու ավ. 1:2)

Նկատի ունենալով, որ Աստծո մտադրությունը՝ իր կողմից մարդկանց հավերժական կյանք տրամադրելու մասին, կար Նրա մոտ աշխարհի ստեղծման սկզբից, մենք քիչ հավանական ենք համարում, որպեսզի նա 4000 տարվա մարդկանց հետ շփվելու ընթացքում լռություն պահպանած լիներ, որի մասին խոսվում է Հին Կտակարանում:

Փաստորեն Հին Կտակարանը լցված է մարգարեություններով – խրատներով, որոնցից յուրաքանչյուրը տալիս է բավականաչափ մանրամասնություններ այդ հույսի մասին, որը Աստված պատրաստել էր իր մարդկանց համար: Դրա համար, մեր փրկության համար կար–որ է Աստծո խրատները հասկանալը, որոնք տրված են հրեա հայրերին. առավել –ս, որ Պողոսը հիշեցրեց Եփեսոսի հավատացյալներին այն մասին, որ մինչ այն, երբ նրանք կիմանան այդ մասին, «որ այն ատեն դուք առանց Զրիստոսի էիք ու հեռացած էիք Իսրայելի Յասարակութենեն – օտարացած՝ խոստումին ուխտերեն ու յոյա մըն ալ չունեիք – աշխարհի մեջ անաստված էիք» (Եփ.2:12): Քիչ հավանական է, որ նրանց հեթանոսական հին հավատքը կտար նրանց Աստծո մասին գիտության ինչ-որ հույս: Դրանում է կայանում Աստծո խոստումների նշանակության լրջությունը, որոնց մասին խոսվում է Հին Կտակարանում - փաստորեն. «չունենալ հույս – այս աշխարհում լինել անաստված»: Հիշենք, որ Պողոսը որոշում էր քրիստոնեական հույսը «Աստծումե մեր հայերուն եղած խոստումին հույսին համար»: (Գործք Առաք. 26:6)

Ցավ է առաջացնում այն փաստը, որ միայն շատ քիչ քանակությամբ եկեղեցիներ են ուշադրություն դարձնում Հին Կտակարանի այդ մասերին: «Զրիստոնեությունը» այլասերվել էր կրոնի, որը հիմնված էր Նոր Կտակարանի վրա, բայց – այդ դեպքում նա օգտագործում է նրանից քիչ քանակությամբ հատվածներ: Հիսուսն այդ մասին շատ պարզ ասում է այսպես.

«Եթե Մովսեսին ու մարգարեներուն մտիկ չեն ըներ, ուրեմն մեռելներեն մեկը յարություն առնելու ալ ըլլայ, պիտի չհամոզուին» (Ղուկ.16:31):

Որոշ մարդիկ համարում էին, որ իրենց համար բավական էր միայն հավատը Հիսուսի հարության նկատմամբ (Ղուկ. 16:30), բայց Հիսուսն ասաց, որ դա բավարար չի առանց Հին Կտակարանի հիմնավոր իմացության:

Հիսուսը բացատրեց, որ իր խաչելությունից հետո առաքյալների

հավատքի կորուստը նրանց անուշադիր վերաբերմունքն էր Հին Կտակարանի նկատմամբ:

«Ան՝ ալ ըսավ անոնց. Ով անմիտներ – թուլասիրտներ, հավատալու ան բոլոր բաներուն, որոնք մարգարեները խոսեցան. Չէ՞ որ Քրիստոս պետք էր այս չարչարանքները կըրեր – իր փառքը մտներ»: Ու սկսելով Մովսեսն ու քոլոր մարգարեներեն, կը մեկնէր անոնց, ինչ որ իրեն համար քոլոր Գրքերուն մեջ գրուած էր: (Ղուկ. 24: 25-27)

Ուշադրություն դարձրեք Նրա ընդգծումներին, որ ամբողջ Հին Կտակարանը խոսում է Նրա մասին: Բանը նրանում չէ, որ մարգարեները երբեք ոչ կարդացել – ոչ էլ լսել էին Հին Կտակարանի բառերը, բայց նրանք չէին հասկանում Նրա առավել խորն իմաստը: Ճշմարիտ հավատի ամրապնդման համար անհրաժեշտ է Աստծո խոսքի ճիշտ ընկալում, քան Նրա թեթ-ակի ընթերցումը: Հրեաները Հին Կտակարանի ընթերցումներին մոտենում են ֆանատիկորեն (Գործք Առաք 15:21), բայց քանի որ նրանք չէին հասկանում Նրա վերաբերմունքը Հիսուսի նկատմամբ – նրա Ավետարանի, ապա փաստորեն չէին հավատում Հին Կտակարանին, –, դրա համար, Հիսուսն ասաց նրանց.-

« Վասն զի եթե դուք Մովսեսի հավատացիք, ինձի ալ պիտի հավատայիք, քանզի անիկա ինձի համար գրեց: 47. Բայց եթե անոր գրածներուն չեք հավատար, իմ խոսքերուն ի՞նչպես պիտի հավատաք» (Հովհ. 5:46-47):

Չնայած բոլոր նրանց Աստվածաշնչի ընթերցումներին, նրանք չէին տեսնում Հիսուսի մասին իրական լուրերը, չնայած որ, նրանց դուր չէր գալիս պարտադիր փրկման գաղափարը: Հիսուսը պետք է ասեր նրանց.

«Գրքերը քննեցեք, վասն զի դուք անոնցմով կը սեպեք հավիտենական կեանքը ունենալ, – բուն անոնք են, որ ինձի համար կը վկայեն» (Հովհ. 5:39):

Այսպիսով, շատ մարդիկ ունեն մակերեսային պատկերացումներ Հին Կտակարանի որոշ տեղերի – դրույթների մասին, քանի որ նրանց գիտելիքները ձեռք են բերվել Գրքի էջերի պատահական ընթերցումներից: Քրիստոսի – Ավետարանի զարմանալի

խոսքերը Աստծո Արքայության մասին նախկինի նման հեռանում են նրանցից: Սույն գլխում փորձ է արվում դուրս բերել այդպիսի մարդկանց նմանատիպ վիճակից Հին Կտակարանի հիմնական խրատների իրական իմաստի բացահայտման ճանապարհով.

- Եղեմյան այգում,
- Նոյին տրվածը,
- Աբրահամին,
- Դավիթին:

Այդ խրատների նկարագրությունը կա Աստվածաշնչի առաջին 5 գրքերում (Մտղ. Օրինաց), որոնք գրվել էին Մովսեսի – Հին Կտակարանի մարգարեների կողմից: Զրիստոնեական ավետարանի բոլոր մասնիկները բերված են այստեղ: Պողոսը բացատրում է, որ իր քարոզչությունը ոչինչ չէր բան չի մտցնում, «բացի նրանից, ինչի մասին մարգարեները – Մովսեսը ասում էին, որ դա կլինի, այսինքն, որ Զրիստոսը կչարչարվի –, մեռելներից առաջինը հարություն առնելով, ժողովրդին կլուսավորի» (Գործք Առաք. 26:22,23): Եվ իր վերջին օրերին Պողոսի երգը մնաց մի-նույնը « Օր մը որոշելով, շատեր գային իր բնակած տեղը, որոնց Աստուծոյ թագավորություն կը ծանուցաներ վկայությունով – կը համոզեր զանոնք Յիսուսին վրայով Մովսեսին օրենքին ու մարգարեներեն սորվիլ, առավոտեն մինչ իրիկունս»: (Գործք Առաք. 28:23)

Մեծագույն քրիստոնյա Պողոսի հույսը մեր հույսը պետք է լինի այնպես, ինչպես նա կար՝ փառավոր լույս, նրա կյանքի թունելի վերջում, այն պետք է լինի յուրաքանչյուր լուրջ քրիստոնյայի մեջ: Այս օրինակով ոգ-որվելով, մենք հիմա կարող ենք «հետազոտել Սուրբ Գիրքը»:

3.2 խրատները Եղեմում

Ծննդոց գրքի 3 գլխում բերված է մի սրտառուլ պատմություն տղամարդու անկման մասին: Օձը անիծվեց այն բանի համար, որ սխալ մեկնաբանեց Աստծո խոսքը – Եվային գայթակղության մղեց այդ խոսքին չենթարկվելու: Չենթարկվելու համար տղամարդը – կինը պատժվեցին: Բայց այս մութ նկարի վրա ընկնում է հույսի ճառագայթը, երբ Աստված ասում է օձին.

«Զու – կնոջ մեջտեղ, քու սերունդիդ ու անոր սերունդին

մեջտեղ թշնամություն պիտի դնեմ: Այն քու գլուխդ պիտի ջախջախե – դուն անոր գարշապարը պիտի խայթես»: (Շննդոց 3:15)

Այս հատվածը շատ կարճ – ազդու է. մենք կաշխատենք տալ որոշ բառերի պարզաբանում, որոնք մտնում են դրանց մեջ: «Սերմ» բառի տակ կարելի է հասկանալ երեխա կամ սերունդ, բայց դա նա– կարող է վերաբերվել մարդկանց, որոնք կապված են որոշակի «սերունդի» հետ: Հետագայում մենք կտեսնենք, որ Աբրահամի «սերունդ» հանդիսանում էր Հիսուսը (Գաղատ. 3:16), բայց եթե մենք դառնում ենք Քրիստոսի «մեջ» մկրտվելու ճանապարհով, ապա մենք էլ ենք դառնում «սերունդ» (Գաղատ. 3:27-29): «Սերմ» բառը նույնպես արտահայտում է սերունդի գաղափարը (Պետրոս 1:23): Ճշմարիտ սերմերն ունեն իրենց հոր բնութագրերը:

Օձի սերմը (սերունդը) վերաբերվում է, դրա համար, այն սերմին, որը օձի հետ ունի ազգակցականություն, այն.

- խեղաթյուրում է Աստծո խոսքը,
- խաբում է,
- ուրիշներին մեղքի է մղում:

6-րդ գլխում մենք կտեսնենք, որ բառիս բուն իմաստով նկատի էլի առնվում այն մարդը, որն անում է այդ, բայց կա մեր ներսում .

- «մեր հին մարդը» մարմին (Հռովմ. 6:6)
- «հոգ–որ մարդը» (Կորն. 2:14)
- «հին մարդը, խաբեբա ցանկություններով ապականված» (Եփ. 4:22)
- «հին մարդը իր գործերով» (Կող. 3:9)

Մեր մեջ գտնվող մեղքի «մարդը» հենց աստվածաշնչային «հրեշն» է՝ օձի սերունդը:

Կնոջ սերմերը նշանակում են հատուկ անհատական անձ– «Դու (օձի սերմը) պետք է խայթես նրա գարշապարը» (Շննդոց. 3:15): Այդ մարդը անընդհատ կավերի օձի սերմերը, այսինքն, մեղքը ՎՆ նա «քու գլուխդ պիտի ջախջախե»: Օձի գլխին հասցված հարվածը նշանակում է մահացու հարված, քանի որ նրա սիրտը գտնվում է գլխում: Միակ մարդը, որը հավակնում է կնոջ սերունդներին, հանդիսանում է մեր Տեր Հիսուս Քրիստոսը :

«Բայց հիմա յատնուեցավ մեր Փրկչին Յիսուս Զրիստոսին եր-ալովը (խաչի վրա), որ մահը խափանեց -, հետ-աբար, մեղքի ուժը՝ (Յոժով 6:23), - լուսավորեց կեանքը ու անմահությունը ավետարանին միջոցով»:(2 Տիմ. 1:10)

«Աստուած իր Որդին դրկելով մեղանշական մարմնի նմանութեամբ ու մեղքի համար - դատապարտեց մեղքը այն մարմնին մեջ»:(Յոժով. 8:3)

Յիսուսը «հայտնվեց, որպեսզի իր վրա վերցնի մեր մեղքերը» (1 Յովհ. ավ. 3:5):

«Անոր անունը Յիսուս(որ նշանակում է «փրկիչ ») պիտի դնես, քանզի անիկա իր ժողովուրդը իրենց մեղքերն պիտի փրկե» (Մատթեոս. 1:21)

Յիսուսը բառացիորեն ծնվեց կնոջից (Գաղատ. 4:4), և Մարիամի որդին էր, բայց Նրա հայրը Աստվածն էր: Այսպիսով, ևս կնոջից է սերվում, բայց ծնվում է Աստծուց այնպես, ինչպես երբեք ոչ մի մարդ դեռ-ս չի ծնվել: Կնոջ սաղմը ժամանակավոր կարող է վնասվել մեղքի զգացումով, օձի սերմերով, - «դու պիտի խայթես Նրա գարշապարը» (ծննդոց. 3:15): Օձի խայթոցը գարշապարին ընդհանրապես իրենից ներկայացնում է ժամանակավոր վերք Նրա գլխին հաստատուն հարվածների հետ համեմատած: Շատ արտահայտություններ մեր բարբառում ունեն աստվածաշնչյան արմատներ. այսպես. «ջախջախի Նրա գլուխը» (այսինքն լրիվ վերջացրու կամ կանգնեցրու ինչ-որ մի բան), հավանաբար հիմնվում է Յիսուսի օձի գլխին խփելու մարգարեության վրա: Օձի սերմերի մեղքի դատապարտումը, իրագործվել էր Նախ - առաջ Զրիստոսի խաչելության միջոցով: Ուշադրություն դարձրեք, վերը նշված հատվածները խոսում են Յիսուսի հաղթանակի մասին անցյալ ժամանակով: Ժամանակավոր վերքը, որը հասցվել է Յիսուսի գարշապարին, հետ-աբար, Նրա մահվան վկայությունն է երեք օրվա ընթացքում: Նրա հարությունը հաստատեց, որ դա ժամանակավոր վերք էր մահացու հարվածի համեմատ, որը ևս հասցրեց մեղքին: Յետաքրքիր է նշել, որ ոչ աստվածաշնչային պատմական տեղեկությունները ցույց են տալիս, որ խաչելության զոհերը փայտյա սյունին գամվում էին մեխերով գարշապարից: Այսպիսով, Յիսուսը «խայթված էր

գարշապարից» իր մահվան միջոցով: Յեսուայ 53:4,5 հատվածները ասում են, որ Քրիստոսը «խոցվել էր» Աստծո կողմից խաչի վրա իր մահվան միջոցով: Սա անմիջականորեն վերաբերվում է Ծննդոց 3:15-ի մարգարեությանը, որը ասում է Քրիստոսի՝ օձի սերմերով խայթվելու մասին: Աստված արարում էր չարի միջնորդությամբ, որը Քրիստոսին էր վիճակված փորձել: Այն այստեղ նկարագրվում է որպես չար ուժերի ղեկավարումով, Քրիստոսին տանջանքների ենթարկող (Յեսուայ 53:10), որոնք տանջում էին Նրա Որդուն: Այս կերպ Աստված արարում է չարի միջնորդությամբ՝ փորձի ենթարկելով իր որդիներից յուրաքանչյուրին:

Այսօրվա կոնֆլիկտ

Ձեր մոտ կարող է հարց առաջանալ. «Եթե Հիսուսը խորտակեց մեղքը – մահը (օձի սերմերը), ապա ինչու՞ այդ եր-ույթները մինչ-այժմ գոյություն ունեն»: Պատասխանը կայանում է նրանում, որ խաչի վրա Հիսուսը խորտակեց մեղքի ուժն իր մեջ. Ծննդոց 3:15-ի մարգարեության մեջ ամենից առաջ ասվում է Հիսուսի – մեղքի միջ- կոնֆլիկտի մասին: Այժմ այդ նշանակում է, որ քանի որ Քրիստոսը հրավիրում է մեզ միանալ իր հաղթանակին, ապա ի վերջո մենք նույնպես կարող ենք հաղթել մեղքին – մահվանը: Չնայած մեղքին – մահին ենթարկվում են նա- ճշմարիտ հավատացյալները կնոջ սերմի հետ իրենց կապի միջոցով Քրիստոսով մկրտվելու միջնորդությամբ (Գաղատ. 3:27-29), նրանք կարող են իրենց մեղքերի ներումն ստանալ – վերջիվերջո կփրկվեն մահից, որը մեղքի արդյունք է:

Այսպիսով, Հիսուսը խորտակեց մահվանը խաչի վրա հեռանկարում (2Տիմ. 1:10), – միայն այն դեպքում, երբ Աստված իր մտադրությունը Երկրի հետ կիրազործի Հիսուսի հազարամյա թագավորության վերջում, մարդիկ փաստորեն կդադարեն մեռնելուց՝ մահը կանհայտանա Երկրի երեսից. «Վասն զի անոր պետք է թագավորություն ընկնել՝ մինչ- բոլոր թշնամիները իր ոտքերուն տակ դնել: Վերջին թշնամին, որ պիտի խափանի՝ մահն է» (Ա. Կորն. Ժե 15:25,26):

Եթե մենք «մկրտվենք Քրիստոսով», ապա Հիսուսի մասին խոստումները, ինչպես Գ.Ծննդոց 3:15 ՎՆ ում, նա- կվերաբերվեն մեզ անձամբ: Այսուհետ դրանք Աստվածաշնչի հետաքրքիր տեղեր չեն լինի. այդ խոստումները – մարգարեությունները արվել են անմիջականորեն մեզ համար: Ինչպես կնոջ սերունդը՝

մենք նույնպես կզգանք մեղքի հաղթանակը մեր նկատմամբ շատ կարճ ժամանակով: Եթե Տերը չվերադառնա մեր կյանքի ընթացքում, մենք նույնպես կխայթվենք գարշապարից, ինչպես դա տեղի ունեցավ Հիսուսի հետ – նույնպես կմեռնենք: Բայց, եթե մենք իրականում կնոջ սերունդն ենք, ապա այդ «վերքը» կլինի միայն ժամանակավոր:

Այն մարդիկ, որոնք մկրտվում են Քրիստոսով ջրի մեջ խորասուզվելով, կապում են իրենց Նրա մահվան – հարության հետ, որը խորհրդանշվում է ջրից դուրս գալով (Հռովմ. 6:3-5)

Եթե մենք իսկապես կնոջ սերուն ենք, ապա մեր կյանքը կանդրադարձնի Ծննդոց 3:15-ի բառերը, անընդհատ բախման զգացողություն («պայքարի») կլինի մեր ներսում, ճշմարիտի – ոչ ճշմարիտի միջ-: Մեծագույն առաքյալ Պողոսը նկարագրել է համարյա շիզոֆրենիայի համնող բախումը իր – մեղքի միջ-, որը իր մեջ էր փոթորկվում: (Հռովմ. 7:14-25)

Հիսուսով մկրտվելուց հետո այդ բախումը մեղքի հետ, որը բնականորեն տեղի է ունենում մեր ներսում, կմեծանա – կշարունակի աճել մեր բոլոր օրերում: Մի կողմից այն դժվարին է, որովհետև – մեղքի ուժը մեծ է: Բայց, մյուս կողմից, այդ պայքարը այնքան էլ նշանակալից չէ, քանզի մենք գիտենք, որ մենք Քրիստոսի մեջ ենք, որն արդեն պայքարել – հաղթել է այդ բախմանը: Ուշադրություն դարձրեք, որ հավատացյալները նկարագրվում են որպես կին Եփեսացու 5:23-32 հատվածներում, այսինքն, հանդիսանալով կնոջ սերունդը, մենք նույնպես կարծես թե կին ենք:

Այսպիսով, ինչպես կնոջ սերունդը իրենից ներկայացնում է Հիսուսին, ինչպես նա – այն մարդկանց, որոնք փորձում են ունենալ նրա բնութագիրը, այնպես էլ օձի սերմերը իրենցից ներկայացնում են մեղք, (աստվածաշնչային «հրեշի»), – այն մարդկանց, որոնք բացեիբաց ցուցադրում են օձի – մեղքի բնութագիրը: Այդպիսի մարդիկ կարհամարհեն կամ կխեղաթյուրեն Աստծո խոսքը – վերջիվերջո դա նրանց կմտցնի մեղքի ամոթի մեջ, – կհանգեցնի Աստծուց օտարացման, որը – տեղի ունեցավ Ադամի – Եվայի հետ: Ջանի որ հրեաները այն մարդիկ էին, որոնք փաստորեն Հիսուսին բերեցին մահվան, այսինքն, խայթեցին գարշապարից, կնոջ սերմը, ապա հարկ է ենթադրել, որ նրանք օձի սերմի առաջին օրինակներն էին: Դա

հաստատվում է Հիսուսի – Հովհաննես Մկրտչի կողմից.

«Երբ տեսավ փարիսեցիներեն – սադուկեցիներեն շատեր (հրեաների խմբին, որոնք դատապարտեցին Հիսուսին), որ իր մկրտությամբ եկած էին, ըսավ. «Իժեր՝ու ծնունդներ, ո՞վ իմացուց ձեզի գալու բարկութենեն փախչիլ»: (Մատթեոս 3:7)

«Յիսուս (փարիսեցիների) խորհուրդները իմանալով ըսավ անոնց...
Իժեր՝ու ծնունդներ, ի՞նչպես կրնաք բարի խոսիլ, որ չար եք» (Մատթեոս 12:25:34):

Աշխարհը, նույնիսկ կրոնական աշխարհը, ունի օձի նման բնութագրեր: Միայն մարդիկ՝ մկրտված Հիսուսով, միացած են կնոջ սերմով, մնացած բոլորը, տարբեր աստիճաններով, ներկայացնում են իրենցից օձի սերմերը: Ստոր- կբերվեն օրինակներ, թե ինչպես էր Հիսուսը վերաբերվում մարդկանց հետ, որոնք օձի սերունդն էին.

- Նա քարոզում էր նրանց սիրո – իսկական կարեկցության հոգով միաժամանակ
- Նա թույլ չէր տալիս, որ նրանց մտքերը – ճանապարհները ազդեն իր վրա, –
- Նա ցույց տվեց նրանց Աստծո սիրող բնութագիրը իր կյանքի օրինակի վրա:

Եվ չնայած դրան, նրանք ատում էին Նրան: Նրանք խանդում էին Նրա անձնական ջանքերին՝ Աստծուն խոնարհ լինելու: Նույնիսկ Նրա սերունդները (Հովհ. 7:5; Մարկոս 3:21) – մոտիկ բարեկամները (Հովհ. 6:66) նրան արգելքներ էին ստեղծում, իսկ մի քանիսն էլ նույնիսկ հեռացան Նրանից ընդմիջտ: Պողոսը կրեց նույն բանը – բողոքում էր նրանց, ովքեր մեկ անգամ եղել են իր հետ բոլոր հանգամանքներում.

«Մի՞թե ես ձեզ թշնամի եմ, ասելով ձեզ ճշմարտությունը»: (Գաղատ. 4:16)

Ճշմարտությունը երբեք հանրամատչելի չի լինում. գիտենալով այն – ապրելով այնպես, ինչպես մենք պարտավոր ենք ապրել, մենք միշտ մեզ համար որ-է պրոբլեմ ենք ստեղծում, որը մեզ հանգեցնում է նույնիսկ հետապնդումների.

«Բայց ինչպես այն ատեն մարմնի կողմանե ծնածը կը

հալածեր զանիկա, որ հոգիին կողմանէ Էր, (Աստծո
Խոսքի ճշմարիտ իմացութեամբ-1 Պետ.1-23) նույնպէս ալ
հիմա »: (Գաղատ. 4:29)

Եթէ մենք իսկապէս միացել ենք Քրիստոսի հետ, ապա մենք
պետք է փորձենք Նրա մի բանի չարչարանքներից այնպէս,
որպէսզի մենք կարողանանք բաժանել Նրա փառավոր պարգ-ը:
Եվ նորից Պողոսը մեզ տալիս է անգերազանցելի օրինակ.

«Այս խոսքը հավատարիմ է, վասն զի եթէ անոր հետ
մեռանք, անոր հետ (Քրիստոսի) պիտի ապրինք ալ: Եթէ
համբերենք, անոր հետ պիտի թագավորենք ալ... Ուստի
ամեն բանի կհամբերեմ» (Տիմ. 2;11;12):

«Եթէ զիս (Յիսուսին) հալածեցին, ձեզ ալ պիտի
հալածեն...: Բայց այս ամենը պիտի ընեն իմ անուանս
համար» (Յովհ. Ավ. 15:20,21):

-այսինքն, քանի որ մենք մկրտված ենք Տեր Յիսուսի անունով
(Գործք. Առաք. 2:38; 8:16):

Այդպիսի հատվածներ կարողալով, քեզանից անկախ ցանկանում
ես ասել. «Եթէ դա այն է, որ կապված է Յիսուսի հետ, կնոջ
սերունդի, ապա ես կգերադասեի այդ բոլորի հետ չկապվել»:
Բայց, անշուշտ, մեզնից չեն սպասում, որ երբ-է անենք այն, ինչը
մեր ուժերից վեր է: Չնայած, ինքնագոհողությունը պահանջվում
է այն բանի համար, որպէսզի ամբողջությամբ միանանք
Յիսուսի հետ. մեր կապը Նրա հետ մեզ կբերի այնպիսի մեծ
պարգ-, «որ այն տառապանքները, որոնք մենք տանում ենք
հիմա, ոչ մի կերպ չի համեմատվի այն փառքի հետ, որը կբացվի
մեր մեջ»: Եվ նույնիսկ այժմ Նրա գոհողությունը օգնում է մեր
խնդրանքի աղոթքներին կենցաղային դժվարությունները
հաղթահարելով հասնել Աստծուն: Եվ ավելացրէք դրան հետ-յալ
փառավոր հավաստիացումը, որն առանձնակի ընդգծվում է շատ
քրիստոդէլֆիական Աստվածաշնչերում:

«Աստուած հավատարիմ է, որ ձեզ պիտի չթողու որ ձեր
կարողութենէն ավելի փորձըվիք, հապա փորձությանը
հետ ազատության միջոց մըն ալ պիտի տայ, որպէսզի
կարողանաք համբերել» (1Կորն. 10:13):

«Այս բաները ձեզի խոսեցայ, որպէսզի ինձմով
խաղաղություն ունենաք. աշխարհի մեջ նեղություն

պիտի ունենաք, ես հաղթեցի աշխարհին» (Յովհ. Ավ. 16:13)

«Եթե Աստուծ մեր կողմն է, ո՞վ պիտի ըլլայ մեզի հակառակ»(Յոզովմ. 8:31):

3.3 Նոյին արված խոստումները

Մարդկության պատմության զարգացման ընթացքում, Ադամից – Եվայից հետո, մարդը դառնում էր ավելի ու ավելի այլասերված: Դեպքերը զարգանում էին այնպիսի ուղղությամբ, որ քաղաքակրթությունը հասավ բարոյական անկման աստիճանի, – Աստված որոշեց բնաջնջել երկրի երեսից բոլոր կենդանի էակներին; բացի Նոյից – նրա ընտանիքից (Գիրք Ծննդոց 6:5-8): Աստված հանձնարարեց Նոյին պատրաստել տապան, որում ինքը իր ընտանիքի հետ, – կենդանական աշխարհի բոլոր ներկայացուցիչների հետ պիտի ապրի համաշխարհային ջրհեղեղի ժամանակ:

Հարկ է նշել, որ Աստվածաշնչում նկարագրվածից բացի կան նա– բավական քանակությամբ գիտական փաստեր, որոնք հաստատում են համաշխարհային ջրհեղեղի ստույգությունը: Ուշադրություն դարձրեք, որ Երկիրը (այսինքն մեր ամբողջ մոլորակը) չոչնչացվեց; զոհվեց բարոյագրված ողջ մարդկությունը, «– վերացավ ցանկացած շարժվող կենդանի էակ» (Ծննդոց 7:21): Նոյի ժամանակներում Հիսուսը (Մատթեոս 24:37) – Պետրոսը (2 Պետրոս 3:6-12) տեսել են տեղի ունեցող դատաստանի մեջ նախատիպն այն դատի, որ տեղի կունենա Հիսուսի երկրորդ գալստյան պահին: Արդ, Նոյի ժամանակաշրջանի անմտորեն այլասերված մարդկությունը համեմատվում է մեր ժամանակակից աշխարհի հետ, որին սպասվում է պատիժ Քրիստոսի վերադարձի ժամանակ:

Մարդկության մեծ մեղսալիության պատճառով, ինչպես նա– մեր ինքնառնչացման ծրագրի մեջ մոլորակի մուտքի արդյունքում, աճում է հավատը, Նույնիսկ քրիստոնյաների շարքում, որ մեր մոլորակը կոչնչացվի: Այսպիսի դատողությունը հստակ ցուցադրում է Աստվածաշնչի հիմնական ուղերձի լրիվ անգիտությունը, որ Աստված ս–եռուն ուշադրություն է ցուցաբերում մեր մոլորակի գործերին, – որ Հիսուս Քրիստոսը շուտով կվերադառնա, որպեսզի այստեղ երկրի վրա հաստատի Աստծո Արքայությունը: Եթե մարդուն թույլատրվի ոչնչացնել իր

մուրրակը, այդ դեպքում այդ խոստումները չեն կարող կատարվել: 4.7 բաժնում – 5 գլխում բերվում են ծանրակշիռ ապացույցներ, որ Աստծո Արքայությունը կլինի երկրի վրա: Այս պահին, որպես ապացույց, որ երկիրը – արեգակնային համակարգը չեն ոչնչացվի, բերվում են Աստվածաշնչից մի քանի հատվածներ.

-«Իր սրբարանը շինեց բարձր բլուրներու պես. Այն երկրին պես, որ հավիտենապես հաստատեց» (Սաղ. 78; 69):

-«Բայց երկիրը միշտ կը կենայ» (Ժող. 1:4):

-«Արեգակ ու լուսին... աստղեր..., երկինք... Նա... Չանոնք յավիտենից հաստատեց, կանոն դրավ, որը չի խափանվի» (Սաղ. 148; 3-6):

-«Զանգի երկիրը Տիրոջ գիտությունովը պիտի լեցուի, ինչպես ջուրերը ծովը կը ծածկեն» (Թվոց. 14:21)- դժվար է պատկերացնել, որ Աստված կթողնի որ երկիրն իրեն ոչնչացնի: Այդ խոստումը դեռ-ս չի կատարված:

-«Նա, Աստվածը, որը հաստատեց ու շինեց երկիրը, զանկա պարապ տեղ չշինեց, հապա բնակության համար կազմեց» (Ես. 45:18); Եթե Աստված ստեղծեց երկիրը, որպեսզի տեսնի այն ոչնչացված, ապա Նրա արարումը անտեղի կլիներ:

Բայց վերադառնալք հետ՝ Ծննդոց գրքին, որտեղ Աստված այս ամենը խոստացավ Նոյին: Երբ Նոյը սկսեց ապրել ջրհեղեղից հետո ստեղծված նոր աշխարհում, Նրա մոտ եր-ի կանխագագացում կար մեկ ուրիշ համընդհանուր կործանման մասին: Երբ էլ որ ջրհեղեղից հետո անձր- տեղար, այդ միտքը պետք է որ միշտ գա Նրա գլխում: Ուստի Աստված երդում տվեց (մի շարք խոստումներ), որ դա ոչ մի անգամ այլ-ս չի կրկնվի.

«Ես ահա ձեզի հետ ու ձեզմե ետքը ձեր սերունդին հետ իմ ուխտս պիտի հաստատեմ (ուշադրություն դարձրեք՝ այդ հրաշքին՝ Աստված, դիմելով մահկանացու մարդուն որպեսզի ուխտ անի, օգտագործում է «Ես» դերանունը) .., որ անգամ մըն ալ ամեն մարմին ջրհեղեղի ջուրերեն չկորսուի, ոչ ալ նոր ջրհեղեղ պիտի ըլլայ երկիրը ավերելու համար» (Ծննդոց 9:9-12):

Այս երդումը հաստատվեց ծիածանով.

«Երբ երկրի վերայ ամպ բերեմ, աղեղը ամպին մեջ պիտի տեսնվի... Եվ ես իմ ուխտս կհիշեմ, Այս է այն ուխտին նշանը, որ ես հաստատեցի իմ – երկրի վրայ եղող ամեն մարմինի միջ–» (Ծննդոց 9:13-17):

Այսպիսով, քանի որ սա հենց հավերժական ուխտն է Աստծու – մարդկանց միջ–, – կենդանիների, ապա սրանից հետ–ում է, որ երկրի վրա ընդմիշտ պիտի ապրեն մարդիկ – կենդանիները: Սա ինքնըստինքյան այն բանի ապացույցն է, որ Աստծո Արքայությունը ամենից առաջ Երկրի վրա կլինի, քան երկնքում: Այսպիսով, Նոյին խոստումները Ավետարանային Արքայության հիմքն են; այն ցույց է տալիս, թե ինչպիսի մեծ ուշադրության է առանձնացնում Աստված մեր մոլորակին – ինչպիսի հանդուրժողականությունն է հանդես բերում նրա վրա հավերժական կյանքի հաստատման համար: Նույնիսկ ցասման պահին Նա հիշում է կարեկցանքի մասին (Ամբ. 3:2), – այնպիսին է Նրա սերը, որ Նա հոգ է տանում նույնիսկ Իր ստեղծած կենդանական աշխարհի մասին (1Կորն. 9:9; Էջ իոն 4:11):

3.4 Աբրահամին տված խոստումները

Հիսուսի – առաքյալների քարոզած Ավետարանը հիմնականում չէր տարբերվում նրանից, ինչ գիտեր Աբրահամը: Աստված այդ ամենը ավետել էր Աբրահամին «Սուրբ» Գրքի (Գաղ. 3:8) միջոցով: Երբ մենք կիմանանք, թե ինչ էր ասվել Աբրահամին, այդ ժամ կունենանք հիմնավոր պատկերացում քրիստոնեական Ավետարանի մասին: Բացի այդ, կան նա– ուրիշ ցուցումներ, որ Ավետարանը չի հանդիսանում այնպիսի ավետում, որը սկսվել է Հիսուսի ժամանակներից.-

- «Մենք ալ ձեզի կը քարոզենք այն խոստումը, որ հայրերուն ըրած էր» (Գործք. 13:32)

- «Պողոս, Յիսուս Զրիստոսի ծառայ, Առաքյալ ըլլալու կանչված, Աստուծոյ ավետարանին համար որոշուած, որ առաջուանէ իր մարգարէներուն ձեռքով սուրբ գրքերով խոստացավ (օրինակ, Աբրահամին- Ծննդոց 20:7) » (Հռովմ 1:1,2):

-«Քանզի ասոր համար մեռելներուն ալ ավետարանը քարոզվեցավ (1 Պետրոս 4:6)

- այսինքն, հավատացյալներին, որոնք ապրել են – մահացել մինչ- մ.թ. I դարը:

-«Վասն զի, մենք ալ անոնց պես ավետիս առած ենք» (Եբր. 4:2) այսինքն հրեաներին անապատում:

Խոստումներն Աբրահամին ունեն երկու հիմնական թեմա. 1)Աբրահամի սերունդների մասին (հատուկ հետևորդներին) – 2) երկրի մասին, որը ուխտած էր Աբրահամին:

Այս ուխտերը մեկնաբանվում են Նոր Կտակարանում, – մեր նկատառումներին համապատասխան՝ տալ Աստվածաշնչին բացատրելու ինքն իրեն, մենք կմիավորենք այստեղ երկու կտակարանների ուսմունքները, որպեսզի տանք լիիրավ պատկերացում այն ուխտի մասին, որը Աստված տվել է Աբրահամին:

Սկզբնական շրջանում Աբրահամը ապրում էր Ուրե քաղաքում, որը ծաղկող – բարգավաճող քաղաք էր – այժմ գտնվում է Իրաքում: Այժմյան հնեաբանները վկայում են բարձր քաղաքակրթության մակարդակի մասին, որը կար Աբրահամի ժամանակներում: Բավականին զարգացած էր բանկային համակարգը, քաղաքացիական սպասարկումը իր համապատասխան ծառայություններով: Ուրիշ ոչինչ չիմանալով, Աբրահամն ապրում էր այդ քաղաքում, որքանով որ մենք գիտենք, որպես աշխարհիկ մարդ: Բայց հետո նրան եկավ անսովոր մի կանչ՝ Աստծո կանչը, թողնել բարեկեցիկ կյանքը – ուղ-որվել ճանապարհորդության դեպի ուխտած երկիրը: Բայց դեռ-ս լրիվ- պարզ չէր, թե որտեղ է այդ երկիրը – ինչ է այն իրենից ներկայացնում: Սպասվում էր մոտ 1500 մղոն (2400կմ) հեռավորությամբ ճամփորդություն: Այդ երկիրը Քանանի երկիրն էր՝ այժմյան Իսրայելը:

Նրա ամբողջ կյանքի ընթացքում Աստված մի քանի անգամ հայտնվել է Աբրահամին կրկնելով – ընդլայնելով նրան Իր խոստումները: Այդ խոստումները կազմում են Քրիստոսի Ավետարանի հիմքը: Որպես իսկական քրիստոնյաներ մենք մեզ վրա ենք ընդունում այն կանչը, որը ուղղված էր Աբրահամին, թողնել մեր անցողիկ գործերը, ապրելով Աստծո խոսքի հավատով՝ – ընդունելով Աստծո խոստումները այնպիսին, ինչպիսին որ կան, գնալ առաջ: Մենք կարող ենք մեզ պատկերացնել, թե ինչպես էր Աբրահամն իր ճամփորդության ժամանակ խորհում խոստումների մասին: «Չավատքով, երբ Աբրահամը կանչվեցավ (Ուրեյ քաղաքից) , մտիկ ըրավ ու գնաց

այն տեղը, որ պիտի ժառանգեր – ելավ գնաց (Քանան) ու չէր գիտեր, թե ու՞ր կերթար» (Եբր. 11:8):

Երբ մենք առաջին անգամ մտածում ենք Աստծո խոստումների մասին, մենք –ս ճիշտ չգիտենք, թե ի՞նչ է իրենից ներկայացնում Աստծո Արքայության երկիրը: Բայց մեր հավատը Աստծո խոսքի նկատմամբ պետք է լինի այնպիսին, որ մենք սիրով ենթարկվենք:

Աբրահամը քոչվոր հեթանոս չէր, որն անելիք չունենար, քան այդ խոստումների իրեն տրված հնարավորությունից օգտվելն էր միայն: Նրա կապերը – շրջապատը շատ բանով մերի նման էր: Մենք կարող ենք մտովի մեզ դնել Աբրահամի տեղը, որքան ծանր կլիներ ընդունել այդպիսի դժվարին – հուզիչ որոշում, որպեսզի հետ-ի Աստծո խոստումներին՝ մեկնի հեռավոր – անհայտ ուղիով: Հարկ կլիներ հանդիպել աշխատանքային ընկերների տարօրինակ հայացքներին, հար-անների երկակի հայացքներին («Նա կրոնամոլ է դարձել»),... այս ամենը լավ ծանոթ էր Աբրահամին: Պահանջվում էր առողջ դատողություն – ուժեղ կամք, որպեսզի ընդունվի ճիշտ որոշում – հետո այն իրագործվի: Եվ նրա համար այդ երկարատև-ճանապարհորդության ընթացքում միակ սփոփանքը խոստումների խոսքերն էին: Նա, եր-ի, լավ պահել էր դրանք իր մտքում – ամեն օր մտորում էր դրանց ճշմարիտ նշանակության մասին: Նմանատիպ հավատ դրս-որելով – գործելով դրական համապատասխան, մենք կարող ենք արժանանալ նույն պատվին, ինչպիսին ուներ Աբրահամը - անվանվել Աստծո (Ես. 41:8) բարեկամները, ճանաչել նրան (Մենդոց 18:17) – ունենալ Աստծո Արքայության մեջ հավերժական կյանքի ամուր հույսեր: Նորից ուզում ենք ընդգծել, որ Քրիստոսի Ավետարանը հենվում է Աբրահամին արված խոստումների վրա: Որպեսզի իսկապես հավատանք քրիստոնեության ուղերձին մենք պետք է հաստատ իմանանք Աստծո կողմից Աբրահամին տրված խոստումները: Առանց դրա մեր հավատը հավատ չի լինի: Ուշադիր – ազահ աչքերով մենք պետք է ընթերցենք ու վերընթերցենք Աստծո – Աբրահամի երկխոսությունը.

Երկիր

1. «- Գնա քո ազգականներից – հորդ տնից այն երկիրը, որը ես քեզ ցույց կտամ» (Մենդոց 12:1):
2. «Եվ շարունակեց գնալ Աբրահամը մինչ- Բեթել (Իսրայելի կենտրոնում)... Եվ Աստված Աբրահամին ասաց.- Հիմա աչքերդ բարձրացրու – քո կանգնած տեղից նայիր դեպի

հյուսիս – հարավ, ար–ելք – ար–մուտք: Վասն զի այս բոլոր հողերը ես քեզ պիտի տամ քո սերունդների հետ հավիտյան... Ելի՛ր, այդ երկիրը շրջիր լայնքով ու երկայնքով, քանի որ ես այն քեզ պիտի տամ» (Շննդոց 13:3, 14, 15, 17):

3. «Աստված Աբրահամի հետ ուխտ արեց ասելով, քո սերունդներին եմ տալիս ես այս երկիրը, Եգիպտոսի գետից դեպի մեծ գետը՝ Եփրատը» (Շննդոց 15:18):
4. «Եվ պիտի տամ քեզ ու քեզնից հետո քո սերունդին որպես հավիտենական ժառանգություն այն երկիրը, ուր պանդխտության մեջ էիր՝ Քանանի երկիրը» (Շննդոց 17:8):
5. «Աբրահամին – նրա սերունդին՝ Աշխարհը ժառանգելու համար տված խոստումը ոչ թե օրենքով եղավ, այլ հավատքի արդարությունով» (Յոզվմ. 4:13):

Մենք տեսնում ենք Աբրահամին արված աճող հայտնություններ.

1. Կա երկիր, ուր ես ուզում եմ, որ դու գնաս:
2. «Երկիրը, որը դու տեսնում ես, ես քեզ – քո սերունդին կտամ հավիտյան». Ուշադրություն դարձրեք, ինչպես այս խոստումը հավերժական կյանքի մասին հայտնվում է առանց ռոմանտիկ փառապսակի, գրողն այս բառերը կարտասաներ, անկասկած, մեծ հուզականությամբ – ոգեշնչումով:
3. Խոստացված երկրի տարածքը որոշված էր բավականին կոնկրետ:
4. Աբրահամը չպիտի սպասեր այդ խոստումների իրականացմանը իր կյանքի ընթացքում. Նա պետք է օտարերկրացի համարվեր երկրում, չնայած նա պետք է հետագայում ապրեր այնտեղ ընդմիշտ: Այստեղ իմաստը նրանում է, որ նա կմահանա, իսկ հետո, հարություն կառնի, որպեսզի ստանա այդ խոստումը:
5. Պողոսը, գտնվելով ոգեշնչման մեջ, ըստ եր–ույթին ընկալում էր Աբրահամին տված խոստումները, որպես ամբողջ երկրին ժառանգելու նշանակություն:

Սուրբ գիրքը դուրս է գալիս իր սովորական շրջանակներից – հիշեցնում է մեզ, որ Աբրահամը չհասավ իր կյանքի ընթացքում խոստումների իրականացմանը:

«Հավատքով ապրեց (նկատի է առնվում կյանքի ժամանակավոր բնութագիրը) Նա ավետյաց երկրին մեջ, որպես թե օտարության մեջ – ապրում էր վրանների մեջ» (Եբր. 11:9)

Նա ապրեց այդ երկրում իբր– օտարական, հավանական է, այն նույն անվստահության – անհամապատասխանության գաղտնի զգացումով, որը կա գաղթականների մոտ: Նա հազիվ թե

ապրում էր իր զավակների հետ իր սեփական երկրում: Իր ժառանգների՝ Իսահակի - Յակոբի (որոնց նույնպես վերաբերվում էին խոստումները), «ասոնք ամենքն ալ հավատքով մեռան՝ խոստումները չստացած, իսկ հապա հեռվից տեսան զանոնք ու ողջունեցին - խոստովանեցան թե իրանք օտարներ ու պանդուխտներ են երկրի վրայ» (Եբր. 11:9): Նշեք չորս պահեր.

- Խոստումների իմացությունը,- ինչը մենք անում ենք Աստվածաշունչը ուսումնասիրելով:
- «Եվ նրանք ուրախացան նրանցով», - Եթե ուրախության զգացմունքը Աբրահամի մոտ ինչ որ չափով երկարեց,- ապա ինչքա՞ն երկար կտ-ի մեզ մոտ»
- «Նրանք բոլորը մեռան հավատքով», - Նրանք մկրտված էին Յիսուսով (Գաղատ. 3:27-29)
- Մեր կյանքի օրինակով խոստովանվում ենք, որ աշխարհը, որում մենք ապրում ենք,- մեր իսկական տունը չէ, բայց մենք ապրում ենք երկրի վրա եկող ապագա դարի հույսով:

Եթե մենք բաժանում ենք այդ բոլոր պնդումները, այդ դեպքում Աբրահամը դառնում է մեր մեծ հերոսը - կյանքի օրինակը: Վերջնական խոստովանությունը, որ խոստումները կկատարվեն ապագայում, եկավ հոգևած - ծեր մարդուն, երբ մահացավ նրա կինը: Փաստորեն նա ստիպված էր գնել խոստացված հողից մի կտոր, որպեսզի այնտեղ թաղեր իր կնոջը (Շննդոց 7:16): Իսկապես, Աստված «չտվեց նրան ոչ մի ժառանգություն նրա մեջ» - նույնիսկ այնպիսի մի հողակտոր, որպեսզի նրա վրա ոտքը դնի, - մի-նույն ժամանակ նա խոստացավ, որ կտա այն հողը տիրելու համար (Շննդոց 7:5): Աբրահամի այժմյան սերունդը -ս կարող է զգալ այդպիսի աննպատակահարմարություն, երբ գնում կամ վարձով են վերցնում սեփականություն՝ հողի վրա, որը խոստացված էր մեզ մեր անձնական, հավիտենական ժառանգության համար:

Բայց Աստված պահպանում է իր խոստումները: Կգա այն օրը, երբ Աբրահամը - բոլոր, նրանք ում տրված են խոստումները, կպարգ-ատրվեն: Եբրայեցու 11:13, 39, 40 հատվածները հաստատակամորեն ապացուցում են դա.

«Բոլոր նրանք մեռան հավատքով, չստանալով խոստումները ... Որովհետ- Աստված մեր մասին նախատեսել էր ինչ որ ավելի լավ բան, քանզի նրանք առանց մեզ հասան կատարելության»:

Բոլոր ճշմարիտ հավատացյալները կպարգ-ատրվեն մի-նույն պահին, այսինքն՝ դատաստանի օրը (2 Տիմ. 4:1,8, Մթ. 25:31-34,

1 Պետ. 5:4): Սրանից հետ-ում է, որ մինչ- դատաստանի սկսվելը Աբրահամը - ուրիշները, ովքեր գիտեին այդ խոստումները, պետք է հարություն առնեն, որպեսզի դատաստանի առջ-կանգնեն ողջերի պես:

Եթե նրանք չեն ստացել այն, ինչը իրենց խոստացված էր, ապա կստանան ամբողջ խոստացվածը իրենց դատից - հարությունից հետո Քրիստոսի վերադարձին, ապա չկա ուրիշ այլընտրանք, քան ընդունել, որ Աբրահամի նմանները այժմ անգիտակից վիճակում են՝ սպասելով Քրիստոսի գալստյանը: Իսկ այդ ժամանակ ամբողջ Եվրոպայում գտնվող եկեղեցիներում ապակյա խճանկարներով զարդաքանդակները ներկայացնում են Աբրահամին այնպես, կարծես Նա գտնվում է երկնքում - գոհ է իրեն խոստացվածից՝ իր հավատքով ապրած տարիների համար: Հազարավոր մարդիկ հարյուրավոր տարիների ընթացքում անցնում են այդ նկարների մոտով, կրոնականության տեսակետից այն դիտարկելով: Արդյոք կունենա՞ք աստվածաշնչորեն հիմնավորված քաջություն, որպեսզի այդ հերթից դուրս գաք:

Սերունդ.

Ինչպես 3.2 բաժնում ասվում էր, սերունդներին խոստումները վերաբերվում են ամենից առաջ Հիսուսին, - երկրորդ - նրանց, ով գտնվում է «Քրիստոսի մեջ» -, ուստի, նույնպես համարվում է Աբրահամի սերունդը:

1. «Քեզ մեծ ազգ պիտի ընեմ, - քեզ պիտի օրհնեմ - մեծացնեմ Ու երկրի բոլոր ազգերը քեզնով պիտի օրհնվին» (Շննդոց 12:2, 3):
2. «Վասնզի այդ բոլոր երկիրը, որ կտեսես, քեզի ու քո սերունդիս պիտի տամ հավիտյան: Եվ քու սերունդտ երկրի փոշին պես անթիվ պիտի ընեմ, այնպես որ եթե մեկը երկրի փոշին կարենա հաշվել, քու սերունդդ ալ համրե» (Շննդոց 13:15, 16):
3. «Հիմա դեպի երկինք նայե ու աստղերը համրե, եթե զանոնք համրել կրնաս:... Քու սերունդդ այսպես պիտի ըլայ:... Քու սերունդիդ տուի այս երկիրը ... »(Շննդոց 15:5, 18):
4. «Եվ պիտի տամ քեզի ու քեզ մե ետքը քո սերունդիդ իբր-հավիտենական ժառանգություն այն երկիրը ... բոլոր Քանանի երկիրը ու անոնց Աստուածը պիտի ըլլամ» (Շննդոց 17:8):
5. «Պիտի շատացնեմ քո սերունդդ երկնքի աստղերուն ու ծով եզերքը եղող ավազին պես - քու սերունդդ իր թշնամիների

քաղաքները պիտի ժառանգե ... Եվ երկրի բոլոր ազգերը քու սերունդովդ պիտի օրհնվին » (Շննդոց 22:17, 18)

Եվ նորից ընկալումը Աբրահամի «սերունդի» հետզհետե լայնանում էր,-

1 Առաջին հերթին նրան ասվել էր, որ ինչ որ ձ-ով նա կունենա մեծ քանակությամբ ժառանգորդներ, - որ իր «սերունդի» միջոցով այդ երկիրը օրհնյալ կլինի:

2 Ավելի ուշ նրան ասվել էր, որ նրա սերունդը այնպես կշատանա, որ կդառնա մեծ ժողովուրդ: Եվ այդ ժողովուրդը իր հետ միասին այդ երկրի վրա կունենա հավիտենական կյանք, այսինքն Քանանի երկրի վրա:

3 Հետո նրան ասվել է, որ իր սերունդը կշատանա երկնքի աստղերի չափ: Սա կարող էր նշանակել, որ նա կունենա շատ հոգ-որ հետնորդներ (երկնքի աստղեր), այնպես էլ բնական հետնորդներ (ինչպես «երկրի ավազ»):

4 Նախկին խոստումները ուղեկցվում էին լրացուցիչ հաստատումով, որ շատ մարդիկ, ովքեր կդառնան նրա ընտանիքի մասը, կունենան Աստծո հետ անձնական, ազգակցական հարաբերություններ:

5 Սերունդը կհաղթանակի թշնամիների հետ ունեցած պայքարում:

Ուշադրություն դարձրեք, որ սերունդների միջոցով «օրհնություն» պիտի ստանա աշխարհի մյուս ողջ ժողովուրդը: Աստվածաշնչում օրհնյալության գաղափարը երբեմն համեմատվում է մեղքերի թողության հետ: Վերջիվերջո դա հենց մեծագույն օրհնությունն է, որը ցանկանում է ստանալ Աստծուն սիրող մարդը: Ուստի մենք կարդում ենք այնպիսի հատվածներ, ինչպիսին են՝ «Երանելի է այն մարդը, որուն հանցանքներուն թողություն եղավ: Ու անոր մեղքերը ծածկուեցան» (Սաղմ 32:1): «Օրհնության գավաթը» (1 Կորն 10:16) - գինով լցված գավաթն է, որը իրենից ներկայացնում է Քրիստոսի արյունը, որի միջոցով հնարավոր է թողությունը:

Աբրահամի միակ հետնորդը, որը աշխարհին մեղքերի թողություն բերեց, իհարկե, Հիսուսն էր, - Նոր Կտակարանում տրվում է Աբրահամին տված խոստումների հաստատումը.

«Արդ՝ խոստումները Աբրահամին ու անոր սերունդին եղան, (Աստծո կողմից), քանզի չըսեր.«Եվ քու սերունդներուդ», որպես թե շատերու համար, հապա որպես թե մեկի համար, «Եվ քու սերունդիդ», որ Քրիստոսն է» (Գաղատ. 3:16):

«... որ Աստված մեր հայրերուն հետ ըրավ, ու ըսավ

Աբրահամին. «Ձու սերունդովդ պիտի օրհնուին երկրի բոլոր ազգերը»: Աստուած իր Որդին յարուցանելով, առաջ քեզի դրկեց զանիկա, որպեսզի ձեզ օրհնե, ամեն մեկդ ձեր չարություններեն դարձնելով » (Գործք Առաք. 3:25, 26)

Ոչադրություն դարձրեք այստեղ, ինչպես է Պետրոսը մեջբերում - մեկնաբանում Ծննդոց 22:18- ի հատվածը.

Սերունդ = Հիսուս

Օրհնություն = Մեղքերի թողություն

Խոստումներն այն մասին, որ Հիսուսը, որպես Աբրահամի սերունդ, իր թշնամիներին կհաղթի, այստեղ տեղին է հնչում, եթե այդ խոստումը դիտվում է չարի նկատմամբ Քրիստոսի հաղթանակի համեմատ - Աստծո մարդկանց - հետ-աբար, նա-Հիսուսի ամենամեծ թշնամու:

Սերունդներին միանալը

Այժմ արդեն պարզ է, որ Աբրահամը ճիշտ էր հասկանում քրիստոնեական Ավետարանի հիմնական դրույթները: Հիմնական խոստումները վերաբերվում էին Աբրահամին - նրա սերնդին՝Հիսուսին:Ինչ կարելի է ասել էլի ինչ-որ մեկի մասին: Աբրահամի ուղղակի հետևորդը նույնիսկ ոչ միշտ էր ներգրվում նրա սերնդի մեջ(Հովհ. 8:39 Հռովմ. 9:7): Բայց մենք կարող ենք դառնալ Հիսուսի մասնիկը, որպեսզի սերունդներին ուղղված խոստումները մեզ էլ վերաբերվեն: Դրան կարելի է հասնել Հիսուսով մկրտվելով (Հռովմ. 6:3-5): Մենք հաճախ կարդում ենք Նրա անունով մկրտվելու մասին (Գործք Առաք. 2:38; 8:16; 10:48; 19:5): Գաղատ. 3:27-29 հատվածները բացառություն չեն կազմում:

«Դուք բոլորդ, ովքեր մկրտված եք Քրիստոսով, Քրիստոսի մեջ եք վերափոխվել: Չկա արդեն Հուդան, - չկա հեթանոսը. չկա ստրուկը, ոչ էլ ազատը. չկա արականը, ոչ էլ իգականը, քանզի դուք բոլորդ միավորված եք Հիսուս Քրիստոսի մեջ (մկրտվելով): Եթե դուք Քրիստոսացված եք (Նրանով մկրտված), ապա դուք Աբրահամի սերունդն եք - խոստումներով ժառանգորդ» հավերժական կյանքի խոստումը երկրի վրա, «օրհնություն» ստանալու միջոցով՝ Քրիստոսի միջոցով ներումն է: Այստեղից հետ-ումէ, որ մկրտվելով Քրիստոսով, որպես ժառանգորդ, մենք նույնպես կստանանք նրան տրված խոստումները: Ուստի Հռովմ. 8:17 հատվածը մեզ անվանում է «Քրիստոսին

համաժառանգորդ»:

Հիշեք, որ օրհնությունը մարդկանց վրա պետք է իջնի երկրի բոլոր կողմերից՝ սերունդների միջոցով: Եվ սերունդը պետք է դառնա մարդկանց համաշխարհային խումբ, նման ծովափնա ավազներին – երկնքի աստղերին: Սա պայմանավորված է նրանով, որ նրանք առաջինը ստացան օրհնությունը, որպեսզի դառնան սերունդ: Այսպիսով, սերունդը (եզակի թվով) «պիտի ծառայի նրան – պիտի անվանվի աստվածային դարեդար» (Սաղ. 22:31)

Մենք կարող ենք Աբրահամին տված երկու խոստումների մասերը ընդհանրացնել . ՎՆ

1) Երկիր

Աբրահամը – իր սերունդը, Հիսուսը, ինչպես նաև– նրանք, ովքեր նրա մեջ են, կժառանգեն Քանանի երկիրը – ընդլայնելու ճանապարհով՝ ամբողջ աշխարհի հողերը – կապրեն այնտեղ հավերժ: Այս կյանքում նրանք հող չեն ստանա, բայց այն կստանան վերջին օրը, երբ կվերադառնա Հիսուսը:

2) Սերունդը

Ամենից առաջ դա Հիսուսն էր: Նրա միջոցով կպարտվեն մարդկության բոլոր մեղքերը («թշնամիները»), այնպես որ ներելու օրհնությունը կտարածվի ողջ աշխարհով մեկ:

Հիսուսով մկրտվելու ճանապարհով մենք դառնում ենք սերունդի մի մասնիկը:

Այդ նույն երկու թելերը հետամտվում են Նոր Կտակարանի քարոզներում – զարմանք չեն հարուցում հաճախակի հիշեցումներն այն մասին, որ մարդիկ մկրտվում են, երբ լսում են դրանց մասին: Դա եղել է – կա այն եղանակը, որի միջնորդությամբ այդ խոստումները մեր վրա նույնպես կսփռվեն: Այժմ մենք կհասկանանք, որ ծերունի Պողոսը մահվան առաջ կարողանում էր որոշել իր հույսը, որպես «Իսրայելի հույսի» (Գործք Առաքելոց. 28:20). ճշմարիտ քրիստոնեական հույսը՝ առաջնային հրեական հույսն է: Քրիստոսի խոսքերը. «փրկությունը հուդաներից» (Յովհաննես. 4:22), պետք է նաև մեզ համար նշանակեն անհրաժեշտություն՝ դառնալ հոգ-որ հրեաներ նրա համար, որպեսզի մենք կարողանանք օգտվել Քրիստոսով փրկվելու միջոցով խոստումներից, որոնք տրվել էին հրեա հայրերին:

Մենք կարողում ենք, որ վաղ շրջանի քրիստոնյաները քարոզում էին.

1) «Բարեհուս լինենք Աստծո Արքայությանը –
2) Հիսուս Զրիստոսի անվան մասին» (Գործ Առաքելոց. 8:12)
Այս երկու հարցերը Աբրահամին բացատրվել են մի քիչ ուրիշ
երկու անվանումներով . ՎՆ

- 1) խոստումները երկրի մասին –
- 2) խոստումները սերունդի մասին

Ուշադրություն դարձրեք, այնուամենայնիվ, որ «ավետում» բառը
Աստծո Արքայության – Հիսուսի մասին ընդհանրացվում են
որպես «Զրիստոսի քարոզչություն» (Գործ Առաքելոց. 8:5,
Սաղմոս 12): Այս բոլորը հաճախ ընկալվում են ինչպես հետ-յալ
պնդումը. «Հիսուսը սիրում է Ձեզ! Միայն ասացեք, որ դուք
Մենք «Յոմեացիներին ուղղված ուղերձի» 6-րդ գլխում կարդացինք, որ մենք կմտնենք նա– «նոր կյանք», ուրախություն, որը Դեյվը կունենա այժմ – որը ամբողջ կյանքի միջով նա կտանի: Ինչպես մենք կարդացինք, նա այլ–ս մեղքի ստրուկը չէ, այլ Աստծո, կատարելով Նրա Կամքը, ինչպես

ասվում է դրա մասին Աստվածաշնչում: Գայթակղիչ է մտածել, որ մենք ազատություն ենք մեզ համար ուզում, բայց մեզ ծառայելով, մենք ազատ չենք, մենք մեղքի ստրուկներն ենք: Դեյվի իր համար ընտրեց տիրակալ – պատրաստ է ծառայել Աստծուն: Ժամանակ սռ ժամանակ կթվա, թե այն սահմանափակումները, որոնք դրվում են մեզ վրա նոր կյանքում, բավականին ծանր են – դրանք տեղափոխելը անհնարին է; – մենք գայթակղվում ենք դրանցից ազատվելու փորձերում: Բայց եթե մենք անենք այդպես, ապա մենք ազատ չենք լինի, մենք նորից կծառայենք մեղքին:

Պողոսը Ա. Կորն. Ժ:1, 2-ում բացատրում է, որ մեր անցումը մկրտման ջրով նման է իսրայելցիների անցմանը Կարմիր ծովի միջով: Կարելի էր յուրօրինակ առակ քաղել մեզ համար բազմաթիվ դասերով: Իսրայելցիները Եգիպտոսում ստրուկներ էին, ապրում էին աննպատակ կյանքով, քրտնաջան աշխատանքով – երկրպագում էին Եգիպտոսի կուռքերին: Նրանք աղոթում էին Աստծուն իրենց փրկության ուղին գտնելու համար, չնայած, հնարավոր է, – չէին պատկերացնում, թե Նա ինչպես կկարողանա պատասխանել իրենց:

Ի պատասխան Աստված ուղարկեց Մովսեսին, որ նրանց Եգիպտոսից տանի Կարմիր ծովի միջով – հետո անապատով մտնի Ավետյաց երկիր: Իսրայելցիները Եգիպտոսում նման էին Դեյվին – բոլոր նրանց, ովքեր եկել էին մկրտման; այժմ Դեյվը կարծես բերվել է Կարմիր ծովի ափը: Անցնելով ջրի միջով, Նա միանգամից չի ընկնում Թագավորության Ավետյաց երկիր; Նա կմիանա մեզ բոլորիս այստեղ անապատով անցնելիս: Աստված տանում էր իրեաներին անապատով Զրեշտակի օգնությամբ, որը մշտապես նրանց հետ էր – ‘ցերեկը, – ‘գիշերը: Եվ այդպես մեզնից յուրաքանչյուրն ունի իր Զրեշտակը, որն ապրում է մեր շուրջը – տանում է մեզ մեր կյանքի միջով դեպի փրկություն:

Իսրայելցիները ամեն օր սնվում էին երկնային մանանայով, որը Զիսուս Ավետարանում /Յովի. 2/ անվանում է որպես Աստծո խոսք: Եթե նրանք չսնվեին դրանով, նրանք շուտով

կմահանային անապատում, քանի որ ուրիշ սնունդ այնտեղ
չկար: Այդ պատճառով մենք ձեզ խորհուրդ ենք տալիս
«Աստվածաշնչի ուղեկից» /հատուկ հրատարակություն:
Թարգմ. ծանոթ./, որի օգնությամբ դու կարող ես կարդալ
Աստվածաշունչը ամեն օր, ունենալով ընթերցման համար
գլուխների որոշակի հավաքածու: Անհրաժեշտ է մեր
ամենօրյա կյանքում ընդմիջումներ անել, ցանկալի է ամեն օր
մի-նույն ժամին, Աստվածաշնչի նշված գլուխները ընթերցելու
– իմաստավորելու համար:

Իսրայելցիներին ասվել էր, որ չփորձեն մեկ օրում հավաքել
երկնային մանանան, որը նախատեսված է մի քանի օրվա
համար, այլ ճիգ գործադրել – հավաքել ամեն օր: Այդպես –
մենք պետք է ամեն օր ներծծենք Աստծո հոսքը: Ինչպես մենք
չենք մոռանում մեր բնական սնունդը, այդպես էլ չպետք է
մոռանանք աստվածայինը, միայն ամենօրյա ճիգերը կլցնեն
մեզ: Իրականում, հորը կարող էր ասել, որ նա գնահատում է
Աստծո հոսքն ավելի, քան իր բնական սնունդը:

Իսրայելցիները խմում էին նա– հոսանքից, որը գալիս էր
ավիրված ժայռից: Կորն. 10-ում ասվում է, որ դա իրենից
ներկայացնում է «Քրիստոսին»:

Այսպիսով, մենք պետք է ուտենք – խմենք Հիսուսի օրինակով,
– դա մենք կարող ենք անել ամեն շաբաթ մեր հիշատակման
ծառայությունների ժամանակ: Խոսելով ժողովների մասին,
հարկ է ընդգծել մեր հանդիպելու բնական ցանկության
մասին, որպեսզի միասին կիսենք մեր Հույսը:
Ճանապարհորդը անջուր անապատում ուրախ կլինի տեսնել
իրեն նմանակցին, որպեսզի կիսվի փորձով – քննարկի
ճանապարհի առաջիկա դժվարությունները: Այդպես էլ մենք
մեր դժվարին ու մեղսավոր կյանքում պետք է գործադրենք
բոլոր ճիգերը, որպեսզի պահպանենք մեր միջ– եղած կապը:
Հաճախ նման ժողովներին չեն կարող բոլորը մասնակցել, ում
կցանկանայինք տեսնել, բայց մենք պետք է օգտվենք կապը
պահպանելու ցանկացած հնարավորությունից
Նամակագրության ուղիով, ամսագրեր կարդալով – այլն:

Մենք խոսում ենք մեր Նոր կյանքի պատասխանատվության մասին, բայց ճիշտ չէր լինի պատկերացնել, որ եթե մենք կատարենք որոշակի արարքներ, այնպիսին, ինչպիսին Աստվածաշնչի ամենօրյա ընթերցումն է, ապա Աստված մեզ կպարգ-ատրի: Դա Աստծո կամքն է, Նրա ցանկությունը ուղարկել մեզ Թագավորությունը որպես պարգ-, այլ ոչ թե վարձ մեր աշխատանքի դիմաց: Եվ բացարձակապես սխալ կլիներ մտածել, որ մկրտությունը Աստծո Թագավորությունը ներթափանցելու վարձքն է: Աստծո ճշմարտությունն ու սերը, Քրիստոսի հաղթանակը մեզ տալիս են բավականին մեծ հնարավորություններ Աստծո Թագավորություն մուտք գործելու համար: Աստված իրոք ցանկանում է, որպեսզի Դեյվը – մենք բոլորս լինենք այնտեղ: Այդ փաստն այնքան հիասքանչ է, որ մենք ժամանակ առ ժամանակ մեզ պետք է հիշեցնենք դրա մասին որպես իրական ճշմարտության, – դրա լույսի ներքո նման կերպ էլ պետք է համապատասխան ձ-ով պատասխանենք Աստծո սիրուն:

Երբ իսրայելցիները դուրս եկան Կարմիր ծովից, ապա մեծ ուրախություն էր: Մովսեսը երգեց իր երգը, – բոլոր մարդիկ ցնծում էին: Սաղմոս ՃԵ:35-41-ը լավ է արտահայտում այդ ուրախությունը – ցույց է տալիս էե ինչպես Աստված անցումի համար ապահովեց Նրանց այն ամենով, ինչ անհրաժեշտ էր.

«... Որ կերավ բոլոր խոտը Նրանց երկրումը. – Նրանց արտերի պտուղը կերավ: Եվ զարկեց Նրանց երկրումն ամեն անդրանիկներին – Նրանց զորության ամեն առաջիկներին: Եվ Նրանց հանեց արծաթով – ոսկով, – Նրանց ցեղերումը տկար մարդ չկար: Եզիպտոսն ուրախացավ Նրանց դուրս գալու վրա, որ սրանց սարսափն ընկել էր Նրանց վրա: Ամպ տարածեց, որ հովանի լինի, – կրակ՝ որ գիշերը լույս տա: Խնդրեցին, – Նա լորամարգիներ բերավ – երկնքի հացով կշտացրեց Նրանց: Վեմը պատռեց, – ջրեր բխեցին. գետեր գնացին անշուր տեղերովը»:

Այդպիսին է – մեր ուրախությունը քո ապագա եղբայրերի ու քույրերի, որոնք գտնվում են այստեղ – քո մկրտության վկաները կլինեն: Դա Աստծո մեծ ուրախություն է, Հիսուսի – Հրեշտակների ուրախությունը, որոնք ուշադրությամբ հետ-ում են մեզ այս պահին: Թող մեզնից յուրաքանչյուրը Հույսը պահպանի – այդ ուրախությունը «մինչ- վերջ», որպեսզի մենք կարողանանք միասին անցնել Աստծո Թագավորություն:

Այժմ մենք կարող ենք անցնել զգեստափոխման սենյակ, իսկ հետո լողավազան:

Գլուխ 10. Հարցեր

1. Արդյոք կարո՞ղ ենք մենք փրկվել առանց մկրտման ծիսակատարության:
2. Ի՞նչ է նշանակում մկրտություն բառը:
ա/ Պարտականություն
բ/ Ցողում
գ/ Հավատ
դ/ Ընկղմում ջրի մեջ
3. Ինչպե՞ս է բացատրվում մկրտության իմաստը Հռոմ. 2:3-5-ում:
4. Ե՞րբ պետք է մենք մկրտվենք:
ա/ Ճշմարիտ Ավետարանը – ապաշխարությունը ուսումնասիրելուց հետո
բ/ Մանուկ հասակում
գ/ Աստվածաշնչի նկատմամբ հետաքրքրություն առաջանալուց հետո
դ/ Երբ մենք ցանկացել ենք մտնել եկեղեցի
5. Ինչո՞ւմ ենք մենք մկրտվում:
ա/ Եկեղեցով, որը մկրտում է մեզ
բ/ Աստծո հսքում
գ/ Քրիստոսում
դ/ Սուրբ Հոգում
6. Ի՞նչ է տեղի ունենում մկրտումից հետո:

ՔՐԻՍՏՈՍԻԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ 341

- ա/ Մենք դառնում ենք Աբրահամի սերնդի մասը
- բ/ Մենք այլ-ս երբեք չենք մեղսագործի
- գ/ Մենք որոշակիորեն կփրկվենք բոլոր ժամանակներում
- դ/ Մեր մեղքերը ներվում են

7. Կփրկի՞ մեզ արդյոք սոսկ մկրտության ծիսակատարությունը:
8. Մկրտությունից հետո կատանա՞նք մենք Սուրբ Հոգու հիասքանչ պարգ-ը:

Գլուխ 11

ԿՅԱՆՔԸ ՔՐԻՍՏՈՍՈՒՄ

11.1. Ներածություն

Մկրտությունը Աստծո Թագավորությունում մեզ հավիտենական կյանքի հույս է տալիս: Որքան շատ ենք մենք հավատում – գնահատում հույսի նկատմամբ մեր վատահոյությունը, այնքան ավելի ակնհայտ է դառնում մեր վրա դրված պատասխանատվությունը: Այն վերաբերվում է մեր ապրելակերպին, որ համապատասխանի այն մարդկանց, ովքեր հույս ունեն հաղորդակցվել Աստվածային բնությանը /Բ. Պետ. Ա:4/, փաստացի միաձուլվել Նրա անվան հետ /Յայտ. Գ:12/ բոլոր հարաբերակցություններում կատարյալ դառնալու միջոցով:

10.3 բաժնում բացատրվում է, որ մկրտությունից հետո մենք պարտավորվում ենք վարել այնպիսի կյանք, որ մշտապես փորձենք ազատագրվել մեր բնույթի սատանայական ցանկություններից /Յոմ. 2:6/: Եթե մենք այդ չենք ցանկանում անել, ապա մկրտությունը դառնում է անիմաստ: Այն կարող է կատարվել միայն, երբ մարդ պատրաստ է նոր կյանքի՝ որը հաշորդելու է մկրտությանը, պատասխանատվությունը կրելուն:

Մկրտության մեջ մենք մահանում ենք հին, բնական ապրելակերպի համար –, պատկերավոր ասելով, հարություն ենք առնում Քրիստոսի հետ: «Եթե հարություն առաք Քրիստոսի հետ /մկրտությամբ/, ապա փնտրեցեք վերինը, ուր Քրիստոս նստած է Աստծո աջում: Վերինը խորհեցեք, ոչ թե այն, որ այստեղ՝ երկրի վրա է, քանզի մեռած էք. Սպանեցե՛ք ուրեմն... պոռնկություն, պղծություն, ... ազահություն» /Կող. Գ:1-5/: Մկրտությունից հետո մենք պարտավորվում ենք վարել այնպիսի կյանք, որի ժամանակ ամենին նայում ես Աստծո Երկնային հեռանկարով, խորհելով Երկնայինի մասին .այսինքն հոգ-որի/, մեր աշխարհիկ փառասիրությունը փոխարինելով մեր մարմնական ցանկությունները հաղթահարելու ձգտման հետ, որի պատճառով կարելի կլինի մտնել Աստծո Թագավորություն:

Մարդկային բնույթի միտումը կայանում է նրանում, որպեսզի ժամանակ առ ժամանակ Աստծո նկատմամբ հնազանդյան իր ձգտումը դրս-որի: Բայց Աստված հաճախ է մեզ համար նախազգուշացնում: Իր ցուցումների վերաբերյալ Նա ասում է. «որոնց կատարող մարդը նրանցով կապրե» /Եզեկ. Ի:13/: Եթե

մենք մեզ հաշիվ ենք տալիս Տեր Աստծո ցուցումների վերաբերյալ – սկսում ենք ենթարկվել դրանց մկրտման դեպքում, ապա մենք պետք է մեզ վրա պարտավորություն վերցնենք միշտ ապրել դրանց հնազանդ:

11.2. Սրբություն

«Սուրբ, Սուրբ, Սուրբ Է Չորաց Տերը» /Եսայ. 2:3/: Այստեղ երեք անգամ կրկնվող բառը Աստծո սրբության մասին բացատրություններից միայն մեկն է: «Սրբություն» բառը հիմնական իմաստով նշանակում է «բաժանում»՝ բաժանում ինչպես ոչ սուրբ արարքներից, այնպես էլ բաժանում հոգ-որ կյանքի: «Նմանվեցեք Աստծուն, որպես սիրելի զավակներ» /Եփ. 5:1/: Յետ-աբար, «նման այն Սրբին, որ ձեզ կանչեց, դուք էլ ձեր ամբողջ ընթացքի մեջ /ամենօրյա կյանքում/ սո՛ւրբ եղեք. մանկ որ գրված է. «Սո՛ւրբ եղեք, որովհետ- սուրբ եմ ես» /Ա. Պետ. Ա:15, 16, Ղուկ. ԺԱ:44/:

Բնիկ Իսրայելցիները Եգիպտոսից դուրս բերվեցին Կարմիր ծովում իրենց մկրտվելով, որպեսզի «լինեն սուրբ ժողովուրդ» /Եղից. ԺԹ:6/: Մկրտությունից հետո Իսրայելի հոգ-որ անդամները նման ձ-ով ստանում են «սուրբ կոչում» /Բ. Կիմ. Ա:9/: մկրտությունից հետո մենք դառնում ենք «սրբության» ծառաներ /Յոհն. 2:19, 22/:

Սրբությունը որպես այդպիսին Աստծո Էության նշանակալից մասն է – այն գլխավոր հոգսը պետք է լինի նրանց, ովքեր փորձում են «նմանվել Աստծուն»: Եթե մենք դա անենք, մենք «կընդունենք Իր սրբությունը», երբ մեզ պարզ-եցին աստվածային բնությունը /Եբր. ԺԲ:10; Բ. Պետ. Ա:4/: Ուստի առանց սրբության այս կյանքում հավատացյալը «Տիրոջը չպիտի տեսնի» /Եբր. ԺԲ:14/, այսինքն նա իրոք չի կարողանա տեսնել Աստծուն – անձամբ հաղորդակցվել նրա հետ Թագավորությունում:

Որպեսզի տիրենք վե՛հ հույսին, մենք պետք է բաժանվենք մեզ շրջապատող աշխարհից, որը չունի հավատ – բաժանված է Աստծո բնությունից հավիտենությամբ: «Բաժանումը» որպես բռնադատում չպետք է ընկալվի, քանզի դեպի բարձրագույն

կոչման ու հույսի աշխարհի մեր հեռացումով, լրիվ բնական է, որ բաժանված զգանք այնպիսի աշխարհից, որտեղ գերակշռում են մարմնական գայթակղությունները:

Այժմ քննարկենք այնպիսի հարցեր, որոնք վերաբերվում են մարդկային գործունեության այն կողմերին, որոնք կազմում են աշխարհը, որոնցից մենք պետք է բաժանվենք, իսկ 11.3 բաժնում խոսք կզնա այն աշխարհի մասին, որին մենք պետք է միանանք:

11.2.1. Չորրորդան կիրառում

Մենք ապրում ենք այնպիսի աշխարհում, որտեղ գերակշռում է մեղքը: 6.1 բաժնում մենք խոսել ենք իշխանությունների մասին, որպես «սատանայի», քանի որ նրանք ստեղծվել են մարմնական կարիքները բավարարելու նպատակով, այսինքն աստվածաշնչյան «սատանայի»:

Աստվածաշնչում ոչ մեկ անգամ ասվում է, որ մեղքը – չարի սերմերը կհաղթանակեն, այն դեպքում երբ տարբեր տեսակի ժամանակավոր տառապանքներ կրելուց հետո, կնոջ սերունդը ի վերջո կարդարացվի: Այդ պատճառով հավատացյալին մշտապես հանձնարարվում է «չարին հակառակ չկանգնել» /Մթ. Ե:39; Յոմ. ԺԲ:17; Ա. Թես. Ե:15; Պետ. Գ:9/:

Մենք տեսանք, որ չարը հայտնվեց Աստծո հրամանով /Ես. ԽԵ:7; Ամ. Գ:6/: Յետ-աբար, հակառակել չարին, նշանակում է պայքարել Աստծո դեմ: Այդ պատճառով Յիսուս մեզ պատգամեց Ֆիզիկապես չհակառակել չար ուժերին. «Եթե մեկը քո աջ ծնոտին ապտակ տա, նրան մյուսն էլ դարձրու: Եվ եթե մեկը կամենա քեզ բռնադատել – քո շապիկն առնել, նրան քո բաճկոնն էլ թող» /Մթ. Ե:39, 40/: Քրիստոս օրինակ է ծառայում. «Իմ թիկունքը տվի հարվածողներին» /Եսայ. Ծ:6/:

Քրիստոսը դատարանում հայցի հարուցումը համեմատում է աշխարհիկ գործունեության հետ, որը հակասում է հավատացյալների համոզմունքներին: Դա չարին հակադրվելու առաջին օրինակն է, – ոչ մի մարդ չի անի այդ, եթե ունի Աստծո խոսքի նկատմամբ ամուր հավատ. «Իմն է վրեժխնդրությունը, – ես կհատուցեմ, – ասում է Տերը» /Յոմ. ԺԲ:19/: «Մի ասիր. Չարության փոխարենը հատուցանեմ; Տիրոջը հուսացիր, – նա քեզ կազատե» /Առակ Ի:22; համ. Օր. ԼԲ:35/: Այդ պատճառով Պողոսը նախատում է կորնթացիներին ուրիշներին դատարան բերելու

համար /Ա. Կորն. 2:1-7/:

Մեր Զույսի վսեմությունը մեզ իրավունք չի տալիս հատուկ ուշադրություն դարձնել ընթացիկ կյանքի անարդարացիությանը. «Ձեզնից մեկը, եթե մի խնդիր ունենա իր ընկերոջ հետ, կհամարձակվի՞ դատվել... չգիտե՞ք, որ սրբերն են դատում աշխարհը» /Ա. Կորն. 2:1, 2/: Դատարանում հայցի հարուցումը, լինի դա հողի բաժանում, թե ապահարզան, համատեղելի չեն ճշմարիտ հավատացյալ մարդու արարքների հետ:

Չար ուժերը ճնշելու – մեղսագործներին իշխանության մոտ պահելու /որոշակի դեպքերում/ համար, իշխանությունները օգտագործում են ոստիկանությունը – զորքը: Չարին հակադրվելու սահմանադրական ձ-եր են դրանք, – ճշմարիտ հավատացյալը չպետք է մասնակցի դրանց: «Որովհետ- ովքեր սուր են վերցնում, սրով կընկնեն» /Մթ. Ի2:52/: Սա վաղուց հայտնի Աստվածային սկզբունքի կրկնությունն է. «Ով որ մարդի արյուն թափի, նրա արյունը մարդով թափվի. ըրովհետ- Աստծո պատկերովն ստեղծեց մարդին» /Ծն. Թ:6/: Մեր ընկերոջ դեմ հարուցված մտադրված բռնությունը, բռնություն է Աստծո դեմ, եթե միայն Նա չէ դա վավերացրել: Ըստ քրիստոնեական Աստվածային նախախնամության մեզ ասված է. «Սիրեցե՛ք ձեր թշնամիներին, օրհնեցե՛ք ձեզ անիծողներին, բարություն արեք ձեզ ատողներին – աղոթեցե՛ք նրանց համար, որ չարչարում են ձեզ – հալածում» /Մթ. Ե:44; Դուկ. 2:27/: Չորքն ու ոստիկանությունը գործում են այս սկզբունքներին ուղիղ հակադարձ –, ուստի, ճշմարիտ հավատացյալը կխուսափի նրանց հետ ցանկացած համագործակցությունից: Ոչ միայն չի կարելի անմիջապես բռնության կատարմանը մասնակցել, այլ նա- անուղղակիորեն աջակցել դրան, աշխատելով ներքին զորքերի – ոստիկանական կառուցվածքներում, – նա- նրանց հետ կապված կազմակերպություններում: Իրականում ամեն մի աջակցություն հավատարմության երդումն ընդունելով, զրկում է մեզ Աստծո ցուցումներին հնազանդ լինելու խղճի ազատությունից: Այդ պատճառով, ճշմարիտ հավատացյալները հրաժարվում են ցանկացած ձ-ով բանակում – ոստիկանությունում ծառայելուց, չնայած միշտ պատրաստ են ազգային ճգնաժամի ժամանակ մասնակցել այլընտրական ծառայություններին, դրանով աջակցելով իրենց եղբայրակիցներին նյութական

օգնություն մատուցելուն:

11.2.2. Զաղաքականություն

Աստծո թագավորության գալու հստակ ընկալումն ու ամուր հավատը նշանակում են այն փաստի մեր ընդունումը, որ իշխանությունները ի վիճակի չեն աջակցելու կատարելագործմանը: Ուստի, պետական ջաղաքականության մեջ ցանկացած մասնակցություն անհամատեղելի է թագավորության հետ: Զրիստոսը կանխագուշակում էր, որ իրադարձությունները կգարգանան ավելի վատ ու վատ «վերջին օրերին», իր գալուստի նախօրեին /Դուկ. ԻԱ:9-12; 25-27/: Չի կարելի հավատալ Նրա բառերին – մի-նույն ժամանակ փորձել պետական ջաղաքականության կամ օժանդակ կառուցվածքների օգնությամբ բարելավել աշխարհի դրությունը: Լավ սամարացու մասին առակը ցույց է տալիս, թե ինչպես պետք է քրիստոնյան օգնի շրջակա աշխարհին բարիք արարել բոլոր մարդկանց որքանով որ հնարավոր է դա /գաղ. 2:10/:

Նախկին հավատացյալների մասին պատմությունները ցույց են տալիս թե ինչպես էին նրանք վարում իրենց հոգ-որ կյանքը Զրիստոսի գալստյան սպասելով, շրջակա աշխարհի նկատմամբ իրենց վերաբերմունքը դրս-որելով հիմնականում ճշմարիտ ուսմունքը քարոզելու ուղիով: Ցուցումներ չկան նրանց վերաբերմունքի մասին շրջակա աշխարհի հասարակական, տնտեսական – ջաղաքական պրոբլեմների վերաբերյալ:

«Մարդինը չէ իր ճանապարհը» /Երեմ. Ժ:23/, մարդկային բնույթի գլխավոր արատի նման գնահատականը նշանակում է, որ մենք չենք ճանաչում մարդու ղեկավար դերը հասարակության ղեկավարման մեջ, որն ընդունելի լինի Աստծո մարդկանց համար: Դրա հետ-անքով, քվեարկությունը –ս համատեղելի չէ ճշմարիտ հավատի հետ: «Բարձրյալն է տիրում մարդկանց թագավորության վրա, – ում որ ուզում է՝ տալիս է այն» /Դան. Դ:32/: Ի վերջո, երկրային իշխանավորներին իշխանություն է տրամադրվում Աստծո կողմից /Յոն. ԺԳ:1/, հետ-աբար, դեմոկրատական հասարակության մեջ քվեարկելը նշանակում է քվեարկել Նրա դեմ, ում Աստված ընտրել է իշխելու: Յայտնի է, որ Աստված որոշակի ազգեր տվել էր Բաբելոնի թագավոր Նաբուգոդոնոսորի ղեկավարման տակ /Երեմ. ԻԷ:5, 6/:

Քանի որ մենք ընդունում ենք, որ Աստված ազգերին տվել է իրենց իշխանավորներին, մենք պետք է աշխատենք լինել օրինակելի քաղաքացիներ ենթարկվելով այն երկրի օրենքներին, որտեղ ապրում ենք, եթե միայն դրանք չեն հակասում Քրիստոսի պատվիրաններին: «Ամեն անձը թող հնազանդե բարձր իշխանություններին... ներկա իշխանությունները Աստծուց են կարգված... Սորա համար հարկ էլ եք վճարում... Ուրեմն ամենին վճարեցեք եղած պարտքը. ում որ հարկ՝ հարկը... ում որ պատիվ՝ պատիվը» /Րոմ. ԺԳ:1-7/:

Այսպես կոչված քրիստոնեական կազմակերպություններին մասնակցումը քաղաքական բողոքների կամ հարկային բոյկոտի ձևով նույնպես դիտավորյալ արհամարհանք է այդ աստվածաշնչյան հիմնական սկզբունքների նկատմամբ: Սակայն, Պետրոս առաքյալի օրինակը, որ շարունակում էր քարոզել Քրիստոսին, այն ժամանակ, երբ կառավարությունն արգելեց նրան այդ անել, ցույց է տալիս, որ մենք կարող ենք ենթարկվել աշխարհիկ ցուցումներին, եթե միայն նրանք չեն հակասում Քրիստոսի օրենքին. «Եթե արժան է Աստծո առաջին՝ որ ձեզ ավելի ականջ դնենք քան թե Աստծուն, դուք դատեցեք» /Գործք Դ:17-20; Ե:28, 29/:

Քրիստոնեական վերաբերմունքը պարտադիր գինվորական ծառայությանը վերջին ժամանակներս դրա օրինակն են:

11.2.3. Աշխարհիկ ուրախություններ

Աստծո - ապագայի նկատմամբ իրական հույսի միջ- ճշմարիտ կապի բացակայության հետ-անքով, աշխարհը հորինեց հաճույքների անթիվ տեսակներ: Իրենց մարմնական պահանջները բավարարել ցանկացող մարդկանց հարկ է բաժանել այն մարդկանցից, ովքեր փորձում են ստեղծել հոգ-որ աշխարհ: «Մարմինը ցանկանում է հոգուն հակառակ, - հոգին՝ մարմնին հակառակ» /Գաղ. Ե:17/:

Այդ գլխավոր հակասության պատճառով հնարավոր չէ որոշել, ինչը կարող ենք օրինականորեն զիջել մարմնին - միաժամանակ հետ-ել Դոգու կանչերին: Շուրջն աշխարհը կառուցված է «մարմնի ցանկությունիցը, աչքերի ցանկությունիցը - այս կյանքի ամբարտավանությունիցը» /Ա. Դովի. Բ:16/: «Արդ ով որ

կարողանա աշխարհքի բարեկամ լինել, իր անձն Աստծո թշնամին կանխ» /Յակ. Դ:4/: Ունենալ աշխարհիկ բարիքներ սիրող ընկերներ, դիտել աշխարհիկ ֆիլմեր – այլն՝ նշանակում է լինել «աշխարհի ընկեր»: Աշխարհը սիրելու ցանկությունը շուտով կանցնի, – բոլոր նրանք, ով սիրել է աշխարհն այս կյանքում, կգնան նրա հետ /Ա. Յովհ. Բ:15-17/: «Անհավատների աշխարհը» կոչնչացվի – երկրորդ գալստյան ժամանակ /Բ. Պետ. Բ:5/, տեսնելով, որ «բոլոր աշխարհքը չարության մեջ է կենում» /Ա. Յովհ. Ե:19/: Եթե մենք ցանկանում ենք խուսափել այդ ոչնչացումից, մենք պետք է «աշխարհքից» չլինենք /Յովհ. ԺԷ:16; Յայտ. ԺԸ:4/:

Մարմնական պահանջները բավարարելու բազմաթիվ աշխարհիկ միջոցներ քայքայում են մարդկանց առողջությունը, օրինակ՝ ծխելը, թմրանյութերը, սպիրտայինի չափազանց շատ օգտագործումը: Մեր ֆիզիկական առողջությունը, մեր փողերը, ամենը, ինչ մենք ունենք՝ պատկանում են Աստծուն: Ուստի մենք ազատ չենք այդ ամենը տնօրինելու ըստ մեր ցանկության, այլ պետք է գործենք որպես խանդավառ տնօրեն այն ամենին, ինչ Աստված մեզ տվեց: Դատաստանին կպահանջեն հաշվետվություն տալ մեր տնտեսավարության մասին /Ղուկ. ԺԹ:12-26/: Այնպիսի սովորություններ, ինչպիսին ծխելն է – սպիրտայինի օգտագործումը մեր ֆինանսների – առողջության չարաշահում է: «Չգիտե՞ք, որ դուք Աստծո տաճար եք – Աստծո Յոգին բնակված է ձեզանում: Եթե մեկն Աստծո տաճարն ապականե, նրան էլ Աստված կապականե... Ձեր մարմինները Սուրբ Յոգու տաճար են՝ որ ձեզանում է, որ նրան Աստծուց ունենք, – ձերինը չեք... մեծ գնով գնվեցիք: Ուստի փառավորեցեք Աստծուն ձեր մարմնում...» /Ա. Կորն. Գ:16, 17; Զ:19, 20/: Մարմնի չարաշահումը այնպիսի սովորությունների պատճառով, ինչպիսին ծխելն է, ունի լուրջ նշանակություն:

Սակայն, եթե վերը նշված սովորությունները, ձ-ավորվել են մինչև՝ հավատի դառնալը, ապա դժվար է դրանցից անմիջապես հրաժարվելը: Կար-որ է, որ մարդ, ընդունելով սովորությունների վնասակարությունը, ռեալ անցել է դրանք արմատախիլ անելուն: Կյանքի ցնցումները հարկ է ընդունել Աստծո Խոսքին դիմելով – աղոթքով, այլ ոչ թե հանգստացնող ցանկացած ուրիշ միջոցներով:

11.3. Ամենօրյա քրիստոնեական կյանք

11.3.1. Աստվածաշնչի ուսումնասիրությունը

Մկրտությունից հետո մենք պետք է «պտուղը սրբության մեջ» տեղափոխենք, – ապրենք հոգուն հայտնի կյանքով, այլ ոչ թե մարմնի /Յոհն. 2:22, Ը:1; Գաղ. Ե:16, 25/: Մեր մեջ գտնվող Աստծո հոսքի միջոցով, մենք բերում ենք հոգ–որ պտուղը /Յովհ. ԺԵ:7, 8/: Յոգին մեզ առաջնորդում է այն իմաստով, որ Աստծո Յոգին պարունակվում է Նրա հոսքի մեջ: Մեր ողջ կյանքի ընթացքում մենք պետք է հենվենք այդ հոսքին, կանոնավորապես կարդալով – ուսումնասիրելով Աստվածաշունչը:

հոսքի ուշադիր ուսումնասիրման արդյունքում, մարդն սկսում է գիտակցել մկրտման անհրաժեշտությունը – հետո ընդունում է այն: Արարքների վրա Աստծո հոսքի ազդեցության պրոցեսը – մեր կյանքի նպատակի ցուցումը պետք է շարունակվեն; մկրտությունը սոսկ առաջին քայլն է դեպի ցմահ հնազանդություն Տիրոջ հոսքին: Սակայն, գոյություն ունի Աստվածաշնչի – Ավետարանի հիմնական դրույթների նկատմամբ մտերմավարի վերաբերմունքի ռեալ վտանգ, – դա մեզ հանգեցնում է այն վիճակին, երբ հոսքն այլ–ս մեր վրա ազդեցություն չի գործում: Մենք կարող ենք կարդալ բառերը, բայց նրանք գործնական ոչ մի ազդեցություն չեն ունենա մեր վրա /Նայեք. Հավելված 2/: Այդ պատճառով տեղին է կարդալ հակիրճ աղոթք Սուրբ Գրքի յուրաքանչյուր ընթերցումից առաջ. «Բաց արա իմ աչքերը, որ քո օրենքի հրաշքները տեսնեմ» /Սաղ. ՃԺԹ:18/: Դրա նման հնչում են – Երեմիայի հատվածները. «Զո խոսքերը գտնվեցան, – ես կերա նրանց, – քո խոսքն ինչ համար սրտիս ցնծություն – ուրախություն եղավ» /Երեմ. ԺԵ:16/: Հարկ է այնպես կառուցել մեր ժամանակակարգը, որպեսզի ամեն օր կանոնավորապես ընթերցենք Աստվածաշունչը: Եթե մենք յուրաքանչյուր առավոտը սկսենք Աստվածաշնչի մշտական ուսումնասիրությամբ 30 րոպեի ընթացքում, ապա դա կլինի մեր հոգ–որ կյանքի հավաստի ուղղությունը: Նման սովորությունները հավատի ձ–ավորման գործում կչափվեն ոսկու կշռով Դատաստանի օրը:

Որպեսզի խուսափենք բնական ցանկությունից Սուրբ Գրքից կարդալ միայն այն մասերը, որոնք գրավում են մեզ, քրիստողելֆիականները մշակել են ընթերցման համար ծրագիր «Աստվածաշնչի ուղեկից» անվան տակ /որը կարող էք ստանալ այս գրքի հրատարակիչներից/: Դա մեզ հանարավորություն է տալիս ամեն օր կարդալ մի քանի գլուխ – տարվա ընթացքում մենք կարող ենք երկու անգամ կարդալ Նոր Կտակարանը – մեկ անգամ՝ Հին Կտակարանը: Օր օրի վրա կարդալով որոշակի գլուխներ, մենք կարող ենք պատկերացնել, որ հազարավոր ուրիշ հավատացյալներ այդ նույն ժամանակ կարդում են այդ նույն գլուխները: Երբ մենք հանդիպում ենք մեկ մեկու, մենք խոսակցության ընդհանուր թեմա ունենք, հատկապես. Սուրբ Գրքի գլուխները, որոնք մենք ուսումնասիրել ենք վերջերս:

11.3.2. Աղոթք

Հոգ-որ կյանքի մյուս կար-որ սկզբունքը աղոթքն է: Մեզ հիշեցնելով այն, որ կա «մեկ միջնորդ Աստծո – մարդկանց մեջ Քրիստոս Հիսուս մարդը, որ իր անձը ամենի համար փրկանք տվավ», Պողոսը եզրակացնում է Քրիստոսի գործի ընկալման մեջ. «Արդ կամենում եմ, որ մարդիկ ամեն տեղ աղոտք անեն, ... առանց բարկության – երկմտության» /Ա. Տիմ. Բ:5-8/: «Քանզի ոչ թե այնպիսի քահանայապետ ունենք, որ չկարողանա մեր տկարություններին կարեկից լինել, այլ մի այնպիսին, որ ամեն բանով փորձված մեր նմանությամբ, բայց առանց մեղքի: Ուրեմն համարձակությունով մոտենանք շնորհի աթոռին, որ ողորմություն ընդունենք – շնորհ գտնենք պատշաճ ժամանակին օգնելու» /Եբր. Դ:15-16/:

Քրիստոսը մեր քահանայապետն է Աստծուն աղոթքները հասցնելու համար, – դա ոգեշնչում է մեզ կանոնավոր աղոթքի: Սակայն աղոթքը պահանջների ցուցակ չպետք է լինի, որ փոխանցվեն Աստծուն. արդ աղոթքը ուտելուց առաջ, ճանապարհորդության ժամանակ անվտանգության համար – այլև. պետք է կազմեն մեր աղոթքի կար-որ մասը:

Տիրոջն ուղղված աղոթքում սեփական պոռբլեմների դիմելը ինքնին հանգստության մեծ զգացում է առաջացնում. «Ոչինչ, հոգս մի անեք. այլ ամեն բանում աղոթքով – աղաչանքով – գոհությունով՝ ձեր խնդիրները թող հայտնի լինեն Աստծուն: Եվ

Աստծո խաղաղությունը, որ ամեն մտքից վեր է, կպահպանի ձեր սրտերն ու մտքերը Քրիստոս Յիսուսումը» /Փիլիպ. Դ:6, 7/: «Եվ այս է այն վստահությունը, որ ունենք նրա հանդեպ, այն, որ ինչ էլ ինդրենք ըստ նրա կամքի, նա մեզ կլսի» /Ա. Յովհ. Ե:14/: Մենք կիմանանք Աստծո կամքը նրա հոսքն ուսումնասիրելու միջոցով, որը բացում է նրա Յոզիան դիտավորությանը մեր նկատմամբ: Ուստի Աստվածաշնչի ընթերցումը մեզ սովորեցնում է ինչպես պետք է աղոթել – ինչի մասին աղոթել, այդպիսով մեր աղոթքները ուժգնացնում ենք: Եվ այսպես. «Եթե իմ խոսքերն էլ մնան ձեր մեջ, ինձ որ ուզենաք, ինդրեցե՛ք, – ձեզ կտրվի» /Յովհ. ԺԵ:7/:

Սուրբ Գրքում աղոթքի կանոնավոր ընթերցման բազմաթիվ օրինակներ են տրվում /Սաղ. ԾԺԹ:164; Դան. 2:10/: Առավոտյան – երեկոյան, նա– մի քանի հակիրճ գոհունակության աղոթքներ օրվա ընթացքում բավարար է որպես մինիմում:

11.3.3. Քարոզչություն

Գոյություն ունի մեկ մեծ գայթակղություն, որը ծագում է ճշմարիտ Աստծոն ճանաչելու ժամանակ՝ դա հոգ–որ եսամոլ դառնալու հնարավորությունն է: Մենք կարող ենք այնպես բավարարված զգալ Աստծո հետ մեր անձնական կապի համար, այնպես տարվենք Աստվածաշնչի ուսումնասիրությամբ, որ անտեսենք մեր գիտելիքները ուրիշ մարդկանց հետ կիսելու հարցը: Աստծո հոսքը – ճշմարիտ Ավետարանը, որը պարունակվում է նրանում, համեմատվում է լույսի հետ կամ մթության մեջ լամպի վառվելուն /Սաղ. ԾԺԹ:108; Առակ. Դ:18/: Յիսուս ընդգծեց, որ ոչ ոք չպետք է թաքցնի այդպիսի լույսը գրվանի տակ, այլ փայլի ձեր լույսը մարդկանց առաջ /Մթ. Ե:15/: «Դուք եք աշխարհի լույսը» Քրիստոսով մկրտվելու պատճառով. աշխարհի լույսը /Մթ. Ե:14; Յովհ. Ը:12/: «Մի քաղաք, որ լեռան վրա է կանգնած, չի կարող թաքնվել» շարունակեց Քրիստոսը /Մթ. Ե:14/:

Եթե մենք իրոք ապրում ենք ճշմարիտ Ավետարանին համապատասխան, որը մենք հասկանում ենք, մեր «սրբությունը» ակնհայտ կլինի այն մարդկանց համար, ում կողքին ապրում ենք: Յնարավոր չի թաքցնել Թագավորության մասին հույսի համար «բաժանումը», ինչպես նա– «բաժանումը» նրանց աշխարհիկ ուղիներից:

Վայելուչ կերպով մենք պետք է աշխատենք բաժանել ճշմարտության մասին մեր գիտելիքները բոլորի հետ, ում հետ մենք շփվում ենք կյանքում, խոսակցությունները հոգ-որ թեմաներին դարձնելով, ուրիշ դավանանքի անդամների հետ ուսմունքը քննարկելով, տպագրված հրատարակչությունները բաժանելով – նույնիսկ տեղի ինֆորմացիոն բայիններում ոչ մեծ հայտարարություններ տեղավորելով. այս բոլոր միջոցները կարելի է օգտագործել որպեսզի մարդկանց լույս բերենք: Մենք չպետք է մտածենք, որ այդ աշխատանքը ճշմարիտ ուղու հորդորանքով կանեն ուրիշ հավատացյալներ, մեզնից յուրաքանչյուրն ունի անհատական պատասխանատվություն: Զրիստոդեյֆիականները ուրիշ կրոնադավանության համեմատությամբ կազմակերպված, լայնամասշտաբ քարոզչական միջոցառումներ համեմատաբար քիչ են անց կացնում: Մեզնից յուրաքանչյուրը անհատապես անում է այն, ինչ կարող է հիմնականում անել իր անձնական հաշվից:

Քարոզչության ամենաազդու միջոցներից մեկը կայանում է նրանում, որ բացատրենք մեր հավատը մեր ընտանիքի անդամներին – այն մարդկանց, որոնց հետ անմիջականորեն շփվում ենք: Իսկ մարդկանց, որ չեն կիսում մեր ուսմունքը, հարկ է ուղղակիորեն պատմել մեր հավատի մասին, չնայած եթե դա արվի, ապա ցանկալի չէ այդ հարցը նորից բարձրացնել կամ նրանց վրա ինչ-որ ճնշում գործադրել: Աստված չի ուզում, որպեսզի մարդիկ ճնշման տակ անցնեն ուրիշ հավատի: Մեր պարտքն է՝ հասկացնել ճշմարտությունը առանց չափազանց հաջողության ակնկալիքի: Այդ հասկացման համար մենք մեծ պատասխանատվություն ենք կրում /Եզեկ. Գ:17-21/; Եթե Զրիստոսը գա մեր կյանքի ընթացքում «Եթե հանդում երկու ոգի լինեն, մեկը պիտի վերցվի, իսկ մյուսը՝ թողնվի» /Ղուկ. ԺԷ:36/: Իրականում, տարօրինակ կլինի, եթե չպատմենք մեր ընտանիքի անդամներին – աշխատակիցներին մեր Տիրոջ երկրորդ գալստյան մասին, երբ դա տեղի կունենա:

11.3.4. Էկկլեսիայ կյանք

Մինչ- այժմ այս գլխում խոսում էինք մեր անհատական հոգ-որ պատասխանատվության մասին: Սակայն, մենք պարտավորություն ունենք հանդիպելու այն մարդկանց հետ, ովքեր կիսում են մեր հույսը: Հասկանալի է, մենք ուզում ենք դա անել: Մենք արդեն ցույց տվեցինք, որ մկրտությունից

հետո մենք ուրք ենք դնում դժվարին ճամփորդության ուղու վրա Թագավորության ուղղությամբ: Անշուշտ, մենք կուզենայինք շփվել մեր ուղեկիցների հետ: Մենք ապրում ենք վերջին օրերը Զրիստոսի գալուստից առաջ: Որպեսզի հաղթահարենք բազմաթիվ բարդ դժվարություններ, որոնք այժմ կանգնած են մեր առջ-ում, մենք ցանկանում ենք ընկերական հարաբերություններ հաստատել նրանց հետ, ով գտնվում է նույնպիսի վիճակում. «Չանց չառնենք միմյանց հետ հավաքվելը, ինչպես որ սովոր են անել ոմանք, այլ խրախուսենք միմյանց, – այդ այնքան ավելի, որքան տեսնում եք մոտեցող օրը /երկրորդ գալուստ/ /Եբր. Ժ:25, Մալ. Գ:16/: Ուստի հավատացյալները պետք է կիրառեն բոլոր միջոցները միմյանց հետ շփում հաստատելու համար նամակների միջոցով – ճամփորդության միջոցով փոխադարձ հանդիպման համար, որպեսզի միասին ուսումնասիրեն Աստվածաշունչը, մասնակցեն աստվածային պատարագին – իրագործեն քարոզչական գործունեություն:

Մեզնից յուրաքանչյուրը անհատապես «կանչվել է» աշխարհից Թագավորության մեծագույն Յուսի մեջ: «Սուրբ» բառը նշանակում է «կանչված մարդ» – ավելի շուտ կարող է վերաբերվել բոլոր ճշմարիտ հավատացյալներին, քան անցյալի մի քանի հայտնի հավատացյալների: «Էկկլեսիա» հունական բառը, որն անգլիական Աստվածաշնչում թարգմանված է որպես «Եկեղեցի», նշանակում է «կանչվածների ժողով», այսինքն՝ հավատացյալների: Ուստի, «Եկեղեցի» բառը ավելի շուտ վերաբերվում է մի խումբ հավատացյալների, քան ֆիզիկական կառույցի, որտեղ նրանք հանդիպում են: Որպեսզի այդ տերմինը օգտագործելիս խուսափենք չհասկանալուց, քրիստողելֆիականները գերադասում են իրենց «Եկեղեցիներին» վերաբերվել որպես Էկկլեսիայի:

Որտեղ էլ որ գտնվեն հավատացյալները, ինչ-որ քաղաքում կամ տեղանքում, նրանց մոտ օրինաչափորեն ցանկություն է առաջանում գտնել վայր իրենց կանոնավոր հանդիպումների համար: Դա կարող է լինել հավատացյալներից մեկի տունը կամ վարձակալությամբ վերցրած դահլիճ: Զրիստողելֆիական Էկկլեսիան հանդիպում է ակումբներում, հյուրանոցների կոնֆերենց-դահլիճներում, ինքնագործ դահլիճներում կամ մասնավոր տներում: Էկկլեսիայի նպատակն է իր անդամների հոգ-որ աճը Աստվածաշնչի կոլեկտիվ ուսումնասիրության

միջոցով, – նա– աշխարհ բերելու կենսարար լույսը քարոզչության ուղիով:

Քրիստողելֆիական Էկկլեսիայի տիպական ցուցակը այս տեսքն ունի.

Կիրակի 11.00 ՎՆ Հացը կտրելու արարողություն
 18.00 ՎՆ Հասարակական քարոզչություն
 Չորեքշաբթի 20.00 - Աստվածաշնչի ուսումնասիրություն

Էկկլեսիան Աստվածային ընտանիքի մի մասն է: Ցանկացած ամուր-միահյուսված համայնքում նրա յուրաքանչյուր անդամ պետք է ուրիշների համար լինի դյուրազգաց – հնազանդ: Քրիստոսն ինքը այդպիսի մեծ օրինակ էր: Անկախ իր հոգ-որ գերազանցությունից, նա իրեն պահում էր ինչպես «ծառա բուրբի համար», լվանում էր առաքյալների ոտքերն այն ժամանակ, երբ նրանք իրար հետ վիճում էին, թե ով է իրենցից ամենավեհը: Քրիստոսը մեզ հրավիրում է հետ-ել իր օրինակին /Յուդ. ԺԳ: 14, 15; Մթ. Ի: 25-28/:

Այժմ, երբ Սուրբ Հոգու պարգ-ները ետ են վերցված, տեղ չկա «մեծերի» համար, ինչպես նախկին եկեղեցիներում. «Որովհետ-մեկն է ձեր ուսուցիչը՝ Քրիստոսը – դուք ամենքդ եղբայր եք» /Մթ. ԻԳ: 8/: Ուստի, քրիստողելֆիականները իրար վերաբերվում են որպես «եղբայրների» կամ «քույրերի», իրար անվանելով առաջին անունով, անկախ աշխարհիկ կյանքի տարբեր դիրքի: Միաժամանակ, նրանք հարգանքով են վերաբերվում այն հավատացյալներին, որոնք գիտեն ճշմարիտ Աստծուն շատ տարիների ընթացքում, կամ ովքեր արագ աճել են հոգ-որ կյանքում Աստծո հոսքի ասպարեզում: Նման հավատացյալների խորհուրդները մեծ արժեք ունեն նրանց համար, ով ուզում է հետ-ել Աստծո հոսքին: Սակայն ընդունվում են միայն այնպիսի խորհուրդներ, որոնք Աստծո հոսքի ճշգրիտ արտացոլումից չեն տարբերվում:

Էկկլեսիայում տրված ուսմունքը, անշուշտ, պետք է հիմնվի Աստծո հոսքի վրա: Նրանք, ովքեր Էկկլեսիայի ներսում ելույթ են ունենում հրապարակորեն, արտացոլում են, հետ-աբար, Աստծուն – խոսում են նրա անունից: Զանի որ Աստված արական սեռի է, հարկ է, որ միայն եղբայրները կարող են իրագործել Աստծո հոսքը հասարակայնորեն բացատրելու

գործունեությունը: Դրա մասին պարզորոշ ասված է Ա. Կորն. ԺԴ:34-ում. «Ձեր կանայքը եկեղեցիներումը լուռ կենան, որովհետև՝ նրանց հրաման չկա խոսելու»: Տիմոթեոսին /Բ:11-15/ ուղղված ուղերձում դա բացատրվում է իրադարձություններով, որոնք տեղի էին ունեցել Եդեսյան այգում, որտեղ Եվան Ադամին սովորեցրեց մեղք գործել, ուստի կինը այժմ չպետք է սովորեցնի տղամարդուն: Այն փաստը, որ Աստված Ադամին ստեղծել է Եվայից առաջ, նշանակում է «կնկա գլուխը մարդն է» /Ա. Կորն. ԺԱ:3/, ոչ թե հակառակը: Այս բոլորի հետևանքով. «Կինը թող հանդարտությամբ սովորի ամեն հնազանդությունով: Կնկան հրաման չեմ տալիս, որ սովորեցնի, – ոչ էլ մարդի վրա իշխի, այլ որ լուռ կենա: Որովհետև՝ Ադամն առաջ ստեղծվեցավ – հետո Եվան: Եվ Ադամ չխաբվեցավ, այլ կինը խաբելով մեղք գործեց: Սակայն կապրի որդեծնության համար, եթե կենա հավատի – սիրո – սրբության մեջ պարկեշտության հետ» /Ա. Տիմ. Բ:11-15/:

Այստեղից պարզ է, որ Աստվածաշունչը հավատացյալ կանանց ու տղամարդկանց տարբեր դերեր է հատկացնում: Որոշ դեպքերում կանանց մասին ասվում է, որպեսզի նրանք «ամուսնանան, որդիք ծնեն, տնաշեն լինեն» /Ա. Տիմ. Ե:14/: Սա նշանակում է նրանց հոգ-որ գործունեության ոլորտը տունն է: Չեմ-աբար, Էկկլեսիայի հասարակական գործունեությունը տրվում է տղամարդուն: Դա կտրուկ հակասության մեջ է գտնվում սեռերի իրավահավասարության հումանիստական տեսության հետ, երբ աշխատող կինը կարող է իրավահավասարություն պահանջել ամուսնու հետ բոլոր գործերում՝ ընտանեական բյուջեի ղեկավարումից մինչև՝ երկու սեռերի համար միատեսակ հագուստ կրելը: Ստացվում է, որ երեխաների մասին հոգալը դիտարկվում է որպես անհարմարություն, որպես Էմոցիոնալ սրբության որոշակի մակարդակի պահպանման անհրաժեշտություն լիակատար մատերիալիստական – Եսամուլական այս աշխարհում: Ճշմարիտ հավատացյալները դարի այդ ոգուց հրաժարվում են, չնայած, ինչպես միշտ, անհրաժեշտ է չափի զգացողություն:

Ամուսինը տիրակալ չպետք է պահի իրեն կնոջ առաջ, այլ սիրի նրան, ինչպես Քրիստոս էր սիրում մեզ /Եփ. Ե:25/: «Մարդիկ, իմաստությունով բնակվեցեք կանանց հետ /այսինքն վերաբերվե՛ք նրբորեն, Աստծո կոսքի ձեր գիտելիքներին համապատասխան/, ինչպես տկար անոթի՝ կանանց պատիվ

տալով, իբր- կյանքի շնորհի ժառանգակիցներ» /Ա. Պետ. Գ:7/:

Հոգ-որ արտահայտությամբ, Զրիստոսով մկրտումը տղամարդուն ու կնոջը դարձնում է հավասար /Գաղ. Գ:27, 28; Ա. Կորն. ԺԱ:11/: Սակայն, դա չի ազդում հստակ սկզբունքների վրա, որ «կնկա գլուխը մարդն է» /Ա. Կորն. ԺԱ:3/ գործնական - հոգ-որ գործերում ինչպես տանը, այնպես էլ եկկլեսիայում:

Որպեսզի ցուցադրեն այս սկզբունքի ճանաչումը, հավատացյալ կինը պետք է կրի գլխաշոր, երբ եղբայրը Աստծո հոսքն է քարոզում: Գործնականում դա նշանակում է, որ գլխարկը կամ գլխաշորը պետք է եկկլեսիայի ժողովներին մասնակցելիս չհանվեն: Տղամարդու - կնոջ դերի միջ- տարբերությունը ընդգծվում է նրանով, որ կինն իր մազերը երկարացնում է, իսկ տղամարդը ձեռնպահ է մնում դրանից /Ա. Կորն. ԺԱ:14, 15/: «Եվ ամեն կին, երբ որ աղոթք է անում... բաց գլխով, անպատիվ է անում իր գլուխը /այսինքն ամուսնու գլուխը, հատ. 3/, քանզի մի-նույն է թե ածիված է: Որովհետ- եթե կինը չծածկվի, թող ուրեմն իր մազերն էլ կտրի. բայց եթե կնկան ամոթ է մազերը կտրելը կամ ածիվելը, թող ծածկվի... Դրա համար կինը պարտավոր է քող դնել գլխին» /Ա. Կորն. ԺԱ:5, 6, 10/:

Կնոջ «չծածկված» գլուխը ցույց է տալիս, որ նա ունի մազեր, իսկ «ծածկված» գլուխը վկայում է գլխարկ կրելու գիտակցված վերաբերմունքի մասին: Առանց գլխաշորի կինը չի կարող ապավինել իր մազերի բնական ծածկոցին; մտածել այդպես նշանակում է ենթադրել, որ Աստված չի տեսնում նրա մազերը: Տղամարդը չպետք է ծածկի գլուխը /Ա. Կորն. ԺԱ:7/: Դա չի վերաբերվում մազերին, այլ ցանկացած գլխարկ կրելուն:

Կինն իրենից ներկայացնում է եկկլեսիան, իսկ տղամարդը՝ Զրիստոսին: Ինչպես մենք գիտակցորեն ընդունում ենք Զրիստոսով մեր փրկվելու հավատը, այնպես էլ կինը պետք է գիտակցորեն ընդունի իր գլուխը ծածկելու վճիռը: Ապավինել նրան, որ մազերը կծածկեն բնականորեն, հավասարազոր է խորհելուն այն մասին, որ մեր փրկության մասին հույսը հակասում է Զրիստոսի կամքին: Կանանց երկար մազերը՝ /Աստծո տված/ պատիվն է նրա, քանզի մազերը նրան տրվել են, որպես ծածկոց /հունարեն «բնական հագուստ» /Ա. Կորն. ԺԱ:15/: Կինն իր մազերը պետք է աճեցնի այնպես, որ ընդգծի տղամարդուց իր տարբերությունը: Տղամարդու - կնոջ մազերի միջ- տարբերությունը ստեղծվել է Աստծո կողմից: Ուստի, կինը

պետք է օգտագործի այդ հնարավորությունը ընդգծելու համար իր յուրահատուկ դերը:

Քննարկելով կանանց երկար մազերի – գլխաշոր կրելու հարցը, մենք պետք է զգուշություն պահպանենք, որպեսզի միայն սոսկ խորհրդանիշորեն դա չարտահայտվի: Եթե քույրն ունի ճշմարիտ հոգ-որ – հնազանդ վարք /Պետ. Գ:5/, նա կենթարկվի եղբայրներին, ինչպես Քրիստոսին հավատացողները, – ուրախ կլինի դրս-որել իր հնազանդությունը ցանկացած միջոցով, ներառելով – գլխաշորի կրելը: Եթե նա գիտակցի այդ ցուցման պատճառը, ինչպես Աստծո բոլոր ցուցումների, այդ դեպքում նա ցանկություն չի ունենա չկատարելու դրանք:

Քույրերի համար եկկլեսիայում միշտ աշխատանք կգտնվի՝ Կիրակնօրյա դպրոցում քարոզելը – ուրիշ պարտավորությունների ղեկավարումը, որոնք չեն ներառում հրապարակային քարոզներ – ելույթներ, օրինակ ֆինանսական հաշվետվության վարում: Յոգ-որապես հասուն կանայք կարող են խրախուսվել ղեկավարելու փոքր քույրերի ուսումնական պարապմունքները /Տիտ. Բ:3, 4; Ելից ԺԵ:20/:

11.3.5. Հացի կտրելը

Աղոթքի – Աստվածաշունչը կարդալու հետ միասին կար-որ է համարվում Քրիստոսի ցուցումի կատարումը հացը կտրելու – գինի խմելու մասին ի հիշատակ նրա զոհաբերության: «Այս արեք իմ հիշատակի համար», ասաց Հիսուսը /Ղուկ. ԻԲ:19/: Ղա նրա ցանկությունն էր, որպեսզի նրա հետ-որդները կանոնավորապես կատարել այդ միսջ- նրա երկրորդ գալուստը, երբ Հիսուսը նորից կկիսի իր հացն ու գինին մեզ հետ /Ա. Կորն. ԺԱ:26; Ղուկ. ԻԲ:16-18/:

Հացը Քրիստոսի մարմինն է, որը խաչեցին, իսկ գինին՝ նրա արյունը /Ա. Կորն. ԺԱ:23-27/: Վաղ հավատացյալները սովորաբար կատարում էին այդ պատգամը /Գործք Բ:42-46/, այդ անելով, ըստ եր-ույթին, շաբաթը մեկ անգամ /Գործք. Ի:7/: Եթե մենք իրոք սիրում ենք Քրիստոսին, մենք կկատարենք նրա պատվիրանները: Եթե ունենք ճշմարիտ անձնական վերաբերմունք նրա նկատմամբ, ապա մենք կձգտենք հիշել նրա զոհաբերությունը, ինչպես նա է խնդրել, – դրանով ինքներս մեզ կխրախուսենք հիշելով այն մեծ

փրկության մասին, որին նա հասել է: Խաչի վրա մեր Տիրոջ կրած տառապանքների համեմատությամբ մեր բնական դժվարությունները դառնում են չնչին:

Հացի կտրելը, հիմնականում հիշատակի արարողություն է; դրա արդյունքում ոչինչ մոգական չի կատարվում: Դա համարժեք է Չատիկին ըստ Մովսեսի օրենքի /Ղուկ. ԻԲ: 15; Ա. Կորն. Ե: 7, 8/: Դա միջոց էր հիշելու համար Եգիպտոսից ազատագրումը, որը կատարեց Աստված Մովսեսի միջնորդությամբ Կարմիր ծովում: Հացը կտրելու արարողությունը մեզ տանում է Քրիստոսի միջոցով մեղքից փրկվելուն, որը հնարավորին չափով կատարվեց խաչի վրա, – որի հետ մենք բարեկամացել ենք մկրտությամբ: Հետ-աբար, այդ պատվիրանի կատարումը պետք է լինի այնպիսին, որ մենք բնականորեն ցանկանանք անել:

Հացի – գինու օրինակով ֆիզիկական գործողությունը Քրիստոսի սիրո դրս-որումն է մեր հանդեպ, – իրոք, բոլոր իրադարձությունները մեր փրկության վերաբերյալ նորից դառնում են այնքան իրական: Շաբաթը մեկ անգամ հացի կտրելը, հետ-աբար, հոգ-որ վիճակի առողջության նշան է: Եթե դա չի կարող կատարվել հավատակալից ընկերների, ապա այն պետք է կատարվի միայնության մեջ: Ոչ մի հարգելի պատճառ չպետք է լինի այդ պատվիրանը չկատարելու համար: Մենք բոլոր ճիգերը պետք է գործադրենք, որպեսզի ապահովենք հացի – գինու ներկայությունը մեր արարողության ժամանակ, չնայած, բացառիկ դեպքերում, նույնիսկ այդ մթերքների բացակայությունը չպետք է մեզ խանգարի հիշել Քրիստոսի մասին, այդ անելով, որքանով որ հարկավոր է, սովորական ուղիով: Հիսուսը գինի էր խմում, խաղողի պտուղից» /Ղուկ. ԻԲ: 18/, – մենք, ուստի, պետք է խմենք կարմիր խաղողի գինի:

Ընդունել Քրիստոսի տառապանքների – զոհաբերության խորհրդանիշերը՝ բարձրագույն պատիվ է, որը տղամարդը կամ կինը կարող են ունենալ: Ճաշակել դրանք անբավարար ուշադրությամբ, նշանակում է լինել աստվածանարգության

եզրին, քանզի «քանի անգամ որ այս հացն ուտեք – այս բաժակը խմեք, պատմեցե՛ք Տիրոջ մահը, մինչ– որ նա գա... Ուրեմն ով որ այս հացն ուտի կամ խմի Տիրոջ բաժակն անարժանորեն, պարտական պիտի լինի Տիրոջ մարմնին – արյանը /Ա. Կորն. ԺԱ:26, 27/: Հացը կտրելու համար անհրաժեշտ է ընտրել այնպիսի տեղ – ժամանակ, որի դեպքում բացառվի մտավոր վերացումը աստվածաճառայությունից: Այն կարող է կատարվել վաղ առավոտյան կամ ուշ երեկոյան ննջասենյակում կամ ուրիշ հարմար տեղում: Մենք գիտենք խորհուրդը. «Թող մարդ ինքն իրեն փորձի – ապա ուտի այդ հացից ու խմի այդ բաժակից» /Ա. Կորն. ԺԱ:28/: Այդ պատճառով մենք պետք է կենտրոնացնենք մեր մտքերը Քրիստոսի զոհի վրա, հնարավոր է, Ավետարանի էջերը ընթերցելով, որտեղ ասվում է նրա խաչելիության մասին: Այդ անելով պատշաճ կերպով, մենք անխուսափելիորեն մեր խիղճը վստահում ենք Քրիստոսին:

Հացը կտրելու արարողության համապատասխան կարգը կարող է լինել այսպիսին.

1. Աղոթք՝ Աստծո օրհնանքի խնդրանք; մեր աչքերի բացումը Նրա Խոսքի հանդեպ; ուրիշ հավատացյալների կարիքների մասին հիշեցում; շնորհակալություն Նրա սիրո – մեր կյանքի մասին աղոթքի համար:
2. Միասին Աստվածաշնչի ընթերցում, «Ավետարանի ուղեկից»-ի օգնությամբ:
3. Ստորումներ դասերի վերաբերյալ, որ առնում ենք Աստվածաշնչից, կամ քարոզների ընթերցում, որոնք տանում են մեր արարողության նպատակին՝ Քրիստոսի մասին հիշողություններին:
4. Ա. Կորն. ԺԱ:23-29 հատվածների ընթերցում:

5. Լռության թուպներ՝ ճանաչել ինքդ քեզ:
6. Աղոթք հացի մասին:
7. Հացի կտրելը – նրա փոքր կտորի ճաշակում:
8. Աղոթք գինու մասին:
9. Գինու համը տեսնել:
10. Եզրափակիչ աղոթք:

Ողջ ժամերգությունը պետք է տ–ի մեկ ժամից ոչ ավել:

11.4. Ամուսնություն

Այս բաժինը մենք կսկսենք դիտարկելով այն մարդկանց վիճակը, ովքեր մինչ մկրտման պահը ամուսնացած չեն եղել: 5.3 բաժնում մենք ասել ենք, որ պետք է ամուսնանալ մկրտումից հետո: Աստվածաշնչում կան մի շարք տեղեր, որտեղ ասվում է այն մասին, որ Քրիստոսը, ինչպես Նա–Պողոսը – մյուս առաքյալները չամուսնացած մարդկանց հրավիրում էին մտածելու – որոշելու, չմնան արդյոք մենակ, որպեսզի լրիվությամբ նվիրվեն Տիրոջ գործին /Ա. Կորն. Է:7-9, 32, 38; Բ. Տիմ. Բ:4; Սթ. ԺԹ:11, 12, 29; Ժող. Թ:9/: «Եթե ամուսնանաս, մեղք չես գործի» /Ա. Կորն. Է:28/: Առաքյալներից շատերը ամուսնացած էին /Ա. Կորն. Թ:5/; –, ըստ Աստվածային մտահղացման, ամուսնությունը շատ ֆիզիկական – հոգ–որ առավելություններ ունի: «Ամուսնությունը ըստ ամենայնի պատվական է – անկողինը սուրբ» /Եբր. ԺԳ:4/: «Լավ չէ որ մարդը մենակ լինի» /Ծն. Բ:18/, եթե միայն Նա բարձր մակարդակի վրա չիրագործի հոգ–որ գործերի իր պարտականությունները – այդ պատճառով Աստված ամուսնություն հիմնադրեց: «Ով բարի

Կին է գտել, նա գտել է բարիք – Տիրոջիցը շնորհ ստացել...
 իմաստուն կինը՝ Տիրոջից է» /Առակ. ԺԸ:23, ԺԹ:14/: Տվյալ
 հարցի վերաբերյալ ընդհանուր եզրահանգումը տրվում է Ա.
 Կորն. Է:1, 2-ում. «Լավ է տղամարդու համար կին արարածին
 չմերձենալ: Բայց, չպռնկանալու համար, յուրաքանչյուր
 մարդ թող իր կինը ունենա» /համ. հատ. 9/:

Այս հատվածների իմաստը նրանում է, որ ամուսնությունից
 դուրս սեռական գայթակղությունների խրախուսումը
 շնություն է: Շնության դեմ նախազգուշացումները,
 ամուսնական հավատարմության խախտումը – ցանկացած
 տեսակի այլասերություններ հաճախ են հանդիպում Նոր
 Կտակարանում, համարյա ամեն մի ուղերձ պարունակում է
 այդ: Ստոր- տրվում է միայն մի որոշ մասի հակիրճ ցուցակ.
 Գործք ԺԵ:20; Յոն. Ա:29; Ա. Կորն. 2:9-18; 10:8; Բ. Կորն.
 ԺԲ:21; Գաղ. Ե:19; Եփ. Ե:3; Կող. Գ:5; Ա. Թես. Դ:3; Յուդա Ե;
 Պետ. Դ:3; հայտ. Բ:21:

Վերն ասվածի լույսի ներքո, հստակ արտահայտված Տիրոջ
 կամքի փորձելը լուրջ գործ է: Եթե Աստված դեռ-ս կարող է
 ներել րոպեական թուլության մեղքերը, որոնց համար մարդ
 հետագայում զոջում է /օրինակ Դավիթի շնությունը
 Բերսաբեյի հետ/, ապա կյանքը, որի ընթացքում շնությունը
 կատարվում է կանոնավորապես, արժանի է
 դատապարտության: Պողոսը ոչ մեկ անգամ ասել է.
 «Շնությունը, պռնկություն... – սրանց նմաններ. սկզբից իսկ
 ասում եմ ձեզ, ինչպես որ առաջուց էլ ասում էի /մինչ
 Դատաստանի օրը/, թե նրանք, որ այսպիսի բաներ են
 գործում, Աստծո թագավորությունը չեն ժառանգելու» /Գաղ.
 Ե:19, 21/, ուստի, «փախե՛ք պռնկությունից /համ. Բ. Տիմ.
 Բ:22/: ինչ մեղք էլ որ գործի մարդ, այդ իր մարմնից դուրս է.
 իսկ ով պռնկանում է, իր մարմնի դեմ է մեղք գործում» /Ա.
 Կորն. 2:18, 19/:

Ամբողջ աշխարհում համարյա սովորական է դառնում, երբ
 երիտասարդ զույգերը մինչ- ամուսնանալը ապրում են
 սեռական կյանքով: «Ամուսնություն ըստ ընդհանուր օրենքի»

տերմինի կիրառումը այդ արարքը արդարացնելու համար միանգամայն ճիշտ է: Հավատացյալի համար ամուսնությունը պետք է լինի այնպիսին, որպեսզի այն ամբողջությամբ համապատասխանի Աստծո որոշմանը: Մենք չենք կարող թույլ տալ, որպեսզի ամուսնության որոշումը, որը կատարվում է ի հաճույս մարմնական պահանջների, չնայած որ ընդունված է ամբողջ աշխարհում, գերակշռի ամուսնության մասին Աստծո հաստատմանը, ի վերջո ամուսնությունը հաստատել է Աստված, այլ ոչ թե մարդը: Աստվածաշնչին համապատասխան, ամուսնությունն իր մեջ ներառում է համենայն դեպս երեք պահ.

1. Ինչ-որ տեսակի ամուսնական արարողություն, թեկուզ հասարակ: Բոսի ամուսնության նկարագրությունը Հռութի հետ /Հռութ 9:9-13/ ցույց է տալիս, որ ամուսնությունը ոչ միայն ազգակցություն է, ուր ոտք են դնում մարդիկ, պետք է լինի հատուկ պահ, երբ մարդ ամբողջությամբ մտնում է ամուսնության մեջ: Քրիստոսը համեմատվում է փեսացուի հետ, իսկ հավատացյալները՝ հարսնացուի, որի հետ իր երկրորդ գալստյանը նա պետք է «ամուսնանա»: Որպեսզի տոնենք այդ իրադարձությունը, այդժամ կլինի «գառի հարսանիքի ընթրիքը» /Հայտ. ԺԹ:7-9/: Ազգակցական հարաբերությունները ամուսնու – կնոջ միջ– ծառայում է այն հարաբերությունների նախատիպը, որը կլինեն Քրիստոսի – հավատացյալների միջ– /Եփ. Ե:25-30/: Ինչպիսին կլինի ամուսնանալու ժամանակ նրանց միջ– որոշակի պահը, այդպես – պետք է լինի ամուսնացող հավատացյալների միջ– հարսանիքը, դրանով մարմնավորելով մեր – Քրիստոսի կապը Դատաստանի օրը:

2. Աստծո ամուսնությունը Իսրայելի հետ իր մեջ ներառում էր մուտքը փախադարձ հոգ–որ համաձայնության մեջ, փախադարձ վստահությունը /Եզեկ. Ժ2:8/, – դա –ս պետք է լինի հավատացյալների ամուսնության ժամանակ բնորոշ պահ:

3. Սեռական հարաբերությունները անհրաժեշտ են ամուսնական հարաբերությունները իրագործելու համար /Օրինաց. ԻԱ:13; Մ. ԻԴ:17; ԻԹ:21; Ա. Թագ. ԺԱ:2/: Դրա հետ–անքով, Ա. Կորն. 2-15-ում բացատրվում է, թե ինչու են

արտամուսնական սեռական հարաբերությունները արատավոր: Ֆիզիկական իմաստով սեռական հարաբերությունները նշանակում է, ինչպես Աստված միացրեց ամուսնական զույգերին /Ծն. Բ:24/: Ուստի, միավորումը «մեկ մարմնի» ժամանակավոր ազգակցության ժամանակ նշանակում է անարգանք մարմնի նկատմամբ, որը մեզ տվել է Աստված: Նա ստեղծեց նրանց, որպեսզի իրագործի ամուսնական հարաբերությունները ֆիզիկական իմաստով այն, ինչը նա միավորեց ամուսնության մեջ:

Դրանից հետո-ում է, որ զույգերը, որ «ապրում են միասին» մինչ- հարսանիքը, փաստացի ապրում են մեղքի մեջ: Եթե նրանք ձ-ակերպեն իրենց հարաբերությունները օրինական ճանապարհով կամ չբաժանվեն միմյանցից՝ նրանց մկրտման մասին խոսք անգամ լինել չի կարող:

Դժվարություններ ծագում են զարգացող աշխարհի որոշ երկրների սովորություններում, որտեղ չկա հարսանեական արարողության հասկացություն կամ սովորական մարդկանց համար պայմանագրի կնքում: Չույզը կարող է մի շարք տարիների ընթացքում ապրել առանց իրենց կապի պաշտոնական – ծիսական ձ-ակերպման, համարելով իրենց ամուսնացած: Այս տողերը գրողի խորհուրդն է նման դեպքերում հավատացյալը, որը կատարում է մկրտությունը, պետք է թեկնածուի բացատրի մկրտման համար դրությունը – համոզի նրան իր զույգի հետ ստորագրել ինչ-որ ամուսնական համաձայնագիր: Հետո այդ փաստաթուղթը պետք է անհապաղորեն վավերացվի համապատասխան քաղաքացիական մարմնում:

